



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

225

ԿՈՒՆԵԿՏԻՎ ՈՒՂԻ



ՀԱՅԵՐԵՆԻ ԶԵՌՆԱՐԿ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեց՝ Տ. ՎԱՆՅԱՆ

491.542

3 JAN 2018

ՀԱՅԿԼԵԿՏԻՎ ՈՒՂԻ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

Տ. ՎԱՆՔԱՆ

ԿՈՒԵԿՏԻՎ ՈՒՂԻ

ՀԱՅԵՐԵՆԻ ՁԵՌՆԱՐԿ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(ՅԵՐԿՐՐԻ ՎԵՐԵՇՆԱԿԱԾ ՀՐԵՏԱՐԵԿՈՒԹՅՈՒՆ)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՊԵՐԵՎԱՆ 1931

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Ձեռնարկելով «Կոլեկտիվ ուղի» դասագրքի՝ կազմությանը, մենք նպատակ ենք ունեցել տալ գյուղական հանրակրթարանների համար հայերեն լեզվի մի ախպիսի գիրք, վոր բացի լեզվի ուսուցումից բավարարեր նաև օտվորողների՝ դպրոցից դուրս տարվող ընթերցանության պահանջները և նպաստեր նրանց ինքնազարգացման աշխատանքներին: Այս իմաստով «Կոլեկտիվ ուղի»-ն հանդիսանում է մեզանում առաջին քայլը դեպի դասագիրք— ձեռնարկի ստեղծումը, վոր մեր պայմաններում լրիվ իրագործելը անհնարին է թղթի շարունակվող կրիզիսի, մեր կյանքի տեմպերի արագ փոփոխությունների և մի շարք այլ պատճառների հետևանքով:

«Կոլեկտիվ ուղի»-ն հրատարակվում է համաձայն 1930—31 ուսումնական տարվա համար կազմված և համապատասխան մարմինների կողմից ընդունված ծրագրի նախագծի:

Ծրագրի հիմքում ընդունելով արդիականությունը—գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, ինդուստրացման լոգունդի իրագործումը հնգամյա պլանի միջոցով, գյուղի և քաղաքի միջև հաստատվող շաղկապի նոր ձևերը, Անդրկովկասյան Ֆեդերացիայի հետագա զարգացումը և այլ գործոնները,—մենք աշխատում ենք գիտել պատմության զարգացման փոնի վրա, միաժամանակ զեղարվեստական նյութերի միջոցով կատարելով մեր լերկվա և աչտրվա կյանքի հակադրությունը:

Մեր կարծիքով ծրագրային այս սկզբունքի ընդունումը, մեծապես կընպաստի հասակավորների աշխարհայացքի կազմակերպմանը, հնարավորություն ընձեռելով նրանց ավելի հեշտության մեջ ըմբռնել պատմական զարգացման ընթացքը, ավելի պարզ ու վորոշակի տեսնել ու հասկանալ ստեղծվող նոր և դառնալ այդ նորի ամենորչա ակտիվ շինարարը:

Ամբողջ ծրագիրը կազմված է 4 հիմնական բաժիններից, վորոնք իրենց հերթին բաժանված են յեմքամասերի: Նյութերի լեքթամասերի նման դասումը նպատակ ունի՝

- ա) Վորոշակի ու շեշտված դարձնել ծրագրային տվյալ մոմենտը.
- բ) Պահպանել ամբողջ ծրագրի հաջորդականությունն իր ամբողջության մեջ.
- գ) Նպաստել հարակից առարկաների ավելի հաջող կոմպլեքսացմանը.
- դ) Պահպանել հանրակրթարանների չերկու վարիանտների ծրագրային միասնականությունը, փոխելով միայն ծանրություն կետերն ու հարարերությունը:

Վերջին բաժինը, վոր կրում է «ՅՈՒՆ Միությունը և կապիտալիստա-

Հրատ. № 1582

Քրատեպլար № 6309 (բ)

Պատվեր № 1997

Ցիբաթ 50, 199

Պետական գրադարան, Ֆերևան



111-2452 gr

կան յերկրներ» վերադառնալու են,— ունի 5 յենթամաս և համեմատաբար ավելի սովոր ծավալ:

Այստեղ մենք աշխատել ենք մի կողմից սովորողին ծանոթացնել խորհրդային իշխանության գոյության. խորհրդային միության ծագման և զարգացման ընթացքի հետ, մյուս կողմից, նրան, պատմական այդ խելով կապել ժամանակակից իրադարձությունների հետ, ի վերջո մեխելով նրա ուշադրությունն ամբողջ աշխարհում հանուն խորհրդային իշխանության տարվող պայքարի խնդիրների վրա:

Բաժնի վերջին՝ «Հեղափոխական տոներ և կազմակերպություններ» յենթամասը կազմված է համարյա տեղեկատվական բնույթի հոդվածներով: Վերջ տեղեկատվական բնույթի հոդվածներ կան նաև մյուս բաժիններում: Ցեղեկատվական այս միում մի պահպանումն անխուսափելի յե և անհրաժեշտ մասնավորապես գյուղական հանրակրթության համար, յիժն մենք աչքի առաջ ունենանք այն պայմանները, վերջին մեջ աշխատում են թե սովորողը ու թե սովորեցնողը՝ անհրաժեշտ ձևերով նրանք բացակայություն, թերթերի ուլ ստացվելը, և այլն:

Յուրաքանչյուր բաժնի և յենթամասի վերաբերյալ պահանջվող պակասը, վորն անխուսափելի յե մասնավաղ կուկտիվացման բաժնի համար, (վորի գեղարվեստական վերաբաղեցությունը նոր-նոր և միայն սաղմնավորվում) կարող է դասատուն լրացնել աշխատանքի մոմենտին հարմար նորանոր ավանդներով:

Բառարանի գործածությունը աշխատել ենք հասցնել մինիմումի, փոխաբերելով դժվար, անծանոթ բառերն ավելի ծանոթով հենց հոդվածներում: Ծավալի սահմանափակությունը ղրկել է մեզ հնարավորությունից առաջին 2 բաժիններում ավելի բազմակողմանի լուսարանելու հարևան խորհրդային հանրապետությունների սոցիալիստական շինարարությունը: Այստեղ ևս տրված է ըստ կարելույն անհրաժեշտ մինիմումը:

Չնայած աշխատել ենք այս հրատարակությունն անթերի մշակել տխուրամենայնիվ անշուշտ կլինեն բացեր, վորոնք զրքի գործածության ընթացքում ավելի ցայտուն հանդես կգան: Ուստի խնդրում ենք դասավորք գործածողներին՝ իրենց կոնկրետ դիտողություններն ու առաջարկներն ուղարկեն Բաղրուզլիվարչության, վորպեսզի հետագա վերահրատարակությունը կատարվի համաձայն տրված առաջարկների ու դիտողությունների:

Մենք ավելորդ համարեցինք այստեղ տալ նաև զրքի գործածության համար անհրաժեշտ մեթոդական ցուցմունքներ, աչքի առաջ ունենալով վոր աչք նպատակով հանձնարարված է և շատ շուտով լույս կտեսնի հանրակրթականների համար հատուկ մեթոդական ձեռնարկ:

ԿԱԶՄԱՂ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

«Կուկտիվ ուղի» դասագրքի յերկրորդ հրատարակության վերամշակումը կատարված է առաջին հրատարակության համար սահմանված ծրագրի և մեթոդական հիմունքների համաձայն, վորն Լուսավորման ուսումնական մեթոդական սեկտորի կողմից հիմնականում լեղունված է նաև 1931-32 ուսումնական տարեշրջանի համար և առաջադրված էր մեզ ի գեղավարություն:

Յերկրորդ վերահրատարակության մեջ ավելի քան ութեղացված է աղիակաճություն վերաբերյալ բաժինը:

Բացի յեղած մի շարք նյութերի վերամշակումից, ավելացված են նոր հոդվածներ, վորոնք վերաբերվում են կուկտիվացման աշխատանքների հետագա ծավալման ու խորացմանը:

«Ինդուստրացում, գյուղի յիվ փաղափ դաժինք» բաժնում գեղեղված է ևս մի նոր յենթամաս—բալետիկյան փեյպերով լողունգով, ըստ կարելույն գեղարվեստական նյութերով վերհանելու համար մեր վերցրած տեմպերը, մասնատների կողմից հայտնաբերված ենտուգիաղմն և վիթխարի թափն ու անձնագոհությունը, վարոնք գերադանցել և գերադանցում են բոլոր տվյալները: Այս կապակցությամբ լայնացված է նաև «Կուկտուա յիվ կենցաղ» բաժինը:

Միաժամանակ մեզ առաջադրված էր մաս յերկու և կես մասով կրճատել զրքի ծավալը, վոր և աշխատել ենք կատարել հատկապես ի հաշիվ մեր կյանքի պատմական դարգացման ընթացքը պատկերող բաժնի հոդվածների, յիստեպիով հիմնական բաժիններից և յենթամասերից վոչ մեկը:

Այս հրատարակության մեջ ուղղված է սրբագրված են նաև այն բոլոր աղագրական սխալներն ու անկանոնությունները, վորոնք մեզինց անկախ թույլ է տրված առաջին հրատարակության տպագրության մեջ: Սակայն և այնպես շատ բաժիններ այս յսկ պատճառով հնարավոր չի յեղել ձուլացներ:

Այս ձեռնարկով պարագրող բոլոր դասատուներին հանձնարարվում է միաժամանակ ձեռք բերել հանրակրթականների լեզվի ուսուցման համար կազմված է հրատարակված մեթոդական ուղեցույցը:



ԱՌՍԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԿՈՆԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Ա. ՆՈՐ ԿՅՈՆՔ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐ

1. ՏԵՄՊԻ ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԸ

Կուսակցություն, լեռնահանքի շինություն: Ճակատին ելեկտրական լույսերով զրկած:

«Միությունների տուն»:

Ելեկտրական լույսերից հյուսված մուրճ ու մանգաղ, և հնգաթև աստղ: Դրանց գրկում մուրճն ուսին, պինդ բազուկներով, կեպին ծուռ դրած մի մարդու նկար:

Ցեղանդուն մի լեռնափորի նկար է դա, փորն ախոր ոտացել է «տեմպի բալլերի» անունը: Նկարի վերև, լույսերով զրկած փայլում է՝

«Խ. Միության հարվածային բրիգադների համագումար»: Հետո լեռում են լողուններ, պլակատներ, փորոնց մեջ տեմպի բալլերի խոսքը: զրկած է «Հարվածայինները պահանջում են հրագամյակը կատարել չորս տարում»:

Հնգարձակ հրապարակներով և խաչաձև փողոցներով տառնյակ հազարավոր մարդիկ են շարժվում: Նրանք դալիս են, բանվոր, կոլխոզնիկ, ինժեներ, տեխնիկ, դիրեկտոր, գործակալ, ճարտարագետ, տնտեսագետ, կառուցող, ուսանող, աշակերտ, կարմիր բանակային, նավաստի, բժիշկ, պիոներ, կոմսոմոր:

Բոլորն էլ հասում են դեպի «Միությունների տուն»:

Այնպէս են Դոնաւար, Ուրալը, Կերէն, Գրադնի, Լենին գրադը
Պարկովը, Ստալինգրադը, Թուրքմենստանը, Անդրկովկասը, Սիբիրը,
բոլորը, բոլորը, վոր մեկն ապեւ: Ամենքը բերել են իրենց ուժն ու
կամքը. մրցման են կանչում իրար:

Բոլորից առաջինը լետ են, ով կհասնի ինձ: Ընթացիկ տարվա
ծրագիրն իրագործել ու 210 տրակտոր ել գեռալիլի բաց են թողել
հենց այնպէս՝ դեպի սոցիալիզմը զնացող գյուղին նվեր:

Այսպէս կանչում են իրար, իրարից առաջ անցնում. հիմնամյա
բայշէկիկը տասնութամյա կոմյերիտից, կոմունարը կոլխոզնիկին:
Այդպէս են նրանք՝ հարվածալիները:

Հանվածալիներ բոլորովին նոր մարդ են, բոլորովին այլ մտա-
ցում ունի դեպի ընկերը, կինը, յերեխան, իր գործը. նա նոր կո-
մունիստական մարդու ձևակերպող տիպարն է:

Յերեք օր անընդհատ շարժում, կամքի ցուցադրում: Խոսելու
լեն դուրս լեկել ավելի քան լերկու հարյուր հոգի:

Այժմ վերջին նիստն է յեզրակացութեանը:

Գումարը պետք է տար

Կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ խոսա-
սում ենք հնգամյակը կատարել չորս տարում:

Այս վճռական տարում իրագործել կուսակցութեան վարչաւոր
սոցիալիզմի հիմքի կառուցման ավարտման մասին:

Դանի՛ճը գործում է: Լավում է ինտերնացիոնալ Իոյ պատից
վառ ժպիտը դեմքին նայում է նա, նոր կյանքի առաջին կառուցո-
ղը, բանվոր դասի մեծագույն ուսուցիչը—Լենինը:

— Ո՛վքեր են նոր կյանքի կառուցողները, լինով են նրանք բնորոշվում:

— Ում ղեկավարութեամբ է կատարվում մեր լերկրի վերակառուցումը և
ինչ պայմաններում:

— Ի՞նչու յի ալը կապված Լենինի անվան հետ:

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միտ, խոտ, բառ

Առեկիս կամ գրելիս մենք մեր մտքերն արահայտում ենք բառերով:
Բառը յեթի լինում է մի վանկից կոչվում է միավանկ, երեքով՝ տուն, հարկ,
տեմպ:

Բառը յեթի լինում է յերկու կամ ավելի վանկերից, կոչվում է բաղա-
վանկ: Որինակ լույս-տեր, լուսա-գարդ:

«Տեմպի բաղաձայնները» հոգվածից արատաւրեր միավանկ, յերկվանկ և
բաղաձայնի բառեր թվով 10-15 երեքով և վանկատաւր:

Բ. ՄԵՐ ԿՅԱՆՔԸ ՅԵՐԵԿ

2. ԴԺԱՐ ՏԱՐԻ

Վարի, գութան ջան, վարի,

շատ և դժար են տարի:

Պապին տարան քրիսվի դուռ,

հարկ են ուզում.—Տուր, հա տուր...

— Կտամ, քրիսվա, փող չունեմ...

— Չունեմ, Շեկոն կտանեմ:

— Աման քրիսվա, քեզ դուրբան,

Շեկոն գնա թող՝ գութան,

դարնան անենք վարուցանք

կալը կալսենք, բերենք, տանք,

Գարունը լետ դառավ ել,

գութան լծվեց—հորովել...

Վարի, գութան ջան, վարի,

գառենք ցորեն ու դարի,

տանենք, ածենք քրիսվի վեշ,

վոր շտանի մեր գումեշ:

— Մեր կյանքի վեր շրջանն է ներկայացված այստեղ,

— Վորո՞նք են ալը շրջանի բնորոշ գծերը:

— Ի՞նչ վիճակումն է ապրել գյուղացին և ի՞նչ հավատ և անեցիկ աղա-
գայի նկատմամբ:

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խոտ, վերջուկեք, գլխատառ

1. Մեր խոսակցութեանը բաժանվում է մասերի, վորոնցից յաւաքան-
չութը կոչվում է խոտ: Կրկնենք: Իմացիր, վոր խոտքը մի ումբողջական
միտք է, վորի արատաստութեանը վերջանալիս ձայնն իջնում է, ու գաղաթ
ենք առնում, իսկ գրելիս վերջակետ (.) գնում:

2. Արատաւրեր հետեւալ հատվածը, հարկավոր տեղում վերջակետ դիր
ու գլխատառով գրիր:

Վարի, գութան ջան, վարի,

շատ և դժար են տարի:

Պապին տարան քրիսվի դուռ,

հարկ են ուզում.—տուր, հա տուր...

— Կտամ քրիսվա, փող չունեմ:

— Չունեմ, Շեկոն կտանեմ—

3. Դրեք մի փաթեթիկ պատմություն

4. Ել յերբ ենք գրում գլխատուով: Ինչպես կգրես քաղաքների, գետերի, հիմնարկների, մեր առաջնորդների անունները, ազգանունները: Դրե՛լիս տալիս բառն ինչպիսի տառով կսկսես

3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՅԵՐԵԿ

Ինչ պատկեր եր ներկայացնում Հայաստանը խորհրդաֆանագման նախորդակին: Դժվար թե՛ ճարվի յերկրագնդի վրա մի անկյուն, վոր իր ծանր և զորեղական վիճակով կարողանար մրցել այն տանջաբանի հետ, վորի անունն եր «Հայաստանի Հանրապետություն»: Արգյունաբերության բացարձակ կործանում: Գյուղատնտեսության կործառում մինչև նախապատերազմյան չափի մեկ քառորդը: Բազմաթիվ պատերազմներից և ազգամիջյան անվերջ ջարդերից ամալացած ու ավերակների վերածված գյուղերի կույտեր: Անգլիական իմպերիալիստների թելադրությամբ սկսված վերջին ավանդույտայի՝ հայտաճկական պատերազմի ահառելի հետևանքներ: Յերկաթուղային հաղորդակցության կազմալուծումը, 50,000-ից ավելի անողնական վորքեր: Մի քանի հարյուր-հազար վոչ մի անտեսություն չունեցող գործազուրկ և նպաստով ապրող գաղթականների բազմություն, Համառարած սով և անվերջ համաճարակներ: Ճարրական իրավունքի և որինապահության լիակատար բացակայություն: Դաշնակցական խմբապետների, կուլակների ու սպեկուլյանտների անսահման իշխանություն և սանձարձակ սխրագործություններ: Պատահական և գիտությունափոր սպանություններ փողոցներում, Թուրքական թագերի և գյուղերի հրկիզում և ալան-թալան:

Այդ բոլորն անմիջապես արդյունք ելին դաշնակցական տիրապետությանը: Դաշնակցությունը հակասած կլինեք իր դասակարգային ելու թյանը, յեթե հրաժարվեք իմպերիալիստական պատերազմի համար թնդանոթի միս մատկարելուց, թուրք և հայ աշխատավորների ջարդերից, անվերջ թալաններից, սակավաթիվ բանվորությանը ծանր կերպով շահագործելուց ու աշխատավոր գյուղացության անասելի կեղեքումից՝ կուլակների ոգային:

Դաշնակցությունը հավատարիմ իր սոցիալական բնությանը, մեր յերկրի աշխատավորությունը մինչև վերջնական բնաջնջումը կտանեք յեթե չստանար նոյեմբերի 29-ի շախմատիչ հարվածը: Հայաստանի բանվորության և աշխատավորության ֆիզիքական գոյության և վերելքի միակ յեղբ խորհրդային իշխանությունն եր:

— Ինչ պատկեր եր ներկայացնում Հայաստանը դաշնակցականների տիրապետության որոք: Նկարագրե՛ր բանվորների, աշխատավոր գյուղացիների վիճակը և նրանց շահագործման պայմանները:

— Փաստորեն իշխանությունը հււսմ ձեռքին եր: Ովքեր ելին մավզերիսաները, ինչ գիտես նրանց մասին:

— Բացատրե՛ր թե ինչու և ինչ նպատակներով եր դաշնակցությունը, պատերազմներ մղում թուրքերի, վրացիների գեմ, բնաջնջում տեղական ազգ, փոքրամասնություններին: Ում շահերից եր բղխում այդ:

— Ինչու նույն ձևով վարվում ելին նաև վրաց մենշևիկներն ու թուրք մուսավթականները հայերի վերաբերմամբ: Դասակարգային ինչ նրմանություն կա հայ դաշնակցականների, վրացի մենշևիկների և Ադրբեջանի մուսաֆաթականների ու նրանց վարած քաղաքականության միջև:

— Յեթե Հայաստանը և նրա հետ նաև Անդրկովկասյան մյուս հանրապետությունները չխորհրդայնանային ինչ պայմաններում կլինեք մեր կյանքը ինչու:

4 ՎԱՆՔԸ՝ ԿԱԼՎԱԾԱՏԵՐ

Թե՛ վորքան ծանր եր մեր դրությունը, — այսպես սկսեց Եջմիճնի վանքի նախկին ճորտ-գյուղացի Բարսեղը, — պատմեմ, լսեք:

— Մեր հողը շատ պակաս եր: Մի քանի ընտանիքով վանքից վերցրելիք 30 որավար հող — կիսարար, վեց տարով, բայց ահա թե ինչ պայմանով:

1. Սերմացու պակաս զգալու դեպքում պետք ե անպայման վանքից տանելիք, իսկ այնտեղ ավելի թանգ եր, քան թե ուրիշ տեղ:

2. Պետք ե մեր վերցրած ամբողջ հողը մշակելիք, այսինքն վարելիք, ցանելիք, փոցխելիք, հնձելիք, խորձերը տանելիք կալը և ծեծելիք:

3. Ծեծելուց հետո վանքի մաս ամբողջ ցորենը պետք ե քաղաք տանելիք, վոր մեզնից հեռու յեր 30 — 35 կիլոմետր:

4. Յերկու նկուղ պետք ե վանքի համար սառցով լցնելիք, նրա ամառվա պետքերի համար:

5. Ամեն տարի վանքի սեփական հողամասում պետք ե յերկու բանջարանոց մշակելիք, այն ե՛ վարելիք, ցանելիք, ամառը հավաքելիք և իր ուղած տեղը տանելիք:

6. Պետք ե նորոգելիք մեծ խճուղուց վանքի կալվածքը տանող ճանապարհը:

7. Մոտակա գետակից առուններ պետք ե հանելիք և հները նորոգելիք:

Տ. Ամեն տարի վաղից ալ Թորավար մարդոգեանքը պետք է
հնձեցինք և խոտը կրեցինք:

Յեկ այսպես որեր, տարիներ ռանչպորը դուռը դառում եր,
դառարկ նստում. մի կողմից քոխվեն, մյուս կողմից սլրխատավը
լրացնում ելին պակաս թողածը: Հոսում եր արյուն քրտինքն աշխա-
տավոր գյուղացուց, իսկ ճուրքը հայրերը՝ սուգում ելին մեր արյու-
նով և որհնում քոխվի կնուտը, պրիստավի սուրը ու դաշնակի մտղերը:

Յեկավ մեծ Հոկանմբերը, որքեց տարավ տերերին, նրանց հետ
եյ սուրը հայրերը կուչ չեկան, դարան մտան, փորձ արին ուրիշ
ճամբով մոլորեցնել աշխատավոր խալխին: Բայց ել վոր որվա քյա-
սիրն ու առնչպարն է, վոր խորհրդային տրեվի տակ թուղ տա
իրեն շահագործեն:

Մեր գյուղը հիմա ել են չի:

- Ի՞նչ դեր է կատարել Եղմիածինն անցյալում:
- Ում շահերն է պաշտպանում լեկեղեցին և հողվորականությունը:
- Սորհ. իշխանությունը Բնչպես և կալում կրոնի գեմ:

ՈՐԱՆՋԻԱ

1

Որանջիայի ձորակում ամեն դարնան մասրիներ են ծողկում,
բացվում են վայրի վարդերը՝ դեղին, սպիտակ: Յերբ դարուն է
լինում և առքանում են Որանջիայի քաղերը, բնից դուրս են
ծլկում խեղները, փորի մաշիլը դեղին, պառկում են առք քաղերի
վրա, լեզունքը ներս ու դուրս անում:

Այն ժամանակ, յերբ շեն եր Մանասի խրճիթը, Որանջիայի
ձորակում մասրիներ չկային, տան պատերի վրայով լեկչես խեղ-
ները չեկին վազվում, վայրի վարդերի տեղ բուսանում վարունգն
եր ծաղկում:

Մի բարակ արահետ Որանջիայի ձորակը միացնում եր գյուղի
հետ: Այժմ ալ արահետն ել չկա:

— Մանաս, ինչո՞ւ տունդ Որանջիայում չինեցիր, չգիտեիր,
վոր Դավիթնեց Առաքելն ել աչք ունեք դրած ձորակին, աք ձյունն
ավելի շատ և հալվում և ձյունի տակից կանաչը ծլում:

Դավիթնեց Առաքելը, լեզան կաշվից տրեխները հողին, մի ա-
ւափոտ աչքի տակով նայեց Որանջիայի ձորակին, ուր նախրից լեռ-
մապատ լեռիկու հորթ ելին տրածում, և մտքում դրեց ձորակում
ամորթ կառուցել:

Իսկ յերկու շաբաթ անց Որանջիայում Մանասն եր քար ու
կիր թափեր, վորքերը մինչև ծնկները վեր քաշած ցեխ եր շինում,
ուստան ել տաշած քարերն եր շարում:

Դավիթնեց Առաքելն ել մտքում պահեց:

2

Որեր անցան: Դավիթնեց Առաքելը հասավ իր մուրադին՝ դառ-
նալով գյուղի քոխվին:

Մանասը յերբեմն միտք եր անում, թե Առաքելը վոխը հանե-
լու համար գնաց տանուտեր յեղավ: Մաածում եր, բայց մոքինը
վոչ-վոքի չեր ասում:

Իսկ յեթե ազգ ու բարեկամ ելի ասում ելին:

— Մանաս, տանալ արա, թրի սուր ժամանակն է, — Մանասը
փոփախը գետնով տալ չեր ուզում, ելի իր ասածն եր կրկ ում:

Բայց Առաքելը չեր ել ցույց տալիս թե ինքը հաշիվ ունի Մա-
նասի հետ: Այն որից, յերբ տանուտերի շղթան վզովն անցկացրեց,
պղնձե կնիքն ել գրպանը դրեց, Առաքելն ալ որից ձեռնում եր
աֆսպես, վոր իբր թե Մանասին չի յեկ անունում:

— Մանաս, գնորթուն կաց, Առաքելը քեզ նեղն է գցելու:

...Յերբ լուր չեկավ, թե քաղաքներում դորժադուլ կա, հեղա-
փոխություն և ընկել, Առաքելն ականչները խլշեց: Նույն գիշեր
Առաքելի ձիու սմբակների տակից կայծեր թռան: Պրիստավը հու-
ռադրեց նրան:

Ձեր գործին կացեք, ժողովուրդ, տարին խառն ա, չլսեմ-չի-
մանամ, թե լոթի-փոթի մարդիկ են գալիս, գիշերով թաղուն ժո-
ղով անում:

Իր շվաքից խրանեց, թե իրոք վտանգ կար գյուղում՝ սակայն
մի շաբաթ հետո Առաքելը նորից գնաց պրիստավի մոտ:

— Պրիստավն ապրած կենա, գյուղումն ել են յերկում խառնա-
կիշ մարդիկ: Մի տասը հատ դազախ թնդ հետա գան, գյուղում յե-
րեան մի անգամ, ժողովուրդը զարգանդի:

Պրիստավը բեխերը վոլորեց բլրը փաթաթեց մատին և ձեռեց
մինչև աչքատակ, ասես աչքն եր ուզում կոխի: Բեխերը վոլորելիս
թշերն ուռ բեց՝ գունա փչողի պես:

Առաքելը կազակների հետ գյուղ չհասած, բոլորն ել դիտեցին,
վոր գալիս են: Այդ յերեկոն շատ տներում ճրագ չվառեցին, շա-
տերը մինչև լուս աչք չփակեցին:

...Ե՛յ, դու, հիմար կազակ, ինչո՞ւ ալքեան շատ խմեցիր Առա-
քելի տանը, արյունդ գլխիդ տվավ, տաքացար: Մանաս, կինդ ալդ
որը յերանի լվացք շատեր և լվացքը չփոխ պատիս, վորովհետև

դիմացի ցանկապատի արանքից Առաքելը կազակին մտառով ցույց
եր տալիս կ'ոչդ, վոր լվացք եր վռուժմ: Կազակ, մոռացած միթե,
վոր քո յերկրում եսպիսի ձորեր չկան, ինչպես Որանջիան: Յան-
կապատի լետե վերջին անգամն ելիք պոռչներդ լիզում:

3

Մինչև այժմ ել գլուղում, յերբ պատմում են Որանջիայի մա-
սին, մի ականատես միշտ ել ավելացնում ե.

— Սարքովի յեր բոլորը. Առաքելը սատանի նեղութիւնն ունեւր...

— Մթնում եր, դռները կապում ելինք, մտնում տները: Լա-
կում ելին զազախները, ընկնում բուշերը: Շաշկով ենքան հավի վիզ
թոցրին...

...Մթնել եր, մեկ ել Որանջիայից մի ծլկթոց յեկաւ, հովարի
ձախ:

— Հենց ենա, ականջա ծլկթոցին եր, մեկ ել մի անգամ կրա-
կեցին: Կրակիցից ձորերը զոնգացին: Որանջիայի ձորակը վառվում
եր, ալավը յերկիս եր հասնում:

Ամբողջ գլուղն եր այդ զիշերը թափվում ձորակը, բայց արդեն
ուշ եր: Մանասի խրճիթը, վորի կտրին դեղեր կային, պատերի
տակ թափված խորճեր, ալովում եր նավթոտ փալասի պես: Յերբ
լուս դեմ կրակը հանգարտեց, խանձված ընկած ելին Մանասի կի-
նը, յերեխան, կազակը:

— Ե՛, ինչ չարչարանք քաշեց գլուղը, քանի մարդու ծեծեցին:
ինչեք չարին... Մանասն տարան, ինչ ասես՝ արին, վիզ չառաւ,
Հենց տաւում եր, թե յես անմեղ եմ, յես չեմ զազախին սպանել:
Հազախներն ել վիշտել ելին, վոր Մանասն ե սպանել: Բա՛, եսպես
քաներ...

Յերբ Մանասին վաղոն դրին դեպի հեռավոր տունդրաները,
նա, իզուր եր կալարանի ժխորի մեջ աչք ածում ծանոթ մեկին:

— Գնաց, ել թե ի՞նչ յեղավ, տեղեկութիւն չկա...

...Հետո քամին սերմեր բերեց, և Մանասի տան ավերակների
վրտ ծաղիկեց մարենին: Ամեն դարնան Որանջիայում ալնքան վար-
դեր են լինում՝ դեղին, սպիտակ:

— Գլուղի վճր շերտին ե պատկանում Մանասը և վճր շերտին Առաքելը:

— Ի՞նչ հասարակական պայմանների ծնունդ են Առաքելները և ու՛մ
շահերի արտահայտիչ:

— Այդ պայմաններում կարճ ելին պաշտպանութիւնն գտնել
Մանասները:

— Յեղիլ են արդիւք ձեր գլուղում Առաքելներ:

— Ի՞նչ պայմաններում միայն հնարավոր զարձակ նրանց վերացումը:

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԼԱՆ

Յուրաքանչյուր պատմվածքում դեպքերը կամ մտքերը հաջորդում են
միմյանց վորոշ հետևողականութեամբ: Այդ պատճառով ինչ պատմվածք կամ
հոգված ել մենք վերցնենք, այն կարելի չե բաժանել մասերի:

Պլան կազմել՝ նշանակում ե տվյալ պատմվածքը կամ հոգվածը բաժա-
նել հիմնական մասերի ու այդ մասերը վերնագրել:

Նման ճանաչ ներքեում գետեղվում ե «Որանջիա» պատմվածքի պլանը:

Պլան վերնագրերով

1. Մանասի տունն Որանջիայի
ձորակում:
2. Առաքելի ու Մանասի կռիվը:
3. Առաքելն իրրե տանուտեր:
4. Առաքելի թշնամութիւնը տա-
նուտեր ժամանակ:
5. Հազախների դալը:
6. Առաքելի վրեժխնդրութիւնը:

Պլան հարցերով

1. Ի՞նչու Մանասը տուն չիւնց
Որանջիայի ձորակում:
2. Ի՞նչու Առաքելն ու Մանասը
կռվեցին իրար հետ:
3. Առաքելն ի՞նչ կերպով տանու-
տեր դարձավ:
4. Ինչպե՞ս եր արտահայտվում:
5. Ի՞նչ պատրվակով Առաքելը
զազախներ բերեց գլուղը:
6. Առաքելն ի՞նչպե՞ս վրեժխնդիր
յեղավ Մանասից:

6. ԻՎԱՆՆԵՆ

(Վրացական կյանքից)

Իվանեն դաշտային աշխատանքի մեջ եր, յերբ կինն անսպա-
սելի կանգնեց նրա առաջ և անհանգստութեամբ ասաց.

— Տանուտերն ուզում ե քեզ տեսնել, պիտաավից թուղթ ե
յեկել:

— Տանուտերը, — զարմացած պատասխանեց Իվանեն և գու-
նաւից, — խելագարվե՛, ես ի՞նչ ե: Ինչո՞ւ համար, վճր մեղքիս համար:

— Բարի որ — անժալիտ կերպով կանգնեց գլուղի տանուտերն
Իվանելի գլխին՝ ձիավոր գզիրների հետ միասին:

— Բարե, հազար բարի, — անբավականութեամբ պատասխանեց
աշխատավորը՝ հազիվ բարձրացնելով իր գլուխը:

— Այս առավոտ կանչել ելի գրասենյակ, ինչո՞ւ չներկայացար:

— Այ մարդ, աշխատանքի այս յեռուն որերում ի՞նչպե՞ս արտա
կիսատ թողած՝ գրասենյակ գալի. չե՞ վոր ինքդ ել գլուղացի յես
և լավ գիտես մենակ աշխատավորի վիճակը:

— Դա իմ գործը չե: Ինչ հրամայված ե, և յես պատաւոր եմ
ճշտութեամբ կատարելու հրամանը:

— Ի՞նչ ես ուզում, ասածդ ի՞նչ ե:

— Հենց այժմ պիտի պրիստավին ներկայացնեմ քեզ, — չոր-չոր պատասխանեց տանուտերը և նայեց զգիրներին։

— Ինչու, վեր հանցանքիս համար, չեմ կարող արդյոք ասել։

— Ինչու համար՝ չգիտեմ։ Շնչալիսիկի գրութիւնն է — «վոր-տեղ պատահեք Իվանե Կեթիլաշիլուն, անմիջապէս ձերբակալեք և ուղարկեք ինձ մաս։

— Այս բոլորը քո բաներն են, Փիթա, ուրիշ վոչ-վոքի, — ասաց վրդովված Իվանեն։

— Ինչպէս, ուրեմն հանցանք ել եմ բարդում վրաս։ Լավ, շատ լավ։ Ինչպէս տեսնում եմ, առանց մարակի դործը գլուխ չի գա։

— Ինչպէս, ուզում ես մարակի՞ բաժին դարձնել ինձ։ Վոչ, այդ քեզ չի հաջողվի. Իվանեն դեռ ամենքան չի ընկել, վեր այդ ուրին հասնի...

— Բավական է ասում եմ։ Յես չեմ լեկել այստեղ խոսք ու դրուց անելու, լեկել եմ ձերբակալելու, ձեռք ու վոտքդ կապելու և պրիստավին ուղարկելու։ Այդպէս և հրամայված։ Յեթե ըմբոստա-նաս և չուզենաս հնազանդվել, տեղն ու տեղը կարող ես սպան-վել — ասված է հրաման կարգադրութիւն մեջ։

— Ինչու, վոր հանցանքիս համար, ավագակ հո չեմ. մամ ինչ վատութիւն եմ արել, ալ մարդ...

— Ուր ինչ վատութիւն ես արել... դու կարծում ես մոռաց-վեց ամբ բոլորը, վոր գլուղացիների ականջները մտած՝ զիշեր-ցե-բեկ հուզում, աղմկում, գոգոտում ելիր ապետ գլուղացիներին իմ գեմ, կառավարութեան դեմ։ Մոռացար, այդ բոլորը։ Հա կարծում ելիր եժան կնտտեր այդ Կարճ կորիք, վեր կաց այս բոլոյեյիս, վեր կաց, — գոռաց տանուտերը և քացով ավեց Իվանեյի կողքին։

— Գոռալդ բավական չե, քացի լեկ ես ապլիս, շան տեղ ես դնում դու ինձ հմ։

— Ձանդ, թե չե մտրակս կիշնի մեջքիդ։

— Ինչպէս, դու համարձակվում ես...

— Այ թե ինչպէս... շարժվեց մարակն ողի մեջ և պինդ իջավ Իվանեյի հոգնած մեջ ին։

— Վա՛յ... — բոռնցրը կրծքին տալով գոռաց զայրացած Իվանեն և ատամները կրճտացնելով առլուծի նման վոտի թռավ։

— Կապեցեք ձեռքերը, — նորից լավեց տանուտերի կատաղած ձախը, և լերկորդ ան ամ մտրակը խաղաց...

Գլ'րներն իրար պնցան...

— Տո քավթառ, ինչ ես ուզում ինձանից, — համբերութիւնից գոլրս գալով գոռաց Իվանեն, արեւի ճառագայթների առիկ փայլ-

փող մանդաղը շողաց ողի մեջ և մի ակնթարթում զետին փռվեց տանուտերը...

Գլ'րները սարսափից դեռ ու դեն փախան տուն վերադարձան...

Իվանեն ուշքի գալով՝ նայեց իր շուրջը. տեսավ ինքնիրեն մե-նակ կանգնած տանուտերի անշնչացած դիակի առաջ...

Մի րոպե կանգ առավ... նայեց հեռուները... վառատ թոքե-րով ազատ շունչ քաշեց և զլուխը կախեց...

Այն սրվանից Իվանեն թողեց դաշան ու մանդաղը և հրացանը ձեռք առնելով՝ գնաց միանալու ըմբոստ վոգիներին, հեղափոխա-կաններին։

— Գլուղական վեր խավի ներկայացուցիչն է Իվանեն.

— Վեր ժամանակաշրջանին է վերաբերում այս հոդվածը. ինչից է այդ յերևում։

— Ինչու ելին ուզում Իվանեյին բանտարկել։ Որե՞նքը վեր դատակար-գին եր պաշտպանում։

— Իվանեյի կատարած սպանութիւնն անհատական, թե՛ դատակարգա-յին պատճառով եր։

— Սպանութիւնից հետո Իվանեն մեր գնաց և ինչու։

մտազբաղ — մտքերի մեջ ընկած.

կիզիչ — այրող.

ժրաջան — ժիւր աշխատասեր.

ծորրակալել — բռնել.

ըմբոստ — անհնազանդ.

7. ՈՒՆՉՊԱՐ

(Աղբբեջանի կյանից)

Ինչ ես ձենդ գցել, աղան, առանչպար։

Մի ձեանա աղբատ, հայդան, առանչպար։

Իսկի ամոթ, արուռ չունես, պատել ես իմ դուռը,

բարի լուսին, թե իրիկուն կապել ես իմ դուռը,

հենց մի գլուխ ֆլագոտում ես, կպել ես իմ դուռը։

Բոլ ա, ինչ ես ուզում, մուրտան, առանչպար,

ձենդ կտրի, զահլա մի տար, առանչպար։

Տարին դատ եր, մի հատ ցորեն չհասավ, իմ ինչ բան

մուկը կերավ, բաղ ու բոստան ցորացավ, իմ ինչ բան

վերան ելար, քո շուխտ աշխատացավ, իմ ինչ բան,

Ինձ ինչ, վոր քո բան, ձախ, առանչպար,

թող քո հոքին դուռ հախ, առանչպար։

Պետութիւնը տուրքը, խարջը տուել ա, մեզ ինչ
պարտատիրք քո լծկանը տարել ա, մեզ ինչ.
կըսէս ընկել, քո տուն տեղը վառվել ա, մեզ ինչ.

Հոգիդ ծախի, բեր իմը տուր, ա՛ն ունչպար,
դե, ունչ ելի, շատ դուս մի տուր, ա՛ն ունչպար:
Իմ ինչ բանը՝ թեկուզ սատկես, ել չկա՛ն աշխատող,
ջահանանմը՝ թե սոված ես, ինչ պետք ա փող ու փող,
ինչ վոր բանի՝ բերես կտաս, աչքդ ել գուրս դա թող.

Ի՛մն ա հողը, ի՛մն ա բերքը, ա՛ն ունչպար,
թե չես ուզում, նստի բերդը, ա՛ն ունչպար:

Քանի կուզես՝ դու աղաչ, յես իմը կտանեմ,
կուզես՝ հալի, կուզես՝ մաշի, յես իմը կտանեմ,
քեզ կքերթեմ, իմ բանը չի, յես իմը կտանեմ.

Ղամշու համը լավ իմացի՛ ա՛ն ունչպար:
Գլխիդ գալը լավ մտածի՛ ա՛ն ունչպար:

Դու ի՛նչ մարդ ես, վոր ջուր խմես, քեզ լակը դեռ շատ ա,
հացը վորն ա, քեզ կըծելու՝ տախտակի դեռ շատ ա,
դու վոր մի հին փալատ դցես քո տակը, շատ ա.

Քո ի՛նչ բանն ա միս ու յեղը, ա՛ն ունչպար:
Հալվան, մսուրն ա քո տեղը, ա՛ն ունչպար:

Բեզգազա յեմ, իմ ապրելը շախով ա, լազաթ ա,
ես աշխարհը իմ քեֆով ա, իմ ջուրը շարբաթ ա,
առա՛ց գինու հաց չեմ ուտի ինչ համար ազաթ ա.

Յես բեզ մարդ եմ ու բեզգալա, ա՛ն ունչպար:
Իմ պատկերը դե տես, եդ ա, ա՛ն ունչպար:

— Ճիշտ ե տրված արդուք գյուղացու ստրկացուցիչ վիճակի պատկերը,
և միջեր են հակադրված իրար:

— Ի՞նչ նմանություն կա Աղբրեջանի գյուղացիության և հայ գյուղա-
ցիության անցյալի վիճակի մեջ:

— Այս վտանավորում իրական դրությունն և հակադրված, թե՛ հեղի-
նակը ցույց ե տվել նաև կովի ուղի:

8. ԱՌԱՋ ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

1

Ռուս գյուղացիները կրել են շատ դառնութիւններ. հողը
նրանք վոտոգել են իրենց արյուն-քրտինքով: Հնուց ի վեր նրանք
յեղել են իշխանների, ազանների, կալվածատերերի, թագավորի, զրա-
մատներերի ճորտերը: Դարերով նրանք աշխատել են վոչ թե իրենց
համար, այլ ոտարների: Գյուղացիների աշխատանքի թալանողները
բազմաթիվ են յեղել: Ինքը՝ աշխատավոր—գյուղացին յերբեք չի
ունեցել իրեն բավարարելու չափ վոչ ուտելիք, վոչ հագնելիք, ապրել
ե ծխոտած խրճիթում, անասունների հետ միասին, աշխատել ե
արշալույսից արշալույս, աֆն ել գիշերներն անընդհատ: Իբրեւ վար-
ձատրութիւն՝ նրան ծեծում ելին ճիպոտով, փայտով, դազանակով,
խարազանով, բանտ ելին գցում, ծաղրի ելին յենթարկում: Գյու-
ղացին մարդ չէր համարվում: Թե ճորտատիրութեան շրջանում և
թե հետո նա միանգամայն ստրուկ եր, մի վողորմելի անասուն:

1861 թվի «ազատութիւնից» հետո կալվածատերերը՝ գյուղա-
գյուղացիների ձրի աշխատանքը ապահովելու համար՝ այնպիսի ար-
գելքներ հնարեցին, վոր գյուղացին իր սեփական կամքով գյուղից
հեռանալ չեր կարող: Յարական շինոջիկները, վոստիկանները,
ժանդարմները մատով ցույց ելին տալին գիրքն ու ասում. «Դու
ուզում ես Սիրիը գնալ ազատ հողերում ապրելու համար. չի կարե-
լի»: — «Ինչո՞ւ չի կարելի»: — «Ինչո՞ւ: Այդպիսի որենք կա. այնտեղ
գնալ չի կարելի»: — «Ինչո՞ւ չի կարելի», — «Ի՞նչ ես գլուխս տանում.
որենքն ե ասում. դե, գնա, կորի նստի ու սպասի, մինչև վոր որենքը
փոխվի».

Գյուղացիական պատվիրակների ջանքերով ձեռք բերված գաղ-
թելու իրավունքը վոչ մի բանի չեր հանգում: Նրանք չգիտեցին, վոր
շինոջիկների և վոստիկանների հետևում կանգնած ելին կալվածատե-
րերը, վորոնք ցարից և նրա նախարարներից պահանջում ելին.
«Այնպիսի որենք հրատարակեցեք, վոր գյուղացիները Ռուսաստանի
կենտրոնից չկարողանան յերբեք տեղ փոխվել դեպի ծայրագոյա-
ների ազատ հողերը: Մեզ եթան բանվորական ձեռքը ես պետք,
յեթե գյուղացիները գնան, մենք ամենքս կբայքալվեք»:

Յեմ այդ որենքը հրատարակվեց: Յեթե գյուղացին ուզում եր
գնալ աշխատանքի, նրան ասում ելին «Իսկ դու տուրքերը ապել ես:
Ինչ վոր պետք ե, տուր, և դու անցագիր կտանաս, իսկ առանց
անցագրի, եդ կձեռքակալենք, վորպես փախստականի, բանտ կձգենք,
այնտեղ կփախցնենք, և յետ կուղարկենք քո հայրենիքը»: Այսպես

եւ լինում եր... Սեանց անցազրի գյուղացին մի քաջ անգամ չեւ կարող անել: Սեանցազրի պատրվակով նրան կատում ելին մի կտոր հողի:

2

Հողի սակավութունն ստիպում է գյուղացուն դիմել աղային վարձու հող ստանալու համար: Շատ գյուղացիներ անասուններն արածացնելու տեղ չունեցին, ստիպված ելին կալվածատերից խնդրել՝ իրենց վարձու արոտատեղեր տա: Նրան ելին դիմում ամեն մի ձողի, ամեն մի կտոր փայտի համար, վորովհետեւ յուրաքանչյուր գյուղի մոտ անտառ չկար:

Իսկ աղան ամեն բանի համար փող եւ պահանջում, մինչև իսկ անտառում սունկ կամ պտուղ հավաքելու համար: Յեթե գյուղացին փող չեւ ունենում, ստիպված եւր աղայի մոտ ձրի աշխատանք կատարել: Գյուղացիներից շատերն աշխատում ելին աղայի հողերում, զրա համար աղայից ստանալով կամ մի կտոր հող եւ կամ թե իրենց կոփերը աղայի արոտատեղերում արածացնելու իրավունք: Բայց այսպիսի աշխատանքով եւ նրանց դրութունը չեւ լավանում, քանի վոր զրանցից ստացված ամբողջ արդյունքը վոչ թե գյուղացիներին եւր մնում, այլ կալվածատիրոջը: Բացի զրանից, տարեց-տարի աճում ելին ամեն տեսակի տուրքեր ու հարկեր:

Այ, որինակի համար, վորքան փող եւր հավաքվում պետական գանձարանում՝ զլիսավորապես գյուղացիներից եւ այդ փողերը հետադարձում ելին վորպես ոռճիկ թաղավորին, նախարարներին, աստիճանավորներին եւ ծախսվում ելին զորքի, վոստիկանության եւ նման բաների վրա:

1886 թվին պետ. գանձարանում հավաքվել եւր 886 միլիոն աւրի, 1891 թվին—մեկ միլիարդից ավելի: 1900 թվին—մեկ ու կես միլիարդից ավելի, 1905 թվին—համարյա չերկու միլիարդ, իսկ 1910 թվին—արդեն յերկուս ու կես միլիարդից ավելի:

Բացի զրանից՝ գյուղացիները վճարեցին նաեւ մի միլիարդ ուրբի, վոր պետական գանձարանը ավել եւր կալվածատերերին 1861 թվին, իբրեւ վարձագին ձորտերի ազատության համար:

Գյուղացիներից ելին զուրա պալիս նաեւ թե գավառական եւ թե ալ ծախսերի համար պահանջված զրամը: Գյուղացիների վրա ելին զրված բնական տուրքերը, ինչպես եւս զորքին կերակրելը, յերբ նրանք տեղավորված ելին լինում գյուղերում, աստիճանավորներին փոխադրական միջոցներ տալը, յերբ նրանք ճամբորդում ելին Ռուսական հեկիչները, վերակացուններն ու պահապաններն ապրում ելին

գյուղացիների հաշվին: Բոլորն եւս մնվում ելին գյուղացու հացով: Յեւ հասկանալի չեւ, վոր վերջը գյուղացուն մնում եւր միայն փշրանքներ: Այսպիսով նա ապրում եւր վորպես տանջված ու անկեղու մի ստրուկ ցարական—ազնվական կալվածատիրական պետության մեջ: Նույնպիսի վատթար եւ ծանր պայմաններումն ելին ապրում նաեւ պրոլետարիատն ու մլուս աշխատավորական տարրերը. նույն մտրակն եւր շատաչում նաեւ քաղաքներում, տուգանքներ, աքսոր Սիբիր, իսկ ձայն բարձրացնելու դեպքումն արդեն՝ հրազեն եւ դնդակ:

Ավելի բարվոր կյանք ունենալու վոչ մի հույս չունեւր:

Մնում եւր միայն մի բան—ապստամբել:

Դա լեւ լեղավ—հեղափոխութունը պայթեց:

— Ինչպես ելին տարում Ռուսաստանում հեղափոխութունից առաջ գյուղացիները:

— Համեմատեցեք ուսս գյուղացիների աչք վիճակը հայ, թուրք եւ վրացի գյուղացիների հետ:

— Ինչ պատճառներից եւ առաջանում աչք վիճակը:

— Ինչ պայմաններում եւ յերբ աղատվեց գյուղացիութունն աչք ծանր դրութունից թե Ռուսաստանում եւ թե մեզ մոտ՝ Անդրկովկասում:

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սյս յենթամասի հոգվածների հիման վրա ի՞նչ կարող ես տեսլ

1. Հայ գյուղացիների տնտեսական, կուլտուրական վիճակի մասին:

2. Թուրք, վրացի եւ ուսս գյուղացիների տնտեսական կուլտուրական վիճակի:

3. Ցարական կառավարության վարած քաղաքականության վերաբերյալ:

4. Ցարական կառավարության վարած քաղաքականության նկատմամբ՝ հատկապես ծայրամասերում:

5. Հոգեվորականության եւ բուրժուազիայի կապի ու դերի մասին:

Պագմիր մի փոքիկ գեկուցում այս խնդիրներից վորեկն մեկի վերաբերյալ լեւ պատմիր խմբումդ կամ գեկուցիր ձեւ իս ընթերցարանում:

Գ. ՍԵՐ ԿՅԱՆՔՆ ԱՏՍՈՐ

9. ԿՈՒՆՈՋԱՅԻՆ ԱՌԱՎՈՏ

Ահա բացվում եւ նա՝ զարունը յերկաթի,

Լուում եւ քաղերի ձայնը նրա,

Յերկիր, մեծ մի կուլտուր, յերկիր հացի, կաթի,

Նոր լույսեր եւս վառել ճամբիդ վրա:

Շողշողում եր արեւը—գարնան արեւը:

Սիրող մոր պես նա իր շողերը սպիտակ մերկ թեփերի նման փռում եր յերկրի վրա: Փայլելում եր ձորերի խորքերում ու դաշտերում: Բլուրների կողերն եր շոշափում, սարերի գագաթները զրկում:

Արեւի տակ շուրն արծաթափայլում եր, հողը հասունանում, ուժ առնում և ուզում եր պատուել իր կուրծքը:

Արվը շողշողում եր իր կրակե սրերով:

Արեւի ուժի տակ ծիրը ճեղքում եր հողը, կոկոնը պատռում եր պատյանը, հասկը հասակ եր քաշում: Իսկ յերեկոն սարերից հով եր քշում դեպի դաշտերը սվավում ելին հասկերը: Հովն որորում եր հասկերի բարակ հասակներն ու արտերում հասկերը յերգում ելին:

Նշխշում ու փրփրում ելին ալսոերը, արտերի շեկ ծավը:

Բայց դուք լսել եք, թե ինչ լուռ ցավ ու տրտնջ է լեղել այդ անշատ արտերի մեջ, նրանց յերգերի մեջ: Յես լսել եմ, Գուցե դուք ել եք լսել, բայց կանգ չեք առել նրանց մոտ, չեք խորացել յերգի խուլ բողբոջի մեջ: Յես հիշում եմ հեռու դաշտերի մոտիկ անցյալի արտերը սահմաններով: Լսում եմ նրանց յերգը կսկծող: Սարերը հով ելին փչում արտերին: Հովը սահում եր առաջին արտի վրայով, ու հասկերը սկսում ելին սվավալ մեղմը յերգեր: Բայց յերբ հասկերի ալիքը հասնում եր յերկրորդ արտի սահմանին, այնտեղ կտրվում եր և յերգն ընդհատվում լացով:

Հասկերը լուռ թեքվում ելին միմյանց կ'ղմ, բխտերը քոփում ու փսփսում ելին՝ թե ինչու յե հովը խռովել...

Հովը հասավ յերկրորդ արտին: Նա այնտեղ նորից որորեց հասկերը, նազելով թեքվեց դեպի առաջ և նախկին յերգը շունչ առավ:

Նորից խշխշացին հասկերը, ծփեցին ցողունները: Բայց յերբ ելի հասավ ուրիշ արտի, այնտեղ, սահմանում յերգը խզվեց ու կտրվեց լալով: Կտրվեց յերգի բողբոջի ձայնը:

Յեվ այդպես շարունակ...

Բայց հովն ելի առաջ եր գնում: Նա հասնում եր գյուղի ծայրը, զիպչում պատերին, ծառերին ու տանիքներին: Այնտեղի արտերի ծայրը: Ել չեք հասնում առաջվա պես: Ցորենի հասկերը այս անգամ սվավում ելին ընդարձակ սահմաններով մեկ:

Հովն ել չեք լալիս ու հառաչում, յերգն այլևս չեք խզվում: Կանաչին սվող ստրպանջի ստորոտում փռված արտերում դառ-

նում եր հնձող մեքենան: Նա խուրձ-խուրձի վրա յեր դառնում: Ահում ելին նոր խուրձեր, արտը դեզանում եր կոկեկալի արտը, կոկեկալի աշխատանքով և կյանքով:

Իսկ հեռվում, մթին տվող բլուրների առաջամասում հսկա մեքենան բաց եր անում նոր ալոս, նոր կյանքի, նոր որերի համար:

12. ՅԵԼՆՈՒՍ Ե, ԱՅՈՒՍ...

Ճարիները շատ ելին առաջ տարել Զորաշենին և շատ բան եր փոխվել նրա կտուրների տակ:

Գյուղում կոխող եր կազմակերպվել և նա իր թեփերի տակ եր առել 45 չքավոր և միջակ անասունթիւն: Թվով քիչ ելին, բայց լի համազմունքով ու յեռանդով ելին կպել գործի: Մեկ ելին նրանք, վորոնց սրտի կրակը կոխողի համար եր վառվում, լուսաշող ապա-դալի համար:

Շրջանի ընկերները մի ամբողջ տարի նախապատրաստվել ելին կոխողի համար: Բայց ինչու մի տարի: Միթե նրանց տառը տարփա պալքարը չի հարթել կոխողի ճանապարհը:

Կոխողի կազմակերպման սրերին չքվ-կենտրոնից շատ-շատ ընկերներ ելին գալիս: Նրանք հավաքում ելին կոխողնիկներին, նրանց կանանց ու յերեխանց և յերկար զբաղում նրանց հետ: Մի քանի որ հետո յել մի դյուզասանտես ձիուն նստած Զորաշեն մտավ և ել չվերադարձավ: Ընկեր Ստյոպան—գյուղատնտեսը, կոխողում աշխատելու համար եր յեկել: Միայն կոխողում: Անչափ ուրախությունից կոխողնիկների վտառն եղ որը գետին չեք առնում, ասես հարսանիք լինել նրանց համար: Գիտութան յեզուն և ուժն եր յեկել նրանց սղնաթյան: Յերբ մի կոխողնիկ ցանկացել եր դլազատնանի ձիու ցանձր բռնել, նա չեք թողել և «ծափ պես» թակել եր իր թամբի վրա:

Գեղի կյանքին սովոր մարդ ա յերեվում, կարա յերկար մը-նալ, յեզրախայնում ելին կոխողնիկներն ու մյուս ձորաշենցիք:

Գյուղատնտեսը որվա մեծ մասը կոխողնիկների գոմերում, աներում, աչգիներում ու դաշտերում եր անցկացնում: Մանթա-նում եր նրանց հիստ ու կացին և ցանքին, անասուն պահելու և մշակելու ձեվերին:

Կոխողնիկներից շատերը գծվարանում ելին նրան Ստյոպա կանչել փոխելին դարձրին Ստեփան: Ստյոպան ուրախացավ նրանց պարզամիտ ու անկեղծ ալը վերաբերմունքի վրա: Նա կոխողնիկներ

հետ լեւոսը շրջում եր իր անբաժան ձին լեռնակից քաշելով, անսու-
ղում կոլխոզնիկների գոմերը, մսուրները, հատակը, առաստաղը,
փոքրիկ լուսանցքները: Հետո լեւ՝ մարագի դարմանն ու խուռը:

— Գոմերը շատ են մութ ու խոնավ, կերն անկանոն եք տա-
լիս, անասունը լղար ե, — մտածում էր ինքն ինքն: Ու սկսում
էր բացատրել, թե ինչ կեր և ինչքան պետք է տալ անասունին և
զրկա վոր ժամերին:

— Վոչինչ — ավելացնում եր նա հոգոց քաշելով, — շուտով
մի որինակելի գոմ կ'ընենք բոլորիդ անասունների համար, վոր ձեր
տներեց լուսավոր կլինի:

— Ընկեր Ստեփան, — արդարանալով ասում էին կոլխոզնիկ-
ները, — մենք լաւնց բաներ չենք գիտեցել և մեզ շանց տվող ել
չի լեղել: մեր բոլոր հաշիվները գեղավարի, չորանավարի լենք տա-
րել: Հիմի կոլխոզնա մեր փրկութեան դուռը: Նա պոխ մեզ ես հետա-
նաց դրութեանից հանի:

— Այո, կոլխոզը ձեր կյանքը, մեր բոլորիս կյանքն և առաջ
ամենելու, բոլորովին նոր պայմաններ ստեղծելու, — ավելացնում
էր Ստեփանը:

— Բայց սոցիալիստական ճանապարհով, — անհամբեր մեջ ըն-
կավ մի ջանել կոլխոզնիկ կոմյերիտական:

— Իհարկե, իհարկե, — և Ստեփանը ձեռքով գուրգուրեց կոմ-
յերիտականին: Ու նա կոլխոզնիկների հետ, իր ձին լեռնակից քաշե-
լով առաջ եր շարժվում գեղի մի ալ կոլխոզնիկ անտեսութեան
հետադառնելու ու նրա ալովին, հողը, գոմը, տալու հարկավոր (սոր-
հուրդներ):

2

Յերեկոները գյուղատնտեսական խնդիրների մասին գրույց եր
լինում կոլխոզնիկների և նրանց ընտանիքի անդամների հետ:

Այդ գրույցների ընթացքում Ստեփանը լերեմն զանազան թվեր
ու մտքեր եր թելադրում կոլխոզնիկներին և նրանք ել գրում էին
իրենց ձեռքի տետրերում:

Կոլխոզնիկների հողերն ու անասունները միացվեց: Յերը գյու-
ղում հողաբաժանում կատարվեց, բոլոր կոլխոզնիկների 65 որավար
հողը գեմկեմերի բարակ շղթան միատեղ չափեց:

Մի ամիս եր, վոր որինակելի ընդարձակ գոմ էլին կառուցել:
Գոմը բաղկացած եր 3 մասից և 15 անտեսութեան անասունները
տեղ եր անում նրանում: Հարեման գյուղացիները, լեքը գործով
Ձորաշեն էլին գալիս, անպատճառ ճանապարհները թեքում էին և
գնում էին կոլխոզի գոմը տեսնում:

— Ես հո մեր ոթախներեց ել լուսավոր ու լավ ա, — ասում
էին նրանք և հիացմունքից «ծըն-ծըն» — անելով գուրա գալի:
Հենց կոլխոզը կազմակերպելու աշխատանքի վարը, ցանքն ու
մյուս բոլոր գյուղատնտեսական աշխատանքները Ստեփանի ցուց-
մունքով էին տարվում: 65 որավար հողը վոչ մի «սահման» չունե-
ր — չե վոր նա մի ընտանիքի լեր, կոլխոզի ընտանիքի: Իսկ կոլ-
խոզնիկները գյուղի առաջավոր, ամենքից գիտակից մասն էին և
նրանք գիտեին թե ինչ են անում:

Ձորաշենի կոլխոզի առաջին ամառն եր: Եղ տարվա բերքը
գյուղում առատ եր, իսկ կոլխոզի հողերը չտեսնված բերք տվին:

Յերը հասկերը ցողունների վրա ծանր որորվում էին, դեռ
են ժամանակ կոլխոզնիկները տեսնում էին, թե ինչպիսի բերք են
ստանալու: Կոլխոզի 9 սաղը 3 որ ճանաչելով ծանր խրճել էին կրում
գեղի կալերը:

Արաբերը հնձելուց հետո ծղնոտի տակը աշխան ցել արին, իսկ
մյուս գարնանը կոլխոզնիկների բակերում ինչքան վոր աղբ կար,
սելերով կրեցին հողերը: Կոլխոզը դեռ աշխանից սերմագտիչ եր
ստացել և աշխան ու գարնան սերմը գատեց ամեն աղբ ու փուշ
հատիկից և մնաց միայն «ծախ ձվի չափ» սերմացուն: Բջիջի հետ
միասին բացատրական կամպանիա տարան սերմը դաշտ և գարնանը
ձորաշենցիներից շատերը կոլխոզի սերմագտիչով գտեցին իրենց
սերմը և աջակես հողը ղցեցին:

— Կամաց - կամաց հողերը կարգի կղցենք, — գրույցում եր-
Ստեփանը կոլխոզի նախագահ Վաչագանի հետ, — աշխանից լեռա-
գաշտյան սխտեմի կանցնենք, ամեն մի տեսակ հողում իրեն հարմար
բան կցանենք: Ու եղպես, Վաչագանն ու Ստեփանը քննում էին
կոլխոզին վերաբերվող հարցերը, մտածում, թե ինչ ճանապարհներով
առաջ տանեն գործը:

Աշխատանքի խիստ բաժանում եր կատարված: Ամեն միքը գի-
տեր, թե ինքն եսոր ինչ գործ է անելու: Գործն ել արվում եր
ըստ կարողութեան: Այսինքն՝ ով ինչ գործ գիտեր, են եր անում,
ով ինչ արհեստ գիտեր, նրանով եր զբաղվում: Եղ բոլոր հարցերն
իրենք կոլխոզնիկներն էին իրենց ժողովում փորձում: Ամեն մեկը
գիտեր, թե ինքն ինչ աշխատանք է տանելու, քանի ժամ է աշ-
խատելու, ամեն մի ժամն ինչքան է գնահատվելու, ուրիշ ինչ աշ-
խատանք է տանելու և ալն: Եղ բոլորի մասին 10 որը մեկ անգամ
ցուցակ եր կազմվում և փակցվում կոլխոզի փոքրիկ գրասենյակում:

Այսպես որստորե բարգավաճում եր կոլխոզը, լայնացնում իր
ըջանը նորանոր գյուղացիներ ընդգրկելով: Աճում եր կոլխոզի
նոր կենցաղը, իսկ գյուղի մութ տարրերը փախում էին ու նոր
գավեր լալում:

— Ի՞նչ պայմաններում կազմակերպվեց և զարգացավ Զորաշնչի կոլխոզը:
 — Կարող եմ գյուղատնտեսական վերակառուցումը տեղի ունենալ առանց
 գյուղատնտեսի գիտական ձեռքերի կիրառմանը:
 — Ի՞նչպես եք ոգտվում գյուղատնտեսի աշակցութունից, կիրառում ե՞ք
 արդյոք նոր ձեռքեր ձեր գյուղական աշխատանքների մեջ:

13. ՎՈՍՏԱՅՆԸ

1

Զորաշնչի կուլակները—Քուստուլանց Վարդապարը, Ծուղու-
 րանց Մադին և Քոստանց Հարութը նստել էլին ողայում, վառվող բու-
 խարիկի շուրջը և անհամբեր սպասում էլին, թե ինչ լուր կրերի
 Աթանեսը, իրենց լրտեսներից մեկը, վերին ուղարկել էլին մի սե-
 փորձի համար բանակցելու:

Բուխարիկը խափար ողայում հանգարտ միտում եր, յերբեմն ել
 հրճաում էլին փայտերը:

Լուսթլունը շարունակվում եր: Նստածները աչքերը դցել էլին
 վառվող կրակին և նրանց մտքերն ել յերբեմն լուսավորվում էլին
 կրակի նման, յերբեմն ել մթնում, ինչպես ողալի խափար ան-
 կունները:

Դուռը կամաց ճռռաց. բոլորն իսկույն յես նայեցին: Նրանք
 աշխատեցին հենց առաջին հայացքով կարդալ Աթանեսի դեմքի և
 աչքերի արտահայտությունը:

Աթանեսը մթնած դեմքով եր: «Չի համաձայնվել»—իսկույն
 անցավ բոլորի մտքով:

— Չե՞ր ասում, վոր չի համաձայնվել, — տեղում շարժվելով
 պարծեցավ Վարդապարը:

— Բա ինչ տասվ, — Աթանեսին անհամբեր հարց տվին Հարութը
 և Մադին:

Աթանեսը չուխալի փեշերը յես քաշելով նստեց նրանց կող-
 քին, քթովի վրա և սկսեց.

— Են մարդը, Բարսեղը, ասում և «դուռն ա, յես չեմ ա-
 դում կոլխոզ մանել, նախագահը հետո լավ չի, համարյա թշնամի
 յենք, համա չեմ կարող նրան սպանել, իմ ձեռքերն ուրիշի արյու-
 նով շաղախիլ: Թե ուզում եք, դուք սպանեցեք»:

— Բա չասիր, վոր ասանց են ել մեզ վրա չեկիստի աչքով են
 նայում ու քեզ ենքան փող ու սպրուտո կտանք, վոր մինչև քո մա-
 ճի քեզ հերիք կգնի, — լարված հարց տվին Հարութն ու Մադին:

Ոխար հետ ասի, ոձի լեզու բանեցրի, համա նա թե չէ

վոր չե, եդ բանն ըլիլ չի», ասում ա. «Դուք ուզում եք ինձ Միբեր
 քշեն, ըրեխեքս ել սովից մեռնեն», ասում ա:

— Ախր ասում ելի, վոր չի համաձայնվել ե, — նորից հար-
 տրեն կրկնեց Վարդապարը և նստած տեղն ամրացրեց, վոր իր
 կարծիքը ճշտվեց:

— Դու յե՛լ... — բարկացան Վարդապարի վրա, — կնկա նման հա-
 վի արին թափելուց ես վախենում: Մինչև մի քանիսի արինը չը-
 խմենք, մենք չենք կարող կոլխոզի գործերը խափանել, մեր նպա-
 տակին հասնել...

— Յես ելի իմ տնածն եմ ասում, — հոնքերը վեր քաշեց Վար-
 դապարը, առանց մյուսներին նայելու, — վոր կոլխոզի նոր գոմը
 պաժառ գցենք. գոմապահին կհաշտենք և բոլոր ծակուծուկը կը-
 կաշենք. են վախտը մի անասուն ել չի աղաավիլ կրակից ու ծը-
 խից: Դա ամենամեծ վնասը կլինի կոլխոզին:

— Չե, — առարկեց Հարութը. — պաժառը շուտ կիմացվի, սող
 գեղը վրա կհասնի, կրակը կհանգցնի ու վնաս չեն ստանալ: Համա
 ինչ գիտես, վոր թալարի մեջ չես ընկել:

— Չե, եդ ճամբեն շատ խախուռ ու վտանգավոր ա, հարեց
 Մադին, — հետո անասունները մեղք են, նրանք մեզ լինչ են արել:
 Նրանց սրտի արինը պտի թափենք, ովքեր ես սհաթին ուզում են
 գյուղը կոլխոզացնել ու մեր դեմ դուրս բերել, մեր վոտքի տակը
 փորել...

— Միսներս կերան, վոսկորներս թողին, — բորբոքվեց Հարութը:
 Այո, թե մեր որերն ելի կզան, յես դրանց կոլխոզ շանց կտամ:

— Դե, գիշերը կես ա ըլում, ցրվենք, — քթիկի վրալից վեր
 կացավ Աթանեսը, չուխի փեշերը բաց թողնելով:

— Բան ա, թե վոր մարդ պատահի ու մեկն ու մեկիդ բան
 հարցնի, կասեք հիվանդի կշտից ենք դալիս, — ցածր ձայնով խոսեց
 Հարութը և ճրագի լույսով մինչև գոմի դուռը նրանց ճանապարհ
 դցելով շարունակեց, — ամեն միսն պտի մեր հարևան մի քանիսի
 բերանը վոսկոր գցենք, աչքները թող փչենք և նրանց կոլխոզի ու
 վեղական աշխատավորների դեմ բողոքավոր դուրս բերենք... Նը-
 բանցով մենք շատ բան կանենք: Երուց ել իմաց չեմ տալ: Ժան-
 վարքին կգար, կմտածենք, խելք-խելքի կտանք, տենանք ինչ ենք
 անում:

Վարդապարը, Մադին և Աթանեսը հերթով «բարի գիշեր» ա-
 փն Հարութին և գոմի դուռը բացելով հարվեցին մթնում:

Այդերի սե գեղերը ծածկել էլին լուսինը, գյուղը կորել եր
 խափարի մեջ: Յեվ վոչվոք չաեսավ, վոր յերեք մարդ, գողի նման

կուզեկուզ ցրվեցին իրենց տները: Միայն Աթանեսը գլուղի ծայրին եր ապրում, ցանկացավ կտուրներով կարճել ճամբեն: Մի կտուրից շտապ իջնելիս նա վտարը դրեց շան բնի վրա և շունը կլանչոցով դուրս թռավ բնից: Աթանեսը թափը չպահեց և ամբողջ մարմնով ընկավ շան վրա... Շունը կողկոնձաց, կլանչեց և նրա կլանչոցը խավարը ծվատելով տարածվեց կտուրների վրա և դռանից ել գենը՝ հանգչելով սարի փեշերի ու բլուրների մոտ: Մյուս շներն արձագանգեցին և ելի շուտ կտրեցին ճախերը: Նույն պահին Հարութը տանը լսեց շների կլանչը և մի կասկած սկսեց ուտել նրա միտքը: Մաղին ու Վարդազարը դեռ տուն չեյին հասել. նրանք ել նույն պահին իրենց տեղում ահով կանգ առան, լարեցին ահանջները, տակախ մարդկային վոչ մի ձայն չսովեց:

Աթանեսը լեզապատառ դեպի տուն ծլկեց:

Ձորաշենի այդ ուշ գիշերում չորս հոգի հանվեցին և թախտի վրա չորեքթաթ սողացին, մտան վերմակի տակ: Սակախ չորս բարձի վրայի չորս միտքը դեռ լերկար ժամանակ անքուն մնացին: Նրանք փոստայն ելին հյուսում կոլիսող ցանցելու համար:

Գիշերը կիսվել եր:

- Ի՞նչ փոստայն ելին հյուսում կուլակները կոլիսողի դեմ և ինչ՞ա:
- Պայքարի ել ի՞նչ ձևեր են հալտնի ձեզ, փորանց դիմում են կուլակները մեր դեմ կովելիս:
- Ի՞նչպես ենք պատասխանում կուլակների այդ փորձերին:
- Ի՞նչ պայմաններում հնարավոր ե վերացնել կուլակությունը վարպես դասակարգ:

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջածանց

Առավոտյան	սառած	վարչություն	Հայաստան
Գրքագրության	գրած	խելոքություն	Վրաստան
Խորհրդային	փոքրիկ	յերկաթյա	Գերմանիա
Ցովային	թմբիկ	փայտյա	Սօֆիա
Գլուղակա	հարկուրավոր	վոսկեղեն	Գրիչ
Կուսակցական	պոչավոր	քարեղեն	այրիչ
տանուլ	խոփանոց	վառարան	առաջնորդ
խոսող	ծաղկանոց	ննջարան	ճանապարհորդ

Բառերի վերջում ավելացող ածանցները կոչվում են վերջածանց:

1. Գրեցեք լեռնալեռն օրինակ՝ վերը բերված վերջածանցներով նախադասություն:

14. ԹՈՒՄԲԸ

Աղջարխ տանող ճանապարհի յերկու կողքին սևահողի դաշտում շրջում են տրակտորներն առավոտյան լույսի տակ:

Վարն առաջ ե գնում: Դաշտի մի ծայրից մյուսն են արշավում ճարպիկ, նեղ իրան «Խնտերնացիոնալն» ու լուրջ կեցվածքով «Վաֆուր»: «Խնտերնացիոնալի» յետևից յերկու խոփանոց գութանը լախ շերտերով փխրուն, հող ե պատրաստում պահանջկոտ բամբակի համար:

Շուտ-շուտ դառնում ե արակտորը: Հազիվ գնում ե 100—200 քալ և արակտորը շուտ ե տալիս զեկը—դառնում ե մեքենան: Ավելի դենը գնալ չի կարելի. այնտեղ յոնջա լեն ցանել աշնանը, այնտեղ ալզի լի մի փոքրիկ կտոր, այնտեղ թուժը ե ու առու, վորը բաժանում եր արտերը, յերբ դեռ չկար կոլեկտիֆացումը:

Թումբն ե տրակտորի գլխավոր թշնամին: Յորբ թմբին ե հասնում նա, պետք ե դառնա, այլևս առաջ գնալ չի կարող: Համառությունը կարող ե վատ վերջանալ, խոփը կկտորվի, տրակտորը կթաղվի հողի մեջ, վարը կանգ կառնի:

Թումբը զայրացնում ե տրակտորիստին ու բոլոր նրանց, վորոնք գիտում են վարը:

Ամենից ավելի հուզվում ե ագրոնոմ Գրիգորը, վորին մեր բամբակացան շրջաններում լավ են ճանաչում:

— Տես ավելի չափ խամ տեղ ե թողնում, քան թե վարում ե, բացականում ե Գրիգորն ամեն անգամ, յերբ տրակտորը թմբին հասնելով ստիպված ե մի ավելորդ շրջան կատարել և դառնալ:

Թմբերի հետ հաշիվ տեսնեն այնքան ել դժվար չի: Լծել յեզի գութանները, վարել թումբը ծայրից ծայր, լցնել հողը, կողքի առուն, հավասարեցնել դաշտը: Դա կտա մեզ մի կողմից հարյուրավոր նոր հեկտարներ բամբակի համար, իսկ վոր գլխավորն ե, չի չըջի տրակտորն իդուր տեղը, չի կորչի նավթը, ժամանակը, չի փչանա մեքենան:

Բայց... լեզները պարապ կանգնած են գոմերում, դութաններն ընկած են դեռ ու դեռ ու գլուղացիք արևիկոլ են արել պատերի տակին:

— Ինչո՞ւ չեք վարում թմբերը, չե՞ վոր դա խանգարում ե վարին, — դիմում եմ մի խմբի:

— Բա տրակտորն ինչ ա, վոր մենք վարենք: Տրակտորն ինքը թող քանդի թմբերը:

Կոլխոզի վարչություններն ել դանդաղում են, պլուգերից մի քանիստում հայտնում են, վոր՝

— Վաղը դուքս կգանք թմբերը քանդելու:

Բայց տրակտորն այսօր վարում է. նա վաղվան չի սպասում:

Տրակտորին նեղ է գալիս թմբերով անջրպետված հողակտորը: Տրակտորը պահանջում է լայնարձակ ու ազատ դաշտ, վոր համարձակ ու անտրեղ ընթանա ու դառնա: Թումբը պիտի տեղի տա, վերջին հուսանատական փորձն է կատարում նա—պատվար դնել արշավող յերկաթի առաջ: Անանն ալլես այս շրջանում թումբ չի լինի: Մյուս տարի գարնանավարին տրակտորի լեքին այդ դաշտերում կլինի ավելի հաստատ ու հաղթական:

Արևը թեքվում է դեպի արևմուտք: Փայլում է ուրախութիւնից ավագ տրակտորիստ Սանատրուկի գեմը. աչքերով հետևում է նա հողակտորների արանքից փայլատակող խոփերին, ու—

— Սպիտիկ դեռ, ասում է նա,—շուտով հարվածայինի կանցնենք, կաշխատենք լեքի ու հերթի ու ժամանակից շուտ կվերջացնենք մեր վարը:

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յեզակի	Հոգեակի	Յեզակի	Հոգեակի
(միավանկ բառեր)	(բազմավանկ բառեր)		
թումբ	թմբեր	կոլեկտիվ	կոլեկտիվներ
նոր	նորեր	խրճիթ	խրճիթներ
հող	հողեր	շրջան	շրջաններ
առև	առևեր	անապատ	անապատներ
		տարի	տարիներ
		հազար	հազարներ

Ծուլց ավելք թե վճի գեղքումն է ավելացվում եր, և վոր ղեկավար
Յե ինքներդ կազմեք նման բառեր:

15. ԱՐԱՐԱՏՅԱՆ ԳԱՆՏԻՄ

Ծերուկ Արարատի սպիտակ գլուխը փայլում էր արեի սալի: Սառույցների միջից արտացոլող դեղին ասեղների սուր ծալքերը թաղվում են Արարատյան դաշտի հողերի մեջ:

Ահա այդ անապատային հողերի միջից՝ խլուրդի թմբերի նման բարձրացել են Ղուրդուղուլիի հողաշեն տները: Տներ, վորոնք ունեն շատ տարիների պատմություն, սակայն ալժմ նրանց հակառակ համատարածի ձևերը դրում է:

«Այսանդ բարձրանում է նորը, ալտեղ գրվում է մի նոր պատմություն»:

Յերկիր, արդյոք դու անեմ էլիք ալապիտի մի բեկում, մի հզորապիք—գոչում եմ լես:

Յեվ ահա գորշագույն, հողե թմբերի միջից բարձրանում է յերկաթե բուռնցք, բացվում է բուռնցքը, նրա մեջ գրված է՝ «Յերկաթը կբանա քո աչքերը. կույր»:

— Դեպի կոլեկտիվացում,—դրնդում է ամենուրեք:

Վաթսուն տարեկան ծերուկ Սարգիսը մտածում է կոլեկտիվացման մասին: Նրա թոռիկը նույնպես:

Նրա բազմամյա խրճիթի դուռը ճռում է՝ կոլեկտիվի մասին է լեքում:

Յեվ ալապես հազարավոր Սարգիսներ:

Ղուրդուղուլի լին մեծ շրջան է, բամբակագործական հարուստ շրջան:

Ամառը բացվում են բազմաթիվ բամբակի ճերմակ գնդակներ... Մրցման պայմանագիր է կնքված տեքստիլի հետ. պետք է տեքստիլին բամբակ տալ, շատ բամբակ:

Դաշտերում լսվում է 85 տարեկանների կանչը: «Ումն ենք մենք»—ժպտում են նրանք—պատասխանում:

Կոլեկտիվին:

Յեվ Ղուրդուղուլու հողաշեն տները ծածկվում են մի նոր, վառվում գույնով:

Տափարակի ալրված ու ծարավ հողերը ծնում են բամբակի միլիոնավոր գնդեր՝ գարնանը, կոլեկտիվի գարնանը:

— Ի՞նչ է կառուցվում Արարատյան դաշտում:

— Կոլեկտիվացումն մեզ համար ի՞նչ հեռանկարներ է բացում:

— Ի՞նչ նշանակություն ունի բամբակագործությունը մեր տնտեսության համար:

— Ի՞նչ տեղ է գրավում բամբակագործական շրջան Ղուրդուղուլիում:

16. Վ Ա Ր Ը

Ծաղկաշոր գարուն է բացվել, հողերը հաղթ կրծքին առած՝ Արազի ափերում նդում:

Դաշտերը վողի լեն առել թնդում են, ծիծաղում, ժպտում: — Վարի, վալի տրակտոր, լիմ թե, թիկունք տրակտոր.

Հանդերը դուզվում են, դյուլթում՝ ուժ տուր, ուժ տանք, ջան ասենք, գարնան ջերմ արևով արբած.

ուր նայես՝ ազմուկ ու ցնծում. ծիրգ լեն տար, տրակտոր:

Մեր կոմունան կոկոն վարդ, միլիոն, խրխիլ ու բառաչ: հազար սիրտ է գրավել:

Ուպանում. փոշու մեջ կորած գուշման, աղբեր ու ընկեր վնչում է մեքենան ուժով: մեզ են նայում անհամբեր:

— Վաղը դուրս կգանք թմբերը քանդելու:

Բայց տրակտորն այսուր վարում է. նա վաղվան չի սպասում: Տրակտորին նեղ է գալիս թմբերով անջրպետված հողակտորը: Տրակտորը պահանջում է լայնարձակ ու ազատ դաշտ, վոր համարձակ ու անարգել ընթանա ու գտանա: Թումբը պիտի անդի տա. վերջին հուսանատական փորձն է կատարում նա—պատվար դնել արշավող յերկաթի առաջ: Աշնանն այլևս այս շրջանում թումբ չի լինի: Մյուս տարի գարնանավարին տրակտորի լեքին այդ դաշտերում կլինի ավելի հաստատ ու հաղթական:

— Ի՞նչ հարցրին փոքրիկ վորդիներն իրենց քահանա հորը. Հայրը ինչու խուսափեց պատասխանելուց:

— Ի՞նչ պայմաններում միայն հնարավոր եր ընտանիքի մեջ առաջացած նեղքին հակասութիւններ:

— Մեծ եր խաբում տեր Չաքարը: Ինչու:

49. ՇՆԻ ՄՆԱՑՈՐԴԸ

Վորպէս քիթը կախ, խռոված աղա խուլ յեկեղեցին կանգնած ե ահա. և խաղառ զրկված փառքից վաղեմի, իր չոր գլուխն ե վողբում նա հիմի:

Անգործ մնալուց բանալին ժանգոտել, խոնավ պատերը բորբոսն ե պատել. դռները խաբխուլ մնացել են կողպ, տերտերն ե միայն անում սուգ ու վողբ:

— Ել մարդ չմնաց մեզ հավատացյալ, բոլորը դառան վասակ ուրացյալ, բայլշիկները տունս քանդեցին, ձեռքիցս առան սուրբ յեկեղեցին:

Ել յես ինչ անեմ, ել յեսմ՞ըր գնամ, իմ անբախտ գլխին յես ի՞նչ հողը տամ ագրուստս կտրվեց, սեպցավ իմ կլանք, չունիմ առաջվա պատիժ ու հարգանք:

չենց յեկեղեցու ուղիղ դեմ ու դեմ կլուքն ե հպարտ բազմել լուսադեմ. մի քանի տասնյակ աղջիկ, պատանի փորում են հիմքը հավատ-կրոնի:

— Մենք միշտ կմզենք կռիվ ու պալքար
մանուկ սերնդի նոր կյանքի համար.
Խուլ լեկերեցուն ել մենք չենք թողնի,
իբ մեռած սեղից նորից կյանք առնի:

Մեզ հարկավոր ե լույսը գիտության,
մեզ հարկավոր ե յեռանդ անսահման,
վոր կարողանանք պալքարով համառ
նոր կյանք ստեղծել ամենքի համար:

50. ԿՈԼԽՈՋՆԻԿ ԱՊԻՍ

Կրոնից դեմքդ շուռ ավիր
կոլխոզին դիմում ավիր.
արծաթամազ իմ ապի.
գուլ գիմեցիր նոր կյանքի:
Կրոնը թողիր հեռացար,
ապի կոլխոզնիկ դարձար.
յես ել քեզ հետ եմ ապի,
Ուժ տանք մեր նոր շարժումին.
մոտ ե, մոտ ե, վաղն ահա...
պիտի կայմենք կոմունա:

51. Պ Ա Ր Ե Ր Գ

ԿՈՄՍՈՄՈՒԿԱ. — Ինձ ձայնակցիր ու կանչիր
այ տղա,

«Հնգամյակը չորս տարում,
չորս տարում».

Սիրալիր լերգեր հնչիր,
վոր թվա

Տարին քեզ ծաղկած դարուն,
վառ դարուն:

Դեմքդ քրտինքով լվա
այ տղա,

Մեր ես ցանվող մարգերում,
մարգերում:

ԿՈՄՍՈՒՄՈՒՍՏ. — Կոլխոզի արտի ծաղիկ
քեզ պես հարվածային եմ,
Շողիկ ջան.

Իմ գարուն արտի ծաղիկ,
սես քո պես

Յես ել. հարվածային եմ,
ծաղիկ ջան.

Քեզ հետ ելել եմ մարտի
յարո ջան,

Յես ել հարվածային եմ,
ժրաջան:

ԿՈՄՍՈՒՄՈՒԿԱ. — Յես, դու լեղել ենք մարտի
այ տղա,

Հնգամյակը չորս «տարում»
լողունգով:

Կավարտենք գործն արտի
ես տարվա

Պլանների կատարում
մեր ջանքով:

ԿՈՄՍՈՒՄՈՒՍՏ. — Յերբ քեզ կողքիս եմ տեսնում.
այս արտում

Սրտումս սեր ե ծաղկում
Շողիկ ջան.

Յերբ «ԿԻՄ»-իդ շողքն եմ տեսնում
իմ սրտում

Հուր ե վառվում հրահրուն
ծաղիկ ջան:

ՄԻՍՍԻՆ. — «Հնգամյակը չորս տարում»
լողունգով.

Բայլընիկյան տեմպերով ենք
շարժվում,

Արդֆինայլանն ենք կատարում
մեր ջանքով,

Բայլընիկյան տեմպով ենք
մենք տանում:

Հնգամյակը չորս տարում
լողունգով.

Բայլընիկյան տեմպեր ենք
ստեղծում:

— Ի՞նչ պայմաններում միայն հնաբավոր լեղավ ապու ազատագրումը,
Ալժմա ապին նոր կենցաղի մարդ ե թե հին: Հիմնավորիր և բեր այլ որի-
նակներ:
— Ի՞նչ են լերգում կոմսոլն ու կոմսոմոլիան: Անցյալում լերիտառա-
դուլունն ի՞նչ եր լերգում: Ի՞նչով բացատրել այդ տարրերութունը:

ԶՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԱՊԻՏԱ-
ԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ

Ա. ՆՂԿՏԵՄԲԵՐԻ ԶԱՆԱՊԱՐԶԻՆ

52. ՅԵՐԴ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ

Աղետ լեղավ: Պատերազմ: Ու ժողովուրդն անտեր՝
զավակներին իր՝ հեռու թշնամու դեմ ուղարկեց:
Ձեր հասկանում՝ թե ինչո՞ւ. ինքը վոչինչ չգիտեր:
Գնաց լեռերորդ զավակն ել—ուտունն ամբողջ մնաց խեղճ:
Եսպես լեղավ: Յեվ ահա քաղաքներում բազմամարդ,
ուր յերկաթե բյուրավոր գործարաններ կային մեծ,
մի առավոտ յերկնահուպ ծխնելույզները յերկաթ
կոչ նետեցին զինվորին՝ զինվորի դեմ չկովես:
Չհամբերեց ել զինվոր-գործը, յեւով գահի դեմ,
ամբողջ յերկիրը յեւով, վորպես զինվոր մի արթուն.
Ժողովուրդը հասկացել ու արթնացել եր արդեն.—
ու զինվորն են ծերից, պատերազմից յեկավ տուն:
— Ել չեմ կովի,—ասաց նա,—թշնամու դեմ դրսեվի,
մենք ի՞նչ ունենք կիսելու, բաժանելու աշխարհում,
նո՛ւյն արեն ե բոլորիս արեն ու կարեն—
մեր ունեւորն ե միայն մեր թշնամին արնախում:
Կոխվ տղրուկ ու վիշապ հարուստների դեմ բոլոր,
վոչ մի հարուստ չմնա թող աշխարհի յերեսին:—
Եսպես ապին ու հսկա բանականերով ահավոր՝
ճակատներից տուն դարձան նրանք մի որ միասին:

Ու ավեցին կրակի որենքները հնամյա,
հարուստների ստեղծած իրավունքն արնախում.
ապին ամբողջ աշխարհում մի իրավունք միայն կա
մարդու քրտինքը գուլալ ու աշխատանքն արդար:
Հողերն առան, ցանեցին աշխատունակ, ժրաջան.
գործարանները մի նոր հպարտությամբ յերդեցին:
Մինչդեռ յերկրի ծալքերից թշնամիներ բարձրացան,
վոր յետ խլեն կարգը նոր ու հաստատեն կարգը հին:
Բայց ել զինվոր եր հիմա մեր բանվորն ու գյուղացին,
բազմահազար հրացան ու թնդանթ ունեւ նա.
հավաքվեցին բյուրավոր ու բանակներ կազմեցին,
վոր մարանչեն մինչև վերջ, մինչև վոսոխ չմնա:
Յեւան, հաստատ, վորպես սար ու սարի պես անսասան
Կուրծք տվեցին բյուրավոր ահեղազարկ հարվածի,
Հազար կոխվ արեցին. բայց պարտություն չտեսան.
հազար կոխվ արեցին ու բոլորին հաղթեցին:
Ու կովում են հիմա ել, վոր յետ չտան ել յերբեր
իրավունքը բանվորի, վոր անսասան ե արդեն.
բարձրացել են նրանց դեմ ունեւորներն ահաբեկ,
բայց կովում են նրանք դեռ—ու կհաղթեն, կհաղթեն:

Վեր պատերազմի մասին ե հիշված այս վոտանավորի սկզբին:
— Յերբ ե ի՞նչպես իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական
պատերազմի վերածվեց:
— Ի՞նչ լողունքների առկ եյին մովում քաղաքացիական կռիվները,
— Ի՞նչ հակահեղափոխական շարժումներ յեղան քաղաքացիական պա-
տերազմի ժամանակ. ի՞նչ լեղավ նրանց վախճանը:

աղետ — դժբախտ պատահար.	ժրաջան — աշխատասեր.
յերկնամուպ — յերկնքին կպած,	վոսոխ — թշնամի.
բարձր.	ահեղազարկ — ուժեղ հարվածող.
հնամյա — հին տարիների, հին	ահաբեկ — վախից հույսը կորցը- րած:
գարերի.	

Մայիսի 18-ն եր: Կոմունայի վերջին ուր:

Հերոսական կռիւն հետո ընկնում ե Պեր-լա-Շեզ գերեզմանա-տան դիրքը, և Կոմունայի վերջին բեկորները ղիմում են Ֆոնտե-սո փողոցի բարրիկադը:

Այդտեղ են Կոմունայի վերջին աստղերը, Կենտրոնական Կո-միտեյի անդամները՝ կարմիր ժապավեններով զարդարված:

Հսկայական կարմիր դրոշը ծածանվում ե բարրիկադի վրա:

Մնացել են վերջին բեկորները և պատրաստվում են որհա-սական կռիւ: Արդեն հոգևարքի մեջ ե մոտակա Սեն-Մոր փողոցի բարրիկադը: Նրանցից վոյ հեռու, մյուս բարրիկադի վրա մնացել ե միայն մի մարդ. բայց համառութեամբ շարունակում ե կռիւ:

Շատ չանցած հեին վազում ե դեպի կարմիր բարրիկադը մի աղջիկ:

— Յես գալիս եմ ձեզ ոգնելու, — կանչում ե նա, — յես Սեն-Մորից եմ գալիս... Նա արդեն ընկավ:

— Այստեղ ամենավտանգավոր տեղն ե, մի գալ այստեղ:

— Վոյ յես յեկել եմ ոգնելու և պիտի ոգնեմ:

Վերջին րոպեներն ելին:

Ռազմամթերքի վերջին փշրանքներն ելին մնացել:

Հերոսները լցրին թնդանոթները յեղած ռազմամթերքով ու վերջին անգամ արձակեցին:

Հսկեց որհասական վորոտը, և ամեն ինչ լռեց:

Կոմունան ընկավ:

Բայց դեռ յերկար տարիներ հիշում ելին այն կարմիր բարրի-կադն ու այն անձնվեր հերոսուհուն. վոր յեկել եր ոգնելու:

Յեվ մի բանաստեղծ մի յերգ գրեց նրա վրա, վոր սկսվում ե վերջանում եր այսպես.

«Յես հիշում եմ, յես սիրում եմ այն ատենը,

Յերբ կեռասներն ե կարմրում»:

Ու յերկար տարիներ բանաստեղծը տեսնում եր կեռասներն կարմրելու ժամանակ մի աղջիկ, վոր շրջում եր վերջին բարրիկադ-ները՝ նրանց ոգնելու համար:

Յեվ ինչպես տխրում եր աղջիկը, յերբ նոր բարրիկադներ չեր գտնում, վոր նրանց ոգնի:

— Ի՞նչպես կռիւն Կոմունարների աղջիկը: Ի՞նչն եր նրան մղում գի-պի նման հերոսութուն:

— Յերբ կազմվեց Կոմունան և ի՞նչ նշանակութուն ունեցավ նա բանվոր դասակարգի համար:

— Ի՞նչու ընկավ Կոմունան, և ի՞նչու Հոկտեմբերը հաղթանակ տարավ:

Ամբողջ հողավածը դարձնել յեղակի և հոգնակի:

«Կարմիր բարրիկադ» հողավածն ամբողջապես արտագրել՝ բոլոր հոգնա-կիներն ել դարձնելով յեղակի և ընդգծելով ստորոգյալները (բայերը):

Նույն հողավածն արտագրել գրքից բոլոր յեղակիներն ել դարձնելով հոգնակի և ընդգծելով յենթակաները, տեղի և ժամանակի լրացումները:

Գրվում ե՝	Կարգացվում ե՝
առաջին	առաջին
վերջին	վերջին
միջին	միջին
աղջիկ	ախիկ

Մտածեցեք և գրեցեք նման բառեր:

Կարմիր Փարիզյան Կոմունային վերաբերող մի քանի լոգունգ:

54. ԱՐՅՈՒՆՈՏ ԿԻՐԱԿԻ

Ձմեռվա մի սաստիկ ցուրտ առավոտ եր՝ 1905 թվի հունվարի 9-ին (22): Լենինգրադի բանվորական թաղերից ահագին ամբոխ եր առաջ շարժվում: Առաջից տանում ելին թագավորի ու սրբերի պատկերները: Յետեվից գնում ելին բանվորները, բանվորուհիներն ու նրանց յերեխաները տոնական հագուստներով:

Ու՛ր ելին գնում և ինչ՞ու:

Սով ու կարիքն ելին ստիպել նրանց՝ սիրտ անել թագավորի մոտ գնալ ու խնդրել, վոր իրենց պաշտպանի հարուստներից ու վոստիկաններից:

Թագավորին ուղղված իրենց խնդրում նրանք գրում ելին.

«Հայր թագավոր, մենք՝ բանվորներս, մեր կանաչ ու յերեխա-ներն և մեր ծերունի ծնողները յեկել ենք քեզ մոտ արդարութուն և պաշտպանութուն խնդրելու:

«Մենք ծայր աղքատութեան ենք հասել, մեզ ծանրաբեռնում են անտանելի աշխատանքով, մեզ անպատվում են մեզ մարդու տեղ չեն դնում, մեզ ստրուկ են համարում, վոր պետք ե միայն համբերեմք ու լռեմք: Ել ուժ չմնաց, թագավոր հայր, մեր համ-բերութունը կտրվում ե, հասել ե այն սոսկալի րոպեն, յերբ մեռ-բերութունը կտրվում ե, քան չտեսնված անարգանքներ կրելը»:

Յերկու հարյուր հազարից ավելի բանվոր-ամբոխ մոտենում եր թագավորի պալատին:

Գնում ելին հանգիստ, առանց յերգերի, առանց կարմիր դրոշակների... Գնում ելին խնդրելու, աղաչելու...

Յեվ հանկարծ՝ հրացանի կրակ:

Առաջին շարքերում շփոթութուն ընկավ: Կարծեցին, թե ինչ վոր սխալ բան կատարվեց. շարունակեցին առաջ գնալ, նորից կրակեցին:

Ամբոխի առաջ լեւան կազակներ՝ մերկացրած սրերով. աղաղակ բարձրացավ...

Մեկն ընկավ կուրծքը վիրավոր... ամբոխը կանգ առավ...

«Մի՞թե չպիտի հասնենք թագավորին, մի՞թե կրակում են մեզ վրա, շնչացին ամենքը»:

Հինգ հազար հոգի վիրավորվեց, հազար լերկու հալրուր տասնվեց հոգի սպանվեց, և այդ բոլորը մի որում, Այրուհոտ կիրակի օրը, հունվարի 9-ին (22):

Լավագույն բանվորների հետ «հալր գազան թագավորն» այս ձեւով հաշիվ մաքրեց:

Այդ օրից լանվորները հասկացան, վոր քանի թագավոր կա, նա միշտ բուրժուազիայի կողմը կլինի, բանվորն օր չի ունենա, հետևապես պետք է գահից վճռել թագավորին:

«Բանվոր դասակարգը քաղաքական կռիվ մի մեծ դաս ստացավ» — գրում էր Իլիչն այն ժամանակվա «Վալերյուդ» թերթում, — պրոլետարիատի հեղափոխական կրթութունը մի որում այնքան առաջ գնաց, վոր չեք կարող առաջ գնալ ամիսներում և տարիներում:

«Հեղափոխական մոմենտի ամենամերձավոր խնդիրներից մեկը դառնում է ժողովրդի զինումը»

«Միայն զինված ժողովուրդը կարող է ժողովրդական ազատութուն ձեռք բերել»:

— Ինչ՞ու լեր ժողովուրդը գնում ցարի մոտ:

— Ինչ՞ով պատասխանեց ցարը:

— Ինչ՞ է գրում Լենինն «Այրուհոտ կիրակի»-ի մասին:

— Ինչ՞ով բացատրել ժողովրդի այդ միամիտութունը:

— Ինչ՞ դաս հանդիսացավ «Այրուհոտ կիրակին» բանվորական դասակարգի համար:

55. ԽՐԱՄԱՏԻ ՍԱՐՍԱՓԸ

(1914 թվի համաշխարհային պատերազմից)

Կես զիշերին զարթնում ենք: Գետինը թնդում է: Մենք ուժեղ կրակի տակ ենք: Կուչ ենք գալիս անկյուններում: Կարելի չե դա՛նազանել բոլոր կալիբրների ռումբերի պայթյունները:

Ամեն մեկը բռնում է իր իրերը և աշխատում ստուգել. թե նրանք իրենց տեղումն են արդյոք: Բլինդաժը դողում է, գիշերը լիքն է վոռնոցով ու փալատակումներով: Այդ վայրկենական փայլերի և լույսի տակ նայում ենք իրար և որորում մեր գլուխները: Մեր դեմքերը դժգուշ են, և շրթունքները սեղմված:

Մեզանից լուրաքանչուրն զգում է, վոր ծանր ռումբերը քանդում են խրամատների լեզերքները, պատերը փուլ են գալիս, և բետոնե ծածկը ճաքճքվում: Մենք լսում ենք խուլ, կատաղի մի հարված, վոր նման է վայրենի գազանի թաթի հարվածին. դա ռումբն է. վոր ընկնում է խրամատները: Առավոտը մենք տեսնում ենք՝ վոր մի քանի նորակոչիկների լերեսի դուխը կանաչել է. նրանց սիրտը խառնում է նրանք դեռ շատ անփորձ են:

Մ. խրագույն լույսը դանդաղ թափանցում է խրամատների ներսը, և պայթյունների փայլերը ավելի դժգուշ են դառնում: Առավոտ է: Հիմա հրետանու կրակին խառնվում են ականների պայթյունները: Նրանք առաջ են բերում ամենախելահեղ ցնցում, վոր վարելի չե պատկերացնել: Ահտեղ, վորակը ընկնում են նրանք, վերածվում է «լեղբայրական գերեզմանի»:

Հերթափոխութունը դուրս է գալիս: Դիտողները լցվում են խրամատը, նրանք դողդողում են ցեխի մեջ կոլոված: Նրանցից մեկը լուռ պարկում է մի անկյուն և սկսում է ուտել, մի այլ լերկրալուռ պահ լաց լեղողի պես ցնցվում է: Նա լերկու՝ անգամ դուրս է շարավել խրամատի պատնեշից դենը՝ պայթյունի ուժով. բայց ազատվել է, միայն ջղախն ցնցում ստանալով:

Լավ է, վոր բոլորովին լուսացել է, գուցե հարձակում տեղի ունենա կեսօրին:

Կրակը չի հանդարտվում: Նա խփում է նաև մեր լետեր: Վոր-կրակը չի հանդարտվում է՝ ամենուրեք ցայտում են ցեխի և լերկաթե քան աչքը կորում է՝ ամենուրեք ցայտում են ցեխի և լերկաթե շատրվանները: Կրակի տակ է շատ ընդարձակ տարածություն:

Հարձակում դեռ չկա, բայց պայթյունները չեն դադարում: Մենք աստիճանաբար խլանում ենք: Գրեթե վոչ-վոք չի խոսում:

Միևնույն է՝ չի կարելի հասկանալ իրար:

Մեր խրամատը համարյա քանդված է: Շատ տեղերում նա հազիվ կես մետր բարձրութուն ունի, ամեն կողմ՝ ծածկեր, փոփոսեր և հողակոյտեր: Հենց մեր գիրքերի առաջ պայթում է մի ռումբ: Իսկույն մթնում է: Հողը ծածկել է մեզ մենք պետք է լինենք մեզ հանենք հողի տակից:

Մենք կարծես թե նստած ենք մեր սեփական գերեզմանում և ապաստում ենք, վոր հողով ծածկեն:

Հանկարծ արտասովոր դրդեցուն և կրակի փայլ: Բլինդաժը դող-
դողում է հիմքից՝ ընկնող ուռմբի հարվածի տակ, վոր բարեբախ-
տաբար թեթև է և չի կարողացել քանդել բետոնե ծածկոցը, լավում
մետաղալին սոսկալի մի հնչյուն, պատերը յերերում են, զենքերը
դես ու դեն են ընկնում, թռչում են սաղավարտները: հողը և ցեխը
և փոշին: Ծծմբահոտը թափանցում է մեր ապաստանը: Յեթե մենք
նստած լինեյինք վոչ թե ամուր բլինդաժի, այլ թեթև ծածկոցի
տակ, ապա մեզանից վոչ-վոք կենդանի չեր մնա: Սակայն այսբանն
ել բավական է:

Այժմ մեք նստած ենք կարծես խելահեղորեն դրդացող կաթ-
սայի մեջ. վորին խփում են ամեն կողմից:

Ելի մի գիշեր: Այժմ մենք արդեն բթացել ենք լարվածու-
թյունից: Այդ մահացու լարումը բուժ գանակի նման քերում է
մեր թիկունքը. մեր վոտներն արդեն չեն ուզում շարժվել ձեռ-
ները դողում են: Մենք ալիս կարծես միս և արյուն չունենք և
չենք կարող նայել իրար՝ ինչ վոր անհայտ բանի սարսափից: Մենք
ամուր սեղմում ենք շրթունքներս. սպասում ենք, գուցե անցնի, գու-
ցե անցնի և մենք ազատվենք...

— Վոր պատեր սզմին և վերաբերում այս հասվածը:

— Ի՞նչ հետևանքներ ունի պատերազմը (նկարագրիր ավյալ յերկրի
դրուժյունը ֆրոնտի լեռերը):

— Ի՞նչ հիշողություններ ունես համաշխարհային պատերազմից:

Բլինդաժ—ծածկոց:

ճրետանի—թնթանոթների խումբ:

ական—բոմբ, գինավիտ:

խելահեղ—խելքը կոբցրած:

սաղավարտ—պղնձի պիստոլ:

կաթսա—պղինձ:

յերերալ—շարժվել:

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս հոդվածից դուրս ընդ վերջակետի գործածության որինակներ և
գրիր տեսարակումը:

56. ՓԵՏՐՎԱՐՅ ԵՆ ՇԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1

1917 թվին, փետրվար ամսին, բանվորները, զինվորները և
գյուղացիները միացան և կործանեցին արյունոտ Նիկոլայի գահը:
Յարիզմի բազմազարյան լուծը խորտակվեց: Խախտվեցին նաև բուր-
ժուական հասարակարգի հիմքերը:

Նիկոլայից հետո պետական իշխանությունն անցավ գրամատե...

երին և նրանց հովանավարութունը վայելող սոցիալիստ-հեղափո-
խականներին (եռերներին) և մենշևիկներին:

Գյուղացիները շատ անգամ դիմեցին նոր նախարարներին, վո-
րոնց գլուխն անցավ շուտով եսերական ղեկավարներից մեկը՝ Կե-
րենսկին: Նրանք պահանջում էին այն հողերը, վորոնց վրա քըր-
տինք ելին թափել դարերից ի վեր: Գյուղացիներն այդ նպատա-
կով հատուկ պատվիրակներ ուղարկեցին Պետրոգրադ (այժմ Լե-
նինգրադ), բայց դրանից մեծ ոգուտ չստացվեց:

Կապիտալիստներն, ինչպես և պետք եր սպասել, գյուղացիե-
րի խնդիրներին ընդառաջ չգնացին: Ընդհակառակը՝ նրանք դուրդերն
ուղարկեցին զինված պատերի զորամասեր՝ գյուղացիներին սանձա-
հարելու, նրանց կողմից խլված ազայական հողերը չեռ վերցնելու
և կալվածատերերին վերադարձնելու համար:



Այն ժամանակվա կուսակցությունների մեջ միայն բայշևիկյան
կուսակցությունն էր, վոր հարցը դրեց լրջորեն, ուղղակի առանց
վորե յետին մտքի:

1917 թվին ապրիլին ընկ. Լենինն արտասահմանից վերադառ-
նալով՝ հայտարարեց, վոր Ռուսաստանը վորպես գյուղացիական
յերկիր, առաջին հերթին անպատճառ պիտի ազատվի այն կապանք-
ներից, վորոնցով կաշկանդված է լեզել գյուղացիական տնտեսու-
թյունը: Գյուղացիներն այդ կապանքներից ազատվելու համար հող
եղին պահանջում:

Բայլշեիկները պաշտպանում էին գյուղացիների պահանջը:

«Հողը պիտի անմիջապես վերցնել, — ասում էին նրանք, — բայց պիտի վերցնել կազմակերպված ձևով: Կալվածատիրական հարստութունները քարուքանդ չանել, իրենք չջարդոտել, շենքերը չհրդեհել, անասունները չոչնչացնել և այլն: Այնպես պիտի վարվել կալվածատիրական կալքերի հետ, վոր նրանց տնտեսության բոլոր արդյունքները կարելի լինի ոգտագործել»:

2

Համառուսական գյուղացիական առաջին համագումարում, 1917 թվի մայիսին, բայլշեիկները Լենինի զլխավորությամբ՝ այդ նույն միտքն էին անցկացնում:

1917 թվի ամսովա վերջերին գյուղացիական հուզումները կալվածատերերի դեմ ուժեղացան: Գյուղացիների համբերութունը հասավ: Նրանք Կերենսկու ժամանակավոր կառավարութունից հողային որենք սպասել այլևս չէին ցանկանում:

Շարժումը գնալով սաստկացավ և կատաղի ընթացքով ծավալվեց ամբողջ յերկրում:

Կալվածատերերի ագարակներն սկսվեցին այրվել:

Տերերը դուրս փախան իրենց հին բներից... վախեցավ նաև վաշխառուների դասը:

Գյուղացիները ժողովներում նտրում էին կոմիտեներ՝ կալվածատերերից թողած հողերը կարգավորելու, անասուններին և իրերին հսկելու համար:

Բայլշեիկյան կուսակցութունը, վորին պաշտպանում էր Պետրոգրադի բանվորների և զինվորների խիտ բազմութունը, գործով ցույց տվեց, վոր ինքը միայն պիտի պաշտպանի աղքատ գյուղացիների և բոլոր աշխատավորների շահերը: Բացի հողային հարցից, նույն այդ կուսակցութունը պահանջում էր, վոր գերմանացիների դեմ մղվող պատերազմը դադարեցվի, իսկ այդ առաջարկին դեմ էին պատերազմի պատճառով հարստացած մինիստրները: Միայն բայլշեիկներն էին ասում, վոր պիտի վերջացնել պատերազմը, ապա թե վոչ՝ Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները կոչնչացնան սովից ու սրտից, վորովհետև ապրուստի վերջին աղբյուրները գեմ մղվող պատերազմը դադարեցվի, իսկ այդ առաջարկին դեմ էին պատերազմի պատճառով հարստացած մինիստրները: Միայն բայլշեիկներն էին ասում, վոր պիտի վերջացնել պատերազմը, ապա թե վոչ՝ Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները կոչնչացնան սովից ու սրտից, վորովհետև ապրուստի վերջին աղբյուրները գեմ մղվող պատերազմը դադարեցվի, իսկ այդ առաջարկին դեմ էին պատերազմի պատճառով հարստացած մինիստրները:

Այս խոսքերի համար Կերենսկու ժամանակավոր կառավարութունը մտադրվեց գեներով վոչնչացնել բայլշեիկներին: Նրանցից շատերին բանտարկեցին, բայլշեիկյան «Պրավդա» լրագրի խմբագրութունը քարուքանդ արին և այլն: Բանվոր դասի առաջնորդները

ընկ. Լենինը և ուրիշները ստիպված էին թագնվել Պետրոգրադի շրջակայքում, բանվորների մոտ, պահվել տանիքների տակ կամ խոտի դեզի մեջ:

3

Ժողովրդի զայրույթը գնալով սպառնալից էր դառնում:

Ամբողջ յերկրում հետևյալ աղաղակներն էին լսվում:

— Կորչի պատերազմը:

— Հողը ժողովրդին:

— Կորչի կապիտալիստների և կալվածատերերի իշխանութունը:

— Ամբողջ իշխանութունը խորհուրդներին:

Աշխատավոր Ռուսաստանը վոտքի յեր կանգնում հզոր թափով: Բայլշեիկների կոչերը ժողովրդի մեջ ուրախագին արձագանք էին գտնում:

— Զենք առեք, ընկերներ, — կանչում էին նրանք:

— Հզոր ձեռքերով ընդմիշտ տապալենք բռնակալներին...

Լոկ մենք՝ ձորտեր ու բանվորներ,

ունենք անխախտ մի իրավունք —

ասել՝ վոր հողը մերն է, մերն է...

Կորչի թող հարուստը տղրուկ...

— Ասում էին բանվորները գյուղացիներին:

Հոկտեմբերի 25-ին Պետրոգրադում բանվորներն ու զինվորներն առաջ բերին աշխարհում չեղած մի հեղաշրջում: Արտաքսեցին և բանտարկեցին դրամատեր նախարարներին ու նրանց բարեկամ եսերներին և մենշեիկներին ու հաստատեցին իրենց իշխանութունը — «խորհուրդների իշխանութուն», «Բանվորների և գյուղացիների իշխանութուն»:

Այսպես ահա Փետրվարյան հեղափոխութունը դարձավ Հոկտեմբերյան մեծ, փառավոր հեղափոխութուն:

— Ինչպիսի՞ հեղափոխութուն տեղի ունեցավ 1917 թվի փետրվարին:

— Ովքե՞ր կանգնեցին իշխանության զլուխ և ինչպե՞ս վարվեցին նրանք բանվորների ու գյուղացիների հետ:

— Ովքե՞ր հանդիսացան բանվոր-գյուղացիական մասսաների իսկական բարեկամներ: Ով էր նրանց առաջնորդում:

— Պատմեցե՞ք ձեր հուշերը Փետր. հեղափոխության որերից:

— Ի՞նչ արձագանք ունեցավ այդ հեղափոխութունը ձե՞ր գավառում, շրջանում, գյուղում:

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱՊՐՈԹՅՈՒՆՆԵՐ

Այս հոդվածից արտագրվել է ահա լաոերն, վորոնց վրա կա շեշտ:

57. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՔՍԱՆՀԻՆԳԸ

Զինվորները շղթա կազմած՝ ժամե-ժամ ավելի ու ավելի մոտենում էին Զմեռային պալատի հրապարակին։ Նրանց շարքերն ավելի ու ավելի խտանում էին։ Ժամը 6-ի մոտ՝ պալատը շրջապատված էր։

Իրար հետևից վազելով՝ նրանք հաջորդաբար գնում, բռնում էին փողոցների բոլոր հարմար անկյունները՝ Զմեռային պալատի վրա գրոհ տալու համար։

Յուսակները դիրք բռնելով փայտերի յետեր, պալատի դռների մոտ աչալուրջ հետևում էին մեր առաջավոր շղթաներին և սրանց ամեն մի շարժման վրա կրակում էին հրացաններից ու գնդացիներից։

Ամենքը լարված սպասում էին գրոհի մեծ րոպեին...

Ժամը յերեքին ժամանակավոր կառավարութան ղրությունն անհուսալի չեր... Արգեն յերկաթուղիների բոլոր կայարանները, հեռախոսը, հեռագրատունը, էլեկտրական կայարանը, ջրանցքը գրտնվում էին մեր ձեռքում...

Միջանի ակնթարթ...

Յեվ Պետրոգրադի փողոցներում փրոտացին թնդանոթները, բայց փոշ ժողովրդի դեմ, այլ ժողովրդի համար։

Մի քանի հրանոթներ պայթեցին Զմեռային պալատի միջանցքներում։ Տատանումներին վերջ եր տրված։ Նավաստիները, կարմիր-գվարդիականները, զինվորները՝ գնդացիության խաչաձև կրակի տակ՝ թռչում էին Զմեռային պալատի առջև շինված բարրիկադների վրայով, տապալում էին նրանց պաշտպաններին և ներս խուժում պալատի բակի դռներից... Բակը գրավված է... Վեր են վազում սանդուղքներով... Աստիճանների վրա ընդհարվում են յուսակները հետ... Տապալում են նրանց... Բարձրանում են յերկրորդ հարկը... Սրբում են կառավարութան պաշտպաններին... Վազում են յեր-

րորդ հարկն՝ ամեն տեղ տապալելով իրենց ճանապարհին պատահող յուսակներին... Յուսակները գցում էին գնդերը... Զինվորները, կարմիր-գվարդիականները, նավաստիները հեղեղի պես վազում էին առաջ... Վորոնում էին աղետների հեղինակներին։ Ջարդում էին փակ սենյակների դռները... ահա վազում են նրանք դեպի մի դուռ, վորի մոտ պահապան են կանգնած սարսափից քարացած, պարտաճանաչ յուսակները։

— Սյուսեղ ժամանակավոր կառավարությունն է։

Սվինները դեմ են անում։

— Կորիւր...

Մասսաները ներս են խուժում սենյակը։ Նրանց մեջ է ընկ. Անտոնովը։ Այն, ինչ վոր անվանվում եր ժամանակավոր կառավարություն, այնտեղ է... գրեթե մեռած ֆիզիքապես։

— Պետրոգրադի Սորհրդի Ռազմա Հեղափոխական Կոմիտեի անունից հայտարարում եմ ժամանակավոր կառավարությունը տապալված, — հայտարարում ե Անտոնովը։ — Բոլորդ ձերբակալված եք...

Տապալվածները թոթովանքով խնդրում են, վոր իրենց պաշտպանեն մասսաներից... Նավաստիները դուրս են տանում նրանց սենյակից։ Աղաղակներ... Տեք մեզ Կերենսկուն... Կերենսկուն... Նափախել ե Պետրոգրադից, վորպեսզի ռազմաճակատից գործեր բերի։

Միջանցքները թնդում են հուզմունքի, գայլուլթի, կատաղության աղաղակներից... Ձերբակալվածներին տանում են ներքև... բակը... անց են կացնում դռներով... բարրիկադների վրայով... դեպի պալատի հրապարակը...

Հրապարակում զինվորների գայլուլթի աղաղակներ են լսվում... «Գնդակահարել... մահ... մահ»։ Տերեշչենկոյին, Կոնովալովին, և ուրիշ մի յերկսին միջանի հարված են տալիս... Կարմիր-գվարդիականներն հորդորում են զինվորներին։ Ղեկավարներն աղաղակում են. «Մի մթապնեք պրոլետարական հաղթանակը»... Կատաղած զինեհն. «Մի մթապնեք պրոլետարական հաղթանակը»... Կարմիր-գվարդիականները լեռ են բաշվում ձերբակալվածներից։ Կարմիր-գվարդիականներն ողակում են նախկին կառավարությունը։ «Հառաջ»։ — Ողակն առաջ շարժվեց Միլիտենայա փողոցով դեպի Պետրոպոլսկի բերդը։ Տանում են հեղափոխության դեմ ստեղծված նկուղները։

Զինվորներին հրամայվում ե շարվել և վերադառնալ իրենց զորամասերը։ Դրանով ել վերջանում ե հաղթական հոկտեմբերի 25-ը։

- Ուլքեր ելին պաշտպանում ժամանակավոր կառավարութիւնը:
- Ի՞նչպէս են գրավում Չմեռային պալատը:
- Հոկտեմբերի քսանինգով ի՞նչ նոր շրջան ե սկսվում պատմութիւն մեջ:
- Ուլքեր ելին ղեկավարում այդ հեղափոխութիւնը:
- Ուլ եր նրանց ղեկավարը: Ի՞նչ գիտեք նրա մասին:
- Հոկտեմբերյան հեղափոխութիւն հաղթանակից հետո ի՞նչ իշխանութիւն հաստատվեց մեզ մոտ Հայաստանում: Ինչո՞ւ:
- Յերբ կատարվեց Հայաստանի Հոկտեմբերը:

գրոհ—միասին հարձակում.
յունկեր—ցարական զինվորա-
կան դպրոցի սովորող.
աչալուրջ—արթուն.
հրանոթ—թնդանոթ, հրազեն.

աղետ—դժբախտութիւն.
փիզիկական—մարմնական.
հորդորել—քաջալերել.
նկուղ—պաղպաղ.

ԿԱՐԴԱՆ.

Ուլքերը—«Ռադմի որեր», գինը 20 կոպեկ:



58. Վ. Ի. ԼԵՆԻՆ

1

Վլադիմիր Իլիչ Ուլյանովը (Լենին) ծնվել է 1870 թվին Սիմ-
բիրսկ քաղաքում: Նրա հայրը լեզիլ է Սիմբիրսկի նահանգի ժողո-
վրդական դպրոցների տեսուչ:

Յերբ Վլադիմիր Իլիչը վերջացրեց գիմնազիան, Ուլյանովի ըն-
տանիքին մի դժբախտութիւն պատահեց: 1887 թ. ցարական կա-
ռավարութիւնը Վ. Իլիչի ավագ յեղբայր Ալեքսանդրին, վոր Պե-
ռավարութիւնը Վ. Իլիչի ավագ յեղբայր Ալեքսանդրին, վոր Պե-
տերբուրգի համալսարանի ուսանող էր՝ դատապարտեց մահվան:
Ալեքսանդրը մի խումբ տերրորիստների գլուխ անցած՝ 1887 թ.
մարտի 1-ին Ալեքսանդր III ցարի վրա ուռմբ նետելու փորձ էր
կատարել:

Վլադիմիր Իլիչը Կարլ Մարքսի հետ ծանոթացավ իր յեղբոր՝
Ալեքսանդրի շնորհիվ, յերբ դեռ վերջինս գիմնազիայում սովորում
էր: Ալեքսանդրը փոքր լեզբոր հետ շատ էր խոսում Կարլ Մարքսի
ուսմունքի մասին:

Յեղբոր մահը խորապէս ազդեց Վլադիմիր Իլիչի վրա: Նա
հաստատ վճռեց մտնել ուսւ ժողովրդի և բոլոր աշխատավորների
համար կովողների շարքերը: Մայրաքաղաքների համալսարանները
Վլադիմիր Իլիչի համար փակ ելին, վորովհետեւ նա մահապատժի

Վենթարկված տերրորիստի լեղբայրն էր: Նա 1887 թվին մտնում է
Կազանի համալսարանը, փորպես իրավաբանական բաժնի ուսանող:

2

Շուտով ուսանկան բոլոր համալսարաններում և մասնավորա-
պես Կազանի համալսարանում սկսվում են շարժումներ:

Համալսարանի վարչությունը հեռացնում է մոտ 40 ուսանող,
նրանց թվում նաև Վլադիմիր Իլյինին:

Համալսարանից հեռացվելուց հետո, յերիտասարդ Ուլյանովը
մտնում է հեղափոխականների գաղտնի միություն մեջ, փոր կոչ-
վում էր «Բանվոր դասակարգի ազատության պայքարի միություն»:
Իշխանությունը հալածում էր Իլյինին ու նրա ընկերներին: Նրանց
բանտ են գցում և ապա ուղարկում Սիբիր: Սիբիրից Վ. Իլյինը
փախչում է արտասահման:

1903 թվին արտասահմանում կայանում է սոցիալ-դեմոկրա-
տական կուսակցության լեհերից համագումարը: Այդ համագումար-
ից սկսած կուսակցությունը բաժանվում է լեհերու մասի՝ բալլանիկ
և մենշևիկ: Մենշևիկներն ասում են, փոր ցարին կարելի չէ տապա-
լել միայն բուրժուաների հետ միանալով: Վլադիմիր Իլյինն ու բալլ-
անիկները պնդում են, փոր ցարի դեմ կարող է կռվել բանվոր դա-
սակարգը՝ միացած ազգատ գյուղացիության հետ:

1905 թվին Ռուսաստանում տեղի չէ ունենում զինված ապրո-
տամբություն և հեղափոխություն: Այդ գործում մեծ մասնակցու-
թյուն է ցույց տալիս Վլադիմիր Իլյինը: Ցարական կառավարու-
թյունը ճնշում է հեղափոխությունը: Վլադիմիր Իլյինը նորից փախ-
չում է արտասահման և ախտեղ ապրում է կեղծ անցազրույթ:

Բաց բանվորական շարժումը չի մեռնում: Վլադիմիր Իլյինը
դեկավարում է բանվորներին «Պրավդա» լրագրի միջոցով, ուր նա
տեղավորում էր իր հոգվածները, ուղարկելով Ռուսաստան՝ սահմա-
նից վոչ-հեռու գտնվող Կրակով քաղաքից:

3

1914 թվին սկսում է համաշխարհային պատերազմը: Վլադի-
միր Իլյինը Ռուսաստանի և ամբողջ աշխարհի բանվորներին բա-
ցատրում է այդ պատերազմի նշանակությունը: Դեռ պատերազմի
սկզբից նա հասկացնում է, թե պատերազմի պատճառը բուրժուա-
զիան է և թե բանվորներն ու գյուղացիները պետք է հեղափոխու-
թյուն անեն բուրժուազիայի դեմ: Յեվ իսկապես:

Պատերազմի հետևանքները, սովոր առաջ են բերում ժողովրդ-
դական ապստամբություն: Ժողովուրդը զանրևիկեց է անում ցարին
1917 թվին փետրվարին: Սակայն ցարի տապալումից հետո իշխա-
նությունը միառժամանակ անցնում է բուրժուազիայի ձեռքը, փո-
րոշում են պատերազմը շարունակել:

Վլադիմիր Իլյինն այդ միջոցին արտասահմանում էր գտնվում:
Նա շտապում է Ռուսաստան և պայքար է սկսում բուրժուազիայի
դեմ:

Հուլիսին Պետրոգրադում բռնկվող ապստամբությունը ճնշվում
է բուրժուական կառավարության կողմից: Վորից հետո Վլադիմիր
Իլյինն ստիպված է լինում գաղտնի ապրել, փորովհետև նրան ու-
գում են բռնել և մյուս բալլանիկ ընկերների հետ սպանել:

1917 թվի հոկտեմբերին բանվորներն ու գյուղացիները Լենինի
դեկավարությամբ ապստամբում են բուրժուական կառավարու-
թյան դեմ, ձեռք են առնում իշխանությունը և կազմում են կառավա-
րություն՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդ անունով, փորի
նախագահն է ընտրվում Վլադիմիր Իլյին Լենինը (Ուլյանով):

Խորհրդային իշխանության պայքարի ամբողջ ընթացքում Վլա-
դիմիր Իլյինն ամուր կանգնած էր հեղափոխության առաջնորդի
կոչման բարձրության վրա, ամեն բույս լենինական իրեն մահա-
ցու փառանքների:

Բանտը, Սիբիրը և, փոր գլխավորն է, ամենորյա ծանր աշխա-
տանքը բալլանիցին Վլադիմիր Իլյին Լենինի ուժեղ առողջությունը:
Չափից դուրս հոգնածության հետևանքով նրա ուղեղը հիվանդա-
ցավ, իսկ աջ ձեռքն ու փորը այլևս չէին գործում: Ծանր հիվան-
դության պատճառով նա խոսել իսկ չէր կարողանում:

Վլադիմիր Իլյինը մեռավ 54 տարեկան հասակում՝ 1924 թվին
հունվարի 21-ին: Նրան դրեցին կարմիր դազադում, Գորկա գյուղից
փոխադրեցին Խորհրդային Միության մայրաքաղաք՝ Մոսկվա, ուր
և թաղեցին Կարմիր հրապարակում:

- Նկարագրեցեք Լենինի կյանքը նրա ուսանողության ժամանակ:
- Ի՞նչ դիրք բռնեց Լենինը պատերազմի հանդեպ: Ովքեր վերջ տվին
պատերազմին և ի՞նչպես: Այս մասին Լենինն առաջուց խոսել էր:
- Ի՞նչ յեղավ Լենինի դեղը հոկտեմբերյան հեղափոխության մեջ:
- Ի՞նչ ժառանգություն թողեց Լենինը պրոլետարիատին:

զանրևիկեց — գահից գցելը:

անցազիր — պատարտ:

տերրորիստ — ահաբեկիչ, տերրոր

կատարող:

իրավաբանական բաժին — դատա-

պաշտպաններ պատրաստող բաժին:

ԿԱՐԴԱՆ

Լենինի կենսագրությունը:

(Բազմիկի կոմունան)

Տիրում էր ծանր ռեակցիա: Բագուն ապրում էր դժվար ուրեր: Բագուն պաշարված էր թշնամիներով: Ներսիս գործում էլին դավաճան ձեռները: Մուսավաթներ, դաշնակներ, եսերներ և մեն-
ջիկներ:

Շուտով ափ չեւով անգլիական մի զորախումբ, բարձրացան նաև սպիտակ բանակներ: Բարձրացան, շուրջկալեցին Բագուն, և տեղի ունեցավ վճռական կռիվ:

Անհավասար կռիւում, պրոլետարական Ռուսաստանից կտրված, ընկավ Բազվի հերոսական կոմունան: Վրեժխնդիր թշնամին ժամանակավորապես հաղթեց Բազվի հերոս պրոլետարիատին, ընկճեց հեղափոխական ջոկատներին, բանտարկեց 27 կոմունիստ ղեկավարներին, իսկ մի մոլթ իրիկուն՝ խորդախորեն նրանց նավ նրստեցրեց: Նավը կասպիական պղտոր ջրերի վրայով տարավ նրանց-- Բսանվեցին, Բազվի կոմունայի հերոս մարտիկներին:

— Մենք զեռ կզանք, — կանչեց նա, կոմունայի սիրտն ու հոգին՝ Սա. Շահումյանը, — չեմք նալը քաշեց շղթան ափից և տվեց փերջին հրաժեշտը:

Հետո վրեժը սարքեց իր խնջուկը:

Գողի նման շարժվեց ափագնեբրի միջով: Նա մի մուլթ գիշեր
վանդ առավ անապատում: Վագոններից իջան խորհրդավոր ստվերներ:

Միեւնում պսպղացին գլշատիչ աչքեր, գազանաւան դեմքեր:

Դեհստերվիլը տվեց հրաման: Կասկածամիտ և մուլթ ստվերներ շարժվեցին, և իսկույն համազարկեր վորոտացին: Ու ընկան նրանք՝ Շահումյան, Զափարիձե, Ազիզբեկով, Ֆիալետով և ուրիշներ...

Ընկան քսանվեց կոմունարները, սակայն անապատի ավազների
միջից լսվում էին զոդզոջ ձայներ:

«Մենք մեռնում ենք, բայց դեռ կգանք» ..

Ընկան նրանք Ախշա-Կույմա կալարանում... Դեղին ավազը ծածկեց նրանց... սակայն ծածկեց ուր պահ ուիայն...

Վրա հասան ուրիշ որեր: Նրանց հետքով, նրանց շնչով, նրանց ար-
յան վրեժի հեքով վե՛ր-վե՛ր յեկան նոր հազարներ, նոր միլիոններ ու
արշավեցին հողմերի հետ՝ հիմնահատակ անելու հին կյանքը: Տապալեցին
բռնությունը և բարձրացրին կոմունայի ընկած զրոշակը, զրավեցին
Բագուն և միոջ Անդրկովկասը:

Նրանք մեռան, բայց չկորան,—նրանք ապրում են ամենուրյա
մեր պալլարում, նրանք հիմքն են մեր նոր կյանքի, և այդ հիմքի
վրա ալսոր, կառուցվում է սոցիալիզմի շենքը:

— Ի՞նչ նշանակութիւն ունի Բագրի կոմունան Անդրկովկասի խորհրդայնացման համար:

— Ի՞նչ ուժեր եկին ծառայած կոմունալի դեմ, և ո՞վ եր թեկադրում
 նրանց իր կամքը:

— Ե՞լ ինչ կարող ես ասել իմպերիալիստների միջոցով մեր չերկրում գործված վրճարների և նրանց վարած քաղաքականության մասին:

— Ո՞վ է իրագործում Քսանկեցի թողած պատգամները և ի՞նչպես:

Դեհատերվիլ—անգլիական զորքի զնդապետն ռեակցիա—յետագիմուլթյուն,
եր Բաղվում. դարձ զեպի հին կարգերը:

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրիր մի փոքրիկ զեկուցում Քսանիկի կոմունարների գործունեության
և սպանություն մասին:

60. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ը

Նոյեմբերի 29-ից սկսվում է Խորհրդային Հայաստանի պատ-
մութիւնը:

Մինչև այդ որը Հայաստանում իշխանութիւնը պատկանում էր հայ բուրժուազիային և այդ բուրժուազիայի ուղղման կազմակերպութեան՝ Դանիակցութեանը:

Դաշնակցական այդ Հայաստանում բանվորներն ու գյուղացիները կատարում էին լոկ «Թնդանոթային մսի» դեր, Նրանք վոչ մի ձախ չունեին ցերկրում: Կենտրոնական կառավարություն մեջ իշխում էին դաշնակցական բյուրոյի կողմից նշանակված խմբապետները և խմբապետական հրապարակախոսները, իսկ զավառներում և գյուղերում ել միանման դաշնակցական կոմիտարները: «Դեմոկրատիայի» անունից խոսող հայ նացիոնալիստներն ավելորդ էին համարել նույնիսկ ստեղծել «Քաղաքային» ինքնավարություն կամ գյուղական խորհուրդներ: Նրանց շատ լավ եր հայտնի այն, վոր ամեն դեպքում խորհուրդները որդան, վորքան ել այն սահմանափակ լինի, մի այդպիսի ինքնավար ուրդան, վորքան ել այն սահմանափակ լինի, դարձյալ իր գործունեություն ընթացքում՝ աշխատավոր մասսայի ազդեցություն տակ՝ պիտի կանգնի հայ բուրժուազիայի դիկտատու դալի դեմ:

Իսկ ժողովրդական աշխատավոր խավել է և իր անասունները չուսնե
արդեն պարզ եր ու վորոշ:

Յերբ կարմիր զորքերը Դադստան մասն՝ Բազմի բանվորներն զգացին իրենց մոտակա ազատագրումը: 1920 թ. ապրիլին Բազմի բանվորներն՝ ներկայացնելով մոտավաթական կառավարութան մի շարք պահանջներ և չստանալով վոչ մի ղեկում՝ ապստամբում են մոտավաթականների դեմ և ապրիլի 28-ին իշխանությունը վերցնում են իրենց ձեռքը: Իրենց հաղթանակն ամրապնդելու համար նրանք հրավիրում են Կարմիր բանակին, վորի առաջավոր զորամասերն ապրիլի 28-ի առավոտյան մտնում են Բազում:

Կարմիր բանակի Բազում մտնելը դուր չի գալիս մենշևիկյան Վրաստանին և դաշնակցական Հայաստանին: Նրանք թշնամական վերաբերմունք են ցույց տալիս դեպի Կարմիր բանակը և աշխատում են թուլացնել նրա ուժը:

Դաշնակցական բանակն սկսում է Զանգեզուրում գտնվող Կարմիր զորամասերի դեմ հարձակումներ գործել, բայց ստանում է իր հարկավոր պատասխանը:

1920 թ.ի նոյեմբերի 29-ին Հայաստանի աշխատավորությունն ապստամբում է և 11-րդ Կարմիր բանակի ոգնությամբ չեղրից դուրս է քշում դաշնակցներին, տապալում նրանց իշխանությունը, հաստատելով իր չեղրում խորհուրդներ:

Անուհետև շարժվում է Վրաստանը: Լոռու և Բորչալուի գյուղացիությունն ապստամբության դրոշ է բարձրացնում, կարմիր զորամասերն ոգնության են հասնում ապստամբ աշխատավորությանը: Մենշևիկներն իրենց վերջին ճիգն ելին թափում բայց իզուր:

1921 թ.ի փետրվարի 25-ին Թիֆլիսի վրա ծածկվում է Կարմիր դրոշակը, և Վրաստանը հայտարարվում է Խորհրդային: Իսկ 1922 թ.ին, այս չեղք լեղբարական հանրապետությունները միանում են և կազմում Անդրկովկասի՝ մեր պանծալի Փեղերացիան, վորն այժմ դարձել է քաղաքական, տնտեսական և կուլտուրական մի պողպատե միասնություն և մտնելով Խ. Ս. Հ. Միության կազմի՝ եջ՝ մյուս հանրապետությունների հետ ձեռք-ձեռքի տված միահամուռ ուժերով գնում է դեպի սոցիալիզմ:

- Ի՞նչ վիճակում են գտնվում Անդրկովկասը խորհրդայնացումից առաջ,
- Նկարագրիր այդ շրջանից քո տեսածներն ու հիշածները:
- Ցույց տուր Անդրկովկասյան ֆեոդոսիայի հետագա զարգացումը:

ԱՌԱՋԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս յեթնամասի հոգվածների հիման վրա կազմիր զեկուցում. պատասխանելով հ տեղյակ հարցի ինքն.

1. Ի՞նչ կազմակերպութուն են ղեկավարում Հոկտեմբերը:
2. Յե՞րբ ծալո առան քաղաքացիական կռիվները: Ո՞ւմ ունում թյամբ ելին կռվում հակահեղափոխականները ուսական պրոլետարիատի դեմ:
3. Յերբ խորհրդայնացավ Անդրկովկասը և ի՞նչ պայմաններում:

Գ. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

63. Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային հանրապետությունների մեծ Միության մեջ ապրում են մոտ հարյուր ազգություններ՝ ռուս, բելառուս, ուկրաինացի, թաթար՝ ուզբեկ, վրացի, թուրք, հայ, բաշկիր, ուզի, լեզգի, հրեա և այլն և այլն:

Ցարի կառավարությունը ճնշում էր ռուս բանվորներին ու գյուղացիներին. բայց ավելի շատ ճնշում էր այլազգի աշխատավորներին: Նա աշխատում էր խավարի ու տգիտության մեջ պահել Ռուսաստանի փոքր ազգություններին. արգելում էր նրանց դպրոց ունենալ իրենց մայրենի լեզվով և փակում էր ռուսական դպրոցների դռները նրանց առաջ:

Ցարական շինովնիկները թալանում ելին փոքր ազգություններին՝ զանազան հարկերի միջոցով: Լավագույն հոգերը բռնի ուժով խլում ելին ոտարագրի գյուղացիներին:

Արդյունաբերողներ ու առևտրականները քամում ելին ազգաբնակչության անտեսությունը, վորպեսզի ավելի հեշտությամբ կարողանան նրանց ստրկական հպատակության մեջ պահել:

Ցարական իշխանությունը դաժան խստությամբ հալածում էր բոլոր նրանց, ովքեր կռվում ելին իրենց ժողովրդի ազատագրության համար: Հազարավոր լեհեր, հայեր, վրացիներ, հրեաներ, թուրքեր, տառապում ելին բանտերում և աքսորներում ու կախազան հանվում:

Բայց ահա լեկավ Հոկտեմբերը: Ցարի, կալվածատերերի և կապիտալիստների իշխանությունը տապալվեց: Ճնշված ազգերն ապստամբութուն ստացան: Նրանք իրավունք ստացան, իրենց կյանքը զատություն ստացան: Երանք իրավունք են ուզում:

Միության բոլոր ժողովուրդներն ինքուրույն կերպով տնտեսվորվեցին աշխատանքի, ինչպես իրենք են ուզում:

Միության բոլոր ժողովուրդներն ինքուրույն կերպով տնտեսվորվեցին աշխատանքի, ինչպես իրենք են ուզում:

Խորհրդային իշխանությունն ամեն կերպ ոգնում է հետաքննադատել թե՛ արդյունաբերության ու գյուղատնտեսության, և թե՛ կուլտուրական ասպարիզում:

Յեղբայրական համերաշխ գործակցություն հողի վրա աճում է բարձրանում է և որեցով հզոր թափով ամրանում է հայրուրավոր ազգությունների միասնական ընտանիքը՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը:

- Ի՞նչ ազգեր գիտես Խ. Միության մեջ:
- Ի՞նչպես եր փոքր ազգերի դրությունը ցարի ժամանակ և ի՞նչպես է հիմա:
- Մշակիր այդ հարցերի պատասխանը և գրի առ:

այլազգի—ստորազգի
բռնի ուժով—զտով
դաժան—անսիրտ.

64. ԽՍՀՄ ԿԱԶՄԸ

ԽՍՀՄ մեջ մտնում են հետևյալ 6 հանրապետությունները.


1. Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը—ՌՍՖՍՀ: Գլխավոր քաղաքն է Մոսկվա:
2. Ուկրաինայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը—ՈւՍՍՀ: Գլխավոր քաղաքն է՝ Խարկով:
3. Բելորուսիայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը—ԲՍՍՀ: Գլխավոր քաղաքն է՝ Մինսկ:
4. Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը—ԱՍՖՍՀ: Գլխավոր քաղաքն է՝ Թիֆլիս:
5. Ուղբեկստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը—ՈՒԶՍՀ: Գլխավոր քաղաքն է՝ Սամարղանդ:
6. Թուրքմենստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը—ԹՍՍՀ: Գլխավոր քաղաքն է՝ Ասխաբադ:

ՌՍՖՍՀ-ում մտնում են 11 ինքնավար հանրապետություններ և 13 ինքնավար շրջաններ: Դրա համար է նա կոչվում ֆեդերատիվ (ֆեդերացիա նշանակում է դաշնակցություն՝ դաշնակցային կապերով իրար հետ կապված):

Անդր. ՍՖՍՀ-ում մտնում են Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը:

— Քարտեզի վրա ցույց տուր ԽՍՀՄ, նրա մեջ մտնող հանրապետությունների գլխավոր քաղաքները:

— Ցույց տուր Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը իրենց գլխավոր քաղաքներով:



ԲՆՑ ՄԱՍՈՒՅՑ ԵՎԱԶՍԻՎՈՒՄ
Խ.Ս.Հ.Մ.

Դ. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՄԵՐ ՅԵՐԿԻՐ
ԱՐԹՈՒՆ ՊԱՀԱԿՆ Ե

65. ԿԼԻՄ ՎՈՐՈՇԻՆՈՎԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Վորոշիլովը մեր կուսակցության լավագույն կառուցողներից ու ղեկավարներից մեկն է: Վորոշիլովը զործարանային կաթսայի բովում կոփվելով, բազմիցս բանտարկվելով ու աքսորվելով ցարիզմի կողմից, միշտ ել կանգնած է չեղել պայքարը ղիրքերում, աննկուն մարտնչել է բայլշևիկյան կուսակցության ամրացման, ցարիզմի ու կապիտալիզմի տապալման ու պրոլետարիան հեղափոխության հաղթանակի համար: Հոկտեմբերից հետո ընկ. Վորոշիլովը հանդիսացել է Կարմիր բանակի հերոս մարտիկներից ու լավագույն կազմակերպիչներից մեկը: Ընկ. Ֆրոնգելի մահվանից հետո, զլխավորելով Կարմիր բանակը, նա հսկայական բեղմնավոր աշխատանք է կատարել նրա տեխնիկական հզորությունն ու մարտունակությունը բարձրացնելու համար:

Իր կյանքի կեսից ավելին, քսանյոթ տարի շարունակ գտնվելով բայլշևիկյան կուսակցության շարքերում, նա չի բեք չի տա տանվել, չի բեք չի շեղվել Լենինի ճանապարհից և միշտ ամենաանողորս պայքար է մղել բոլոր հակալենինյան թեքումների դեմ:

Ընկ. Վորոշիլովը անհաշտ ու անշեղ պայքարել է ամբողջ կուսակցության և ընկ. Ստալինի զլխավորած Լենինյան կենտկոմի հետ միասին բոլոր տեսակի թեքումների դեմ:

Մենք հասել ենք վճռական հաջողությունների սոցիալիստական շինարարության ասպարիզում, և վերջին ու վճռական մարտերն են ծավալվում կապիտալիզմի մնացորդների դեմ մեր չերկրի ներսում: Այդ հաջողություններին զուգընթաց, սխտեմատիկորեն առաջ է տարվել սոցիալիստական շինարարության արթուն պահակի՝ Կարմիր բանակի ամրացումն ու հզորացումը, վորը կատարվել է ընկ. Վորոշիլովի անմիջական ղեկավարությամբ:

Յեվ այժմ, լերը սոցիալիզմի բուռն վերելքը մեզ մոտ դառնում է կապիտալիզմի մահը և միջազգային հեղափոխությունն արագացնող վճռական մի ֆակտոր, առավել ևս մեծանում է Կարմիր բանակի դերն ու նրա ճիշտ բայլշևիկյան ղեկավարման նշանակությունը: Ուրի վրա ավելի ուժեղ թափ են ստանում միջազգային իմպերիալիզմն ու հատկապես ֆրանսիական բուրժուազիայի զլխավորած ապամական բոլոր պատերազմական պատրաստությունները ԽՍՀՄ դեմ:

Հակախորհրդային պատերազմի գոտիում ներկայումս ավելի սուր է քան լերբեկցե: Յեվ, յեթե իմպերիալիստները մինչև վերջը հասցնեն իրենց ղիվային պլանները—ապա Կարմիր բանակը նորից առիթ կունենա ապացուցելու, վոր ինքն իրապես համաշխարհային պրոլետարիատի բանակն է: Թուգանությունների վորոտը մեր սանձանների վրա պետք է դառնա համաշխարհային Հոկտեմբերի հուժկու ազդանշանը: Յեթե մեզ վրա հարձակվեն, Կարմիր բանակը բավականաչափ ուժեղ կգտնվի, պաշտպանությունից անցնելու հարձակման, ոգնություն ձեռք մեկնելով միջազգային կապիտալի արյունոտ ռեժիմի դեմ ծառացող բանվորներին և աշխատավոր գյուղացիներին:

Ի՞նչ դեր է կատարել կլիմ Վորոշիլովը բայլշևիկների կուսակցության և Կարմիր բանակի համար:

— Ի՞նչ ճանապարհներով և պայքարով և կոփվել և ամրացել Կարմիր բանակը և այժմ ի՞նչ ուժ է ներկայացնում նա:

— Ի՞նչ դավեր են լարվում և ի՞նչ է պատրաստվում և. Միություն դեմ: Ի՞նչ:

— Կարմիր բանակը բավականաչափ ուժ ունի՝ պաշտպանելու մեր սոցիալիստական հայրենիքը:

— Բացի Կարմիր բանակից հասարակական ի՞նչ կազմակերպություններ գիտես, վորոնք ամրացնում են յերկրի պաշտպանությունը:

— Ի՞նչպես է ղրված այդ կազմակերպության բջի աշխատանքը ձեզ մոտ:

Յեթե Պաշտպանության մեղադրանքներ անդամազրկի անպահանջ:

66. ԶԱՊԱՅԵՎ

Զապայեվն աղքատ գյուղացու զավակ էր, շարքային ղինվոր ցարական բանակում: Նա Կարմիր բանակում դարձավ 25-րդ Կարմիր դրոշ ղիվիզիայի հրամանատար:

Մինչև հեղափոխությունը նա անդրադետ էր: Բայց հենց վոր կարգալ-գրել սովորեց, ազանությունը հարձակվեց ղրքերի վրա:

Կարմիր բանակում Զապայեվն աչքի ընկավ իբրե տաղանդավոր հրամանատար: Մանեղովարին ճակատում բավական էր, յեթե հրամանատար: Մանեղովարին ճակատում և կարմիր-բանակայիններն անվախ ղղթայում յերևար Զապայեվը, և կարմիր-բանակայիններն անվախ առաջ ելին ղնում:

Զապայեվը կովում էր միշտ հերոսաբար: Հերոսի պես ել մեռավ: Մի աշնանային մռայլ օր էր: Ուրալի ափին, բարձր սարի

վրա սպիտակները չորս կողմից շրջապատել ելին գիվիգիայի շտաբը:
Չապայելը հավաքելով մի բուռը քաջեր՝ սկսեց պաշտպանվել:

Ահա փամփուռաները վերջանում են: Մի խումբ խիզախներ սեղմված են ափին: Ընկնում են սպանվածներն ու վիրավորները: Բայց Չապայելը դեռ կանգնած է: Մի ձեռքին հրացանն է, մյուսին ատրճանակը: Չորս կողմը զիականեր են, վիրավորների անքոցներ: Չապայելը կանգնած ափին՝ կրակում է, չի թողնում իրեն մոտենալ: Մի ձեռքը վիրավորվում է: Սրբում է արյունը և մի ձեռքով շարունակում է կրակել: Ահա և վերջին գնդակը...

— Հիմա մենք նրան կբռնենք, — ուրախանում են թշնամիները:

Բայց վնչ: Չապայելը չի ուզում կենդանի ընկնել սպիտակների ձեռքը: Նա բարձր ափից ցած է թռչում գետի մեջ, և պղտոր ալիքներն իսկույն կուլ են տալիս նրա մարմինը:

1. ՌՎ եր Չապայելը:

2. Ինչո՞վ բացատրել նրա հմայքի մեծությունը:

խիզախ — հանդուգն, քաջ.

հմայք — կախարհանք, գրավչություն:

Կ Ա Ր Դ Ա

Վ. Ֆուրմանով. — Չապայել, գիրք 20 կողմ:

Ձապեռ

1. Բացի ցիտատից չակերտների մեջ են դնում առհասարակ ուրիշ խոսքերի ամեն մի ճշգրիտ կրկնություն, գրքերի, ընկերությունների («կարմիր արև», «Մաճկալ» «Վեմ» բնաշինկոոպ) և այլ անուններն ու փոխարեքական մտքով գործածված բառերն ու խոսքերը:

2. Գրել քեզ հայտնի լրագրերի, պարբերականների, ընկերությունների և այլ անունները:

3. Հեղափոխական շարժման պատմությունից վեր նալի անունն է քեզ հայտնի, գրել այդ նալի անունը:

4. Վեր կազմակերպությունն է հիմք դրել գերմանական կոմունիստական կուսակցության, գրել այդ կազմակերպության անունը:

5. Բացատրիր Լենինի հոգվածում չեղած չակերտի գործածությանց պատճառը:

6. Կազմիր Լենինի հոգվածի կոնսպեկտը ցիտատներով:

Սիրելի Արեգ!

Ինչպես գիտես՝ այս լեռնորդ տարին է, ինչ էս Կարմիր բանակում եմ: Այստեղ չես միայն ռազմական գիտելիքներ ու վարժություններ չես, վոր ձեռք եմ բերել: Յես այստեղ ունում ել եմ սովորել, քաղաքական պատրաստություն ել եմ ստացել: Հիմա աղաարկում եմ գրքեր, լրագրեր: Ամբողջ աշխարհն իմ հոգու առաջ բաց է: Կարմիր բանակն իսկապես մի գպրոց է, մի մեծ գպրոց: Այդ գպրոցը վոչ միայն մեր քայլերն ու շարժումներն է մի կանոնի տակ դնում, այլ և մեր կամքն ու գիտակցությունն էլ է մի հավաքական ամբողջության մեջ ձուլում: Յես չեք բնաշինկոոպն ալի պես ուժեղ չեմ գգացել, ինչպես այդ միասնություն մեջ: Այդ միասնությունն ինձ շատ է փոխել, նոր մարդ է դարձրել: Ինձ վոր տեսնես, չես ճանաչի: Բայց ավելի կսիրես, վորովհետև այդ միասնությունը չես բերելու ինձ հետ մեր նոր հիմնելիք ընտանիքի մեջ, մեր աշխատանքի մեջ, մեր կուլեկտիվի մեջ: Զենքի, սրտի և աշխատանքի միասնություն — ահա ինչ եմ սովորել չես մինչև այժմ: Այդ միասնության մեջ ել գտնելու չենք մենք չեղկուս մեր չեղկունությունը:

Շուտով կվերադառնամ գյուղ և միասին, վորպես մեր մեծ կուլեկտիվի հարվածային ուժեր՝ կկռուցենք մեր չեղանկությունը: Կարոտով քո՝ ԳՈՒՐԳԵՆ. 17/6—1930 թ.

Հուլիսի 10. Սաեփանավան, Հալիկան լեռնորդ գունդ, առաջին գումարտակ, ԳՈՒՐԳԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ:

Ինչ կգրեր Գուրգենն Արեգին, չի՞թե ցարական բանակում լինել:

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բ ու Ր

Ինչ զրվում է՝ 1. Յերբ մտքի (նախադասության) չեղկու մասն առաջին մասի բացատրությունն է:

Որ. Շուտով կվերադառնամ գյուղ և միասին, վորպես մեր մեծ կուլեկտիվի հարվածային ուժեր՝ կկռուցենք մեր չեղանկությունը:

2. Յերբ միտքը կարող է սխալ հասկացվել՝ բառերի շատության պատճառով. որ. միայն շնորհիվ անարդարության հանքը պատկանում է բուրժուաներին:

Արեգ, ջանել աղջկա պես՝ վոսկիզո՞ծ վարսերն արձակած՝ գլուխը հանեց սարի լեռնից:

3. Յերբ նախագասութեան մեջ բաց և թողված պարզաբանող բառ — վա՛ր, այսինքն և այլն.

Որ. ել ասում ես՝ ինչ դռնա:

Կարմիր բանակը՝ Խորհրդային Միութեան պարծանքը՝ մեր շինարարական վերելքի հենարանն է:

Ե. ԿԱՊԻՏԱԼԻ ԼԾԻՏԱԿ

63. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԲՈՒՌՆ ՑՈՒՅՑԵՐ ԲԵՌԼԻՆՈՒՄ

(Կոմկուսի գրողակի տակ)

Բեռլինում Լիբկնեխտի անվան տունը գտնվում է Բյուլովի հրապարակում:

Փետրվարի 18-ին՝ 1950 Վոստրիկաններ վաղ առավոտվանից չորս կողմից շրջապատում են այդ տունը, նրան բոլորովին կտրելով դրսի աշխարհից:

Վոստրիկանություն այդ միջոցները ձեռք եր առել նրա համար՝ փորովհետև գիտեր, թե պրոլետարիատը տարերային ցույց պետք է անի՝ իր կենսարոնական Կոմիտեն ու իր թերթը պաշտպանելու:

Լիբկնեխտի տունը շրջապատված լինելու լուրը կալծակի արագությամբ տարածվում է բանվորական թաղերում:

Հազարավոր բանվորներ, գործազուրկների հետ միասին գիմում են դեպի Բյուլովի հրապարակն ու նրան կպած փողոցները: Իրար հետևից նոր ու նոր խմբեր են հավաքվում:

— «Կորչեն՝ սոցիալ-ֆաշիստները»: — «Կեցցե պրոլետարիատի միակ զեկավար կոմկուսը»: — կանչում են այս ու այն կողմից:

Վոստրիկանությունն անցնում է հարձակման՝ գործ դնելով ունեզինե ճիպտաները: Բանվորները չեա չեն գնում, ողնութեան են հասնում բանվորական նոր խմբեր ու վոստրիկանների հարձակմանը պատասխանում քարե կարկուտով:

— «Ռոտ Ֆրոնտ»: — «Կեցցե Խորհրդային Միությունը»: — թրնդում են ամեն կողմից:

Այդ ժամանակ մի փողոցի կողմից հրացանի առաջին տրաքոցներ են լսվում: Դրանց պատասխանում են վոստրիկանները մյուս փողոցից:

Հասնում են ձիավոր վոստրիկանները, սկսում են կատաղաբար ծեծել, ձերբակալել բանվորներին ու բանվորուհիներին:

Հետևակ վոստրիկանները բռնում են ցուցարարներից մեկին — մյուսին, չարշ տալով հասցնում հրապարակի մեջ տեղն ու սալիս ձիավոր վոստրիկաններին, փորոնք բարբարոսաբար ծեծի չեն լեն — թարկում բռնվածներին:



Լիբկնեխտի տան լուսամուտներից կուսակցության ակտիվ գործիչները վոստրիկանների գլխի վրայից ձուռնով գիմում են ցուցարարներին, փորոնք փողոցից պատասխանում են — «Կեցցե համաշխարհային հեղափոխությունը»: — «Կեցցե Խորհրդային Միությունը»:

Վոստրիկանները շրջաշրջակացնում են հրացանների փակադակները (զատվորները) և փողերը դեպի լուսամուտներ դարձնում: Ժամը 1 և կիսին Լիբկնեխտի տան վրա կարմիր դրոշակն է ծածանվում, և կարծես թե այդ բոլորից մի ելեքտրական հոսանք է անցնում ցուցարարների բազմության միջից: Հրապարակից ու շրջակա փողոցներից թնդում են «Ինտերնացիոնալի» հուժկու ձայները:

Ցույցը չի դադարում մինչև ուշ գիշեր. վոստրիկանությունը փոքրի վրա չե, ու փողոցներն են պատում:

— «Կեցցե մեր կոմկուսը» լողունդն է լսվում ամեն կողմից:

— Ինչ մասնակցություն ունի կինը չերկրի պաշտպանության գործում:

Ո՞վ է Լիբկնեխտը:

Ո՞վ է ինչպե՞ս յե այդ տունը կոչել Լիբկնեխտի անունով:

— Ինչ նպատակով եր շրջապատված կոմիտեի շենքը:

— Ովքե՞ր և ի՞նչու համար ցույց կազմակերպեցին:

Բազմակես

1. Կարգալ հետևյալ խոսքերը.

Պրոֆմիտեթյունից ստացած դրամը հնարավորություն տվեց յերկա-
րացնել գործադուլը. բայց հալածանքներն ու ձերբակալություններն շա-
րունակվում ելին ու շարունակվում...

Բազմակետով հեղինակը թե ընդլայնում է խոսքի մեջ յեղած պատկե-
րը և թե արտահայտում իր զգացմունքները:

Այստեղ հալածանքների և ձերբակալությունների մասին «շարունակ-
վում էր, շարունակվում...» խոսքն ավարտելով բազմակետով պատկերացնել
և տալիս հետագա դժվարություններն ու սարսափը:

Բազմակետը դրվում է այն դեպքում, յերբ խոսքը հուզված լինելու
պատճառով կամ կցկտուր է արտասանվում կամ ընդհատումներով: Բազմա-
կետի գործածությունն առաջին դեպքում բազմակետից հետո դրվում է նաև
վերջակետ և հետևյալ խոսքն սկսվում է զխառառով: Յերկրորդ դեպքում
դրվում է միայն յերեք կետ ու հետևյալ բառն սկսվում է փոքրատառով:

2. Կազմիր առաջին և յերկրորդ տեսակի բազմակետերով խոսքեր:

69. ՄԻԱՅՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ

Հնդկաստանը հանդիսանում է Անգլիայի ամենամեծ գաղութը:
Այդ մեծ յերկրում ապրում է մոտ 350 միլիոն մարդ, վորոնք
ստրկական կախման մեջ են կապիտալիզմից: Առաջին անգամ չե,
վոր դրվում է Հնդկաստանի ազատագրման խնդիրը: Այդ խնդրով
յերբեմն «գրադվում» է նաև հնդկական բուրժուազիան, վորը նույն-
պես հանդիսանում է Հնդկաստանի աշխատավոր մասսաների ամե-
նավորներին թշնամին:

Սակայն անգլիական իմպերիալիստները շատ անգամ են կաշա-
ռել հնդկական բուրժուազիային և միայն ուժերով ճնշել Հնդկաս-
տանի աշխատավոր մասսաների ազատագրական պայքարը:

Հնդկաստանի ազգայնականների առաջնորդ Գանդին, վոր մի
ժամանակ խոսում էր Հնդկաստանի լիակատար անկախության մա-
սին, վաղուց է վար անցել է հնդկական բուրժուազիայի կողմը:

Կոնֆերենցիաներ և գումադան «կյոր կամ կանաչ սեղաններ»
անկարող են և չեն ցանկանա յերբեկ լուծել Հնդկաստանի անկա-
խության խնդիրը: Հնդկական բուրժուազիան կխաբի նորից Հնդ-
կաստանի բազմամիլիոն աշխատավորությունը:

Սակայն Հնդկաստանի ազատագրման գործը կանգ չի առնի:

Հնդկաստանի բազմամիլիոն գյուղացիությունը, պրոլետարիատի
և նրա կուսակցության ղեկավարությամբ առաջ կտանի Հնդկա-
ստանի ազատագրման գործը:

Միայն պրոլետարիատի ղեկավարությամբ, Կոմկուսի զբոյժ-
ներքո, ճնշված և «րջան ծովում խեղդվող Հնդկաստանն իր ազա-
տագրական պայքարը վերջնական հաղթանակների կհասցնի:

— Հնդկաստանն ի՞նչ հարստություններ ունի:

— Ո՞ւմ ձեռքումն և գտնվում Հնդկաստանը և ի՞նչ աղբյուր է հան-
գիսանում նա իր տիրոջ համար:

— Ինչպե՞ս Հնդկական բուրժուազիան չի կարող ազատագրել Հնդկաստանը
և անկախ յերկիր դարձնել այն:

— Միայն ի՞նչ ղեկավարությամբ հնարավոր է Հնդկաստանի վերջնա-
կան ազատագրումը և ի՞նչ ուղիներով:

— Այժմ ի՞նչ շարժումներ է տեղի ունենում այնտեղ, ի՞նչ դեմ և ի՞նչ
նոր լողուններն տակ:

70. ՅԵՌԻՒՍ Ե ԶԻՆԱՍՏԱՆԸ

ԶԻՆԱՍՏԱՆԻ ԽՈՐՀ. ՇՐՋԱՆ. ԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՆՏԱՌ
ՄԻՈՒԹՅԱՆ 16 ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ

Զինաստանում ամբողջ հողի 60—70 տոկոսը պատկանում է
կալվածատերերին:

Բացի կալվածատերերից, չինական գյուղում չբավորների ու
բաղրակների արյունը ծծում են նաև կուլակները: Կուլակն ունի
շատ հող, կենդանի ու մեռյալ ինվենտար և պահում է մինչև վեց
բանվոր, — վորոնց վարձում է տարով: Դաշտային աշխատանքների
սեզոնին կուլակը վարձում է նաև բանվորուհիներ:

Կուլակը զբաղվում է նաև վաշխառությամբ, առևտրով և հող է
տալիս կապալով: Մի խոսքով նա ամեն մի միջոց ձեռք է առնում,

վոր գյուղը հավաքի իր ճանկերի մեջ: Զբաղվո՞ւն ամբողջովին կախման մեջ է վաշխառու կուլակից:
Սակայն այն միջակը, վոր անհրաժեշտ ինվենտար չունի, նա ել
հաճախ ստիպված է լինում, գյուղ խոնարհել կուլակին և չբավո-
րանալու ճամբան բռնել:

Բայց ամենից վատ չինական գյուղում ապրում է բաղրակը:
Տարով վարձված գյուղատնտեսական բանվորներն աշխատում
են որական 15—17 ժամ և չգիտեն թե ինչ է հանդիսուր: Ամբողջ
տարվա աշխատանքի համար նրանք ստանում են 15—20 չինական
գոլլար, վոր հավասար է 7—10 ուլբուլ: Հաճախ այդ աշխատավարձն
ել ստանում են վոչ փողով, այլ մթերքով:

Կիրար բաղրակները իրենց տերերի մոտ աշխատում են այն.

պայմանով, վոր ստանան բերքի մի մասը: Իսկ չեթե տնտեսութ-
յանը վրեժ տարերային-բնական աղետ պատահեց և բերքը վատ
լիզավ, բանվորները վաճինչ չեն ստանում:

Գյուղատնտեսական բանվորի բնակարանը չարդախն է կամ
սրահը: Այստեղ ապրում է բառրակն իր ընտանիքով, անձրիի ու
արևի տակ, իսկ քամին գողգոյացնում է նրանց մանուկներին:

Վոչ թախտ ունեն բառրակնիքը, վոչ ել անկողին: Նրանք ի-
րենց կանանց ու մանուկների հետ քնում են խոնավ գետնին ու
ծածկվում են ծղնոտով, բելումով, շների ու խոզերի հետ միասին:

Հասկանալի չե, վոր ալգրիսի պայմաններում վարակիչ հիվան-
դությունները անխնա հնձում են բառրակներին և մանավանդ նրանց
լեռնախաներին:

Բառրակների յերեխաներն առանձնապես շատ են մահանում
ձմեռը, չերը ունեցած ցնցոտիները չեն կարողանում նրանց պա-
տրապարիկ ցրտից:

Չինական բառրակը գալիս պես քաղցած է լինում տարվա
365 օրը:

Հաճախ միակ նրանց կերակուրը, լինում է ջրի մեջ խաշած
ծառերի տերևները: Նրանց ամենալավ կերակուրը շփոթն է, վոր
լիզվում են կարտոֆիլից ու բրնձից, առանց ալի ու լուղի:

Իսկ չեթե բառրակը ճաշին ունենում է աղած կաղամբ, դա
նրա համար ամենալիզանիկ օրն է լինում:

Իայց աղը չինական գյուղում շատ դժվար է ճարվում: Փունտը
4 բուրբուղ ավել արժե:

Չինական ժողովուրդը իրիտ ատում է իր շահագործողներին:

Չինական գյուղերում արդեն բռնկվել է հեղափոխության կրակը:

Յուսում է Չինաստանի հարավը: Խուբեյ, Չափի, Խունան նա-
հանգներ և բառրակներն ու չրավորները միջակների հետ դաշնակ-
ցած վտարի լեն կանգնել արդեն և կռիվ են մղում Խորհրդային իշ-
խանություն հաստատելու համար: Նրանք կռվում են առանց խնա-
լելու վոչ թշնամ ևն և վոչ իրենց կյանքը: Հեղափոխական հրդեհի
ալիքը հասնում է նաև հյւսիս:

Չինաստանի աշխատավորները համոզվել են, վոր լավագույն
կյանքի հասնելու միակ ճանապարհը հեղափոխությունն է, վորին
զինեց 14 տարի առաջ ռուսական պրոլետարիատը, խոշորագույն
առաջնորդ Լենինի գեղավարությամբ:

Չինական Կոմունիստական կուսակցությունը ավելի ու ա-
վելի մեծ ազդեցություն է ձեռք բերում չինական գյուղում: Նրա

կախարհությամբ դաժան կռվով ձեռք բերած խորհրդային իշխա-
նությունը ամբապնդվել է արդեն Չինաստանի տասնյակ գավառ-
ներում:

Կանտոնի բանվորների հերոսական ապստամբության տարեդար-
ձին տեղի ունեցավ Չինաստանի խորհուրդների առաջին համագու-
մարը: Թող Խորհրդային Միության մեր բնկերներն իմանան, վոր
միայն Կոմկուսացության Լենինյան գիծն է, վոր աշխատավորու-
թյանը տանում է դեպի նոր, լավագույն կյանք:

Թող նրանք ել ավելի խիտ համախմբվեն բայշիկների կու-
սակցության շուրջը, վորն իր ամուր ձեռքով դեկավարում է սո-
ցիալիստական շինարարությունը Խորհրդային Միության մեջ և հե-
ղափոխական կռիվները չինական գյուղում:

— Ո՞ւմ լծի տակ են գտնվում չինական գյուղացիներն ու բառրակ-
ները և ինչ չափով են շահագործվում:

— Չինական գյուղացիությունը փոքրամասն է դուրս գալու այդ գյուղ-
թյունից և լիզվել:

— Ո՞ւմ դեկավարությամբ է կռվում չին գյուղացին:

— Ի՞նչ հաջողությունների չե հասել այդ ուղղությամբ նա մինչև հի-
մա: Ի՞նչ գիտես չինական Կարմիր բանակի մասին:

— Յերբ Չինաստանը վերջնականապես կարող է ազատագրվել ոտար-
յերկրյա իմպերիալիզմից և իր սեփական տգրգռվածից:

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համառոտագրություններ

Յերկար գրվածքները (հոդված, պատմվածք) համառոտելու համար
պետք է գրել միայն կյանքի, գլխավոր կետերը և բաց թողնել չերկրորդա-
կան մտքերն, անկարևոր բաները:

Որ. Յեռում է Չինաստանը:

Չինաստանում հողի խոշորագույն մասը պատկանում է կալվածատե-
րերին:

Մնացածի մեծ մասին տիրում են կուլակները:

Չրավոր գյուղացիները ամբողջությամբ կախման մեջ են կուլակից:

Չինաստանում ամենից ծանր բառրակի դրությունն է: Սրանք ամսա-
կան ստանում են 7-10 օտրլի:

Ժողովուրդը խիստ ատում է շահագործողներին:

Նրանք կռվում են իրենց ազատագրության համար և Չինաստանի վո-

րոշ վաչկերում ստեղծել են արդեն խորհուրդների իշխանություն:

1927 թիվն էր: Քաղաքացիական կռիվի ալիքները տարածվել էին լեռերի բոլոր ծայրերը: Զինական առաջին կոմունայի կարմիր բանակը կատաղի կռիվ էր մղում սպիտակ-գեներալների դեմ: Հեղափոխական բանվորությունն ու գյուղացիությունը իմ կողմից, հակահեղափոխական բուրժուազիան ու կալվածատիրությունը միուս կողմից՝ վճռական և վերջնական պայքարի էյին յեյի: Լինել-չլինելու հարցն էր վորոշվում յերկու կողմի համար էլ:

Կանտոն քաղաքն էլ սոսկումի և տագնապի որեր էր ապրում: Նա անցնում էր ձեռքից-ձեռք: Փոքրաթիվ հեղափոխական սարսիկներն առժամանակ ստիպված են լինում թողնել քաղաքն և նահանջել: Չան-Կայ-Շիի հրոսակները իմպերիալիստների բարեհաճ մասնակցությամբ մտնում են քաղաք: Նրանց հաջողվում է ձերբակալել տասնութ հեղափոխական բանվոր և գյուղացի և բռնել կոմունայի ղեկավարներին: Յեվ ահա բանալի նկուղի աղոտ լույսի տակ իրենց վերջին գրավոր հրաժեշտն են ուղղում ընկերներին:

Ահա նրանցից մեկը:

«Պանծալի ընկերներ!»

«Յես մեռնում եմ ազնիվ կերպով, ինչպես ապրեցի կարճատև կյանքիս ընթացքում: Ութ որից հետո կլրանա քսանյերկու տարիս, իսկ այս յերեկո ինձ գնդակահարելու լին: Յես չեմ ամոստում իմ կորուստը: Ցավում եմ միայն, վոր քիչ բան եմ արել հեղափոխության համար: Միայն այժմ եմ ինձ զիտակցական հեղափոխական և կուսակցական աշխատավոր համարում: Դրա համար էլ չեմ ցավում արսպիսի վախճանի համար: Չե՞ վոր լես մեռնում եմ իբրև ազնիվ կոմունիստ:

«Բոլոր դատապարտվածներս էլ շատ վաշելուչ և աշխուժ ենք պահում մոգ: Այսօր վերջին անգամ լրագիր կարգացինք: Մեր գործը շատ հաջող է: Շուտով ամբողջ Չինաստանն ազատ կշնչի, և մասնակցելու այդ աշխատանքին: Համբուրներ իմ ամենահին ընկերոջը—ժալրիկիս:

«Մնաք բարով: Կեցցե կոմունիզմը: Կեցցե Խորհրդային Զին-Պեն-Լայ

— Յերբ և ի՞նչ պայմաններում ընկավ Կանտոնի կոմունիստը:

— Ի՞նչ հեղափոխական շարժումներ յեղան և կան յիմա Չինաստանում: Կերներին (գրիբ այս մասին նամակի ձևով մոր բերանից):

...Կրակոցը վերջացավ: Ամբոխի գրոհը լեռ էր մղված: Ավտոմոբիլներին հրաման արվեց մաքրել ճանապարհը: Բայց նրանք չկարողացան առաջ շարժվել դիակների այդ հսկա լեռների միջով: Զինվորներն սկսեցին մեռածներին մի կողմ քաշել: Այդ ժամանակ իրանց համար բոլորովին անսպասելի բան պատահեց: Մեր ընկերներից հարյուր հոգուհաջողվել էր, կտուրից-կտուր անցնելով, հասնել ահա տեղը, վորի ներքև խիտ շարքերով՝ կանգնած էին անգլիական զինվորները և գեներալական բանակները:

Յեվ ահա հասավ վոխառություն ժամը:

Վերևից զինվորների գլխին ուռմբերի մի ամբողջ տարափ թափվեց: Ավտոմոբիլները հրամանատարական կազմի հետ միասին շարժվեցին յեղան: Քիչ հեռու մի ուրիշ անից նրանց վրա նորից ուռմբեր տեղացին: Ամբողջ փողոցը զինվորների դիակներով ծածկվեց:

Յես և մեր ընկերներից մեկը՝ ձեռք-ձեռքի տված՝ փախչում էյինք արյան լճեր կազմած փողոցներով՝ սալթաքելով ու ընկնելով, մինչև վոր մեզ հաջողվեց մի անկյուն հասնել: Այստեղ կանգնեցինք, վոր շունչ բաշենք: Ամբոխը նորից դանդաղ շարժվում էր, մոտենում:

Այն ժամանակ մենք փախանք հակառակ ուղղությամբ: Այստեղ փողոցները դատարկ էյին ու խաղաղ, բայց ամեն մի քայափոխում սոսկալի անակնկալներ կարող էյին մեզ սպառնալ:

Հավանական է, վոր զինվորների մեջ հաջող կերպով ուռմբեր էյին նետված: Զինվորներն ու հեղափոխականներն ընկած էյին խառնի-խուռն, ալլանդակ ու անձանաչելի՝ փշրված ավտոմոբիլների և փչացած թնդանոթների միջև:

Մի քիչ անց՝ մենք գտնվում էյինք կանաչ դաշտերում ու տեսնում ծխով պատած քաղաքը: Ուշացած պալթյունների թնդյունը դեռ հասնում էր մեր ականջին: Յես մի պահ միայն լուռ լաց չեղա խորտակված հեղափոխության համար:

Լի-Չինը քնքշորեն գրկեց ինձ:

— Մենք հաղթված ենք ժամանակավորապես, իմ քանգազին, բայց վոչ ընդմիշտ, — ասաց նա: — Մենք մի ավելնորդ դաս յեվա առանք: Վաղը հեղափոխությունը նորից կգա, ավելի ուժեղ, ավելի փորձված յեվ ավելի կուռ կարգապահ:

— Ինչո՞վ և հիմնավորված հեղափոխականի վստահությունն ապագայի նկատմամբ:

— Ի՞նչ հուշեր ունես քաղաքացիական պատերազմներից:

— Գրի՛ր «Մի գեղք քաղաքացիական կռիվներից» վերնագրով մի շա-
րագրություն՝ առաջուց կազմելով գրելիքիդ պլանը:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուզյց տուր, թե ինչ նմանություն կա գաղութային և կիսագաղութային
յերկրներում ծավալվող հեղափոխական շարժումների մեջ: Ո՞ւմ գե՞մ են ուղ-
ղված այդ շարժումները և ինչ նպատակով:

Քաղաքի վրա ցույց տուր Չինաստանի: Քանի՞ միլիոն ժողովուրդ ու-
նի, ի՞նչ կարգեր են տիրում աշխարհ: Առանձնացրո՞ւ չինական ակերբաու-
րիայի աշն մասերը, վերակոչ բանվորագյուղացիական իշխանություն և
հատուկություն:

— Վորն է այդ շարժումների վերջնական նպատակն ամեն ուր:

Զ. ՀԵՆԱՓՈԽԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅԵՎ ՏՈՆԵՐԸ

73. ԿՈՍԻՆՏԵՐՆ

Առաջին ինտերնացիոնալը հիմնվեց 1864 թ. Կարլ Մարքսի գե-
կավարությամբ: Առաջին ինտերնացիոնալը հիմք դրեց բանվորու-
թյան միջազգային կազմակերպությանն, փորձադի սրանք նա-
խապատրաստվեց հեղափոխական ճնշում գործ դնելու կապիտալի
դեմ: Առաջին ինտերնացիոնալը ցրվեց 1872 թ. Պարիզի կոմունայի
պարտությունից և ամբողջ բանով ըստ ինչ շարժման ջլատումից հետո:

1889 թ. բոլոր յերկրների սոցիալիստական կուսակցություն-
ների համագումարում կազմակերպվեց 2-րդ ինտերնացիոնալը: 2-րդ
Ինտերնացիոնալն առաջ հեղափոխական էր, սակայն համաշխարհ-
յին պատերազմի ժամանակ նրա առաջնորդների մեծ մասը դավա-
ճանեց բանվոր դասակարգին: 2-րդ Ինտերնացիոնալը բուրժուազիայի
հետ ձեռք ձեռքի տված պաշտպանեց պատերազմը: Այժմ 2-րդ
Ինտերնացիոնալը միջազգային կապիտալի հետ արանք և դարձել և
ամեն կերպ աշխատում է բանվորության լիակատար բուրժու-
ազիայի դեմ կռվի յերկրացի:

Միայն Հոկտեմբերից հետո 1919 թ. Մոսկվայում կալացավ
զանազան յերկրների հեղափոխական սոցիալիստների համագումարը:
Դա 3-րդ կոմունիստական Ինտերնացիոնալի առաջին համագումարն
էր:

Կոմիսներնի կազմակերպումը դեկավարում էր Վ. Ի. Լենինը:
Մեր հին փորձված բալլընիկյան կուսակցությունը լեղել է և
կմա իրրև կոմիսներնի հիմնական կորիզը:

1919 թվին կոմկուսի անդամների թիվը բոլոր կապիտալիս-
տական յերկրներում գնալով աճում է:

Կոմիսներնը միացնում է նաև Արևելյան Գաղութային և կի-
սագաղութային յերկրների հեղափոխական բանվորներին:

Կոմիսներնը՝ հեղափոխական բանվորների համաշխարհային
բալլընիկյան կոմունիստական կազմակերպությունն է: Կազմակերպ-
վելով Լենինի գեկավարության տակ, Կոմիսներնը, ինչպես և մեր
Կոմկուսը, գործելու յե Մարքսի և Լենինի ումունքի հիման վրա:

Կոմիսներնը ձգտում է, վոր բոլոր կապիտալիստական յերկր-
ներում պրոլետարիատն իր ձեռքը վերցնի իշխանությունը և պրո-
լետարական դիկտատուրալի պայմաններում սոցիալիզմ կառուցի:

ՀԱՏՎԷԾ «ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏ»-ԻՑ

«Կոմունիստներն իրենց հայաքներն ու մտադրությունները
չեն թաղցնում: Նրանք բացեիբաց հայտարարում են, վոր իրենց
նպատակներն կհասնեն մինչև հիմա յեղած բոլոր հասարակարգերի
բռնի խորտակման միջոցով միայն: Թող տիրող դասակարգերը զոդան
կոմունիստական հեղափոխության առջև: Պրոլետարները վոչինչ
չունեն զրանում կորցնելու՝ բացի իրենց շղթաներից: Նրանք մի
աշխարհ ձեռք կրերեն:

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք:

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս հատվածից առանձնացրու մի շարք լուգունգներ և գրի՛ր տետրա-
կումդ:

Փ ա կ ա գ ի ծ

1. Յերբ տվյալ բառը կամ ասույթը չի կազմում խոսքի մի մասը ու
կատարում է մի միայն բացատրողի կամ մեկնաբանողի դեր, — ապա այդ-
պիսի բառը կամ ասույթը գրվում է փակագծի () մեջ ու արտասանվում
ցածր ձայնով, արագ ու միապաղաղ: Փակագծի փոխարեն շատ անգամ ասող
(*) են գնում և եջի տակ տեղավորում այն, ինչ վոր պիտի զրվեր փակա-
գծի մեջ:

Կարգն հետևյալ խոսքերը

ա) Այսորվա պես հիշում եմ, թե ինչպես նրա տղաները (հարևան
Պետրոսն ունեն չորս տղա) հեծնում էին ամեն մեկը մի ձի և քշում գեպի
գալտերը:

բ) Հը, հոգնեցիր ընկ. Կիմիկ (Կարեկին Պետրոսյանի անունն է)
Ինքդ կազմիր փակագիծ ունեցող խոսքեր:



74. ՀԱՍ. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Համկոմունիստական (բ) կուս. առաջ է լեկել խմբերիաշխատ. դարաշրջանում, բուրժուազիայի, ցարական ինքնակալության, բոլոր տեսակի մանր բուրժուական կուսակցությունների և իր ներսում առաջացած բազմաթիվ թերությունների դեմ վարած պայքարում:

Նա կոփվել ու գաղափարակվել է Լենինի՝ պրոլետարիատի այդ մեծագույն առաջնորդի ղեկավարությամբ և դարձել այժմ միջազգային հեղափոխական պրոլետարիատի առաջավոր ջոկատը:

— Հենվելով իր անցյալի հեղափոխական փորձառությունների և կատարած նվաճումների վրա՝ Կոմունիստական Խոտերնացիոնալի ղեկավարող ջոկատը՝ Համկոմ(բ) կուսը հպարտությամբ կարող է ասել, Վոր իր ղեկավարությամբ ԽՍՀՄ պրոլետարիատն այսօր ավարտում է ամենակարեւոր և ամենադժվարին գործը, հաջողությամբ—նիսիք դնելով սոցիալիստական նոր շենքի:

— Համկոմունիստն այդ շենքը կառուցում է, նա կկառուցի այդ շենքը, նա կավարտի [սոցիալիզմի գործը, վորովհետեւ նա կուրված բայրեկիկների, լենինիստների կուսակցությունն է, վոր սուվոր է արդեն պայքարելու ընդդեմ դժվարությունների և հաղթահարելու այդպիսիները, վորովհետեւ նրա հետ է պրոլետարիատն և չքավոր գյուղացիության դաշինքը՝ գյուղացիության հիմնական մասը:

սալի միջակի հետ՝ լերկրի ներսում և հասունացող պրոլետարական հեղափոխության համակրանքն ու աջակցությունը համախառն աշխարհում:

Համկոմունիստի ղեկավարող շաբը լենինյան բալլշիվիկների Կենտրոնական Կոմիտեն է:

Համկոմունիստի գլխավոր քարտուղարն ընկ. Ստալինն է, վոր Լենինի մահվանից հետո անշեղորեն առաջնորդում է ԽՍՀՄ պրոլետարիատին դեպի սոցիալիզմ:

Համկոմունիստը կոմունիստական ինտերնացիոնալի առաջավոր ջոկատն է, վորի վերջնական նպատակն է համաշխարհային կոմունիզմ:

ՍՏԱԼԻՆ

Այսօր Ստալինի մասին գրում է ամբողջ աշխարհը, քիչ չէ գրվելու նաև առաջիկայում: Այլ կերպ լինել չի կարող: Մի մարդու մասին, վոր ապրել է 50 տարի, վորից 30 տարին անց է կացրել հեղափոխական կռիվներում և ներկայումս կանգնած է ամբողջ աշխարհի կոմունիստական շարժման գլուխը, հարկավ կգրեն և կգրեն գանազան կերպ՝ թշնամիներն ստեղծությամբ, բարեկամները սիրով:

Սերգո Որջոնիկիձե

— Պայքարի ինչ ճանապարհ է անցել բալլշիվիկների կուսակցությունը և համ դեմ:

— Ո՞վ է ղեկավարում պրոլետարական դիկտատուրան և ինչպես:

— Ո՞վ է Համկոմունիստի գլխավոր քարտուղարը:

— Ինչո՞ւ չէ նա համարվում Լենինի աներեր և հաստատուն աշակերտ:

75. ՊՐՈՓԻՆՏԵՐՆ

(Պրոֆեսիոնալ միությունների ինտերնացիոնալ)

Պրոֆինտերնը միջազգային կազմակերպություն է այն հեղափոխական արհմիությունների, վորոնք վճռական պայքար են մղում կապիտալի և նրա լավեյների դեմ:

Սկզբում այդ ինտերնացիոնալի մեջ էլին գտնվում միայն Խ. Միության բռնվորները և ուրիշ լերկրների բանվորների ջնչին մասը: Մյուս լերկրներում արհմիությունները դեռ գտնվում էին սոցիալ-դավաճանների ազդեցության տակ, վորովհետեւ ի՞նչ կամ գեղին ինտերնացիոնալին էլին պատկանում: Դժբախտաբար դեռ մինչև այժմ էլ վոչ բոլոր բանվորները ճանաչել են դավաճան առաջնորդ-

ների իսկական դեմքը: Այդ պատճառով, կարմիր արհմիությունները իստերնացիոնալ ինդիքն են՝ մի կողմից կոմիտե բուրժուազիալիզմ, մյուս կողմից՝ պատռել սոցիալ-դափաճանների զիջակը և բանվորներին ներգրավել կարմիր Պրոֆինտերնի շարքերը:

Պրոֆինտերն ամեն տեղ իր շուրջն է համախմբում ակտիվ հեղափոխական բանվորներին և կազմակերպում նրանց արհմիությունների մեջ: Այս հեղափոխական արհմիություններն իրենց ներկայացուցիչներն ունեն Պրոֆինտերնում: Պրոֆինտերնի կողմնակիցներն ամեն տեղ իրենց միության մեջ, իբրև հեղափոխական ուղիների ակտիվ ազիտացիա և պրոպագանդ են մղում, վերաբերվելով միության անդամ բոլոր բանվորները դառնան կարմիր իստերնացիոնալի հետևորդներ: Այժմ արդեն չկա վոչ մի լեքկիրը, վորտեղ Պրոֆինտերնը բազմաթիվ հետևորդներ չունենա:

Բոլոր սկզբունքային և գործնական ինդիքները վորոշում են հեղափոխական արհմիությունների միջազգային համագումարը: Մինչև հիմա լեքկու աշդիսի համագումար են տեղի ունեցել, վորին մասնակցել են բոլոր լեքկիրներից պատգամավորներ: Պրոֆինտերնի կենտրոնից բացի, վոր գտնվում է Մոսկվայում, կան բազմաթիվ բյուրոներ, վորոնք գտնվում են զանազան լեքկրներում՝ գործը տեղերում ղեկավարելու համար:

Պրոֆինտերնը քանի գնում, ծավալվում է: Յեվ հեռու չէ այն ուր, լեքկ բոլոր աշխատավորները նրա զրոշի տակ կանցնեն:

— Ինչպես կազմվեց և ինչ դեր ունի Պրոֆինտերնը:

— Ինչպես 2-րդ իստերնացիոնալի հետևորդները կոչվում են «Սոցիալ-դափաճան»:

լակել—ծառա (ճաշարանի, հյուրանոցի և այլն), ստրուկ, կույր կողմնակից:
զիմակ—մասկա (վորով դեմքն են ծածկում), կեղծութուն:
ներգրավել—ներս գրավել:
ակտիվ—գործոն, գործունյա, լավ լեռանդով աշխատող:
ուպոլիցիա—ընդդիմադիր, ընդհանուր գծին հակառակ գնացող:
հետևվորդ—կողմնակից:

76. ՄԱՐՏԻ 18-Ը ՊԱՐԻՉԻ ԿՈՄՈՆԱՅԻ ՅԵՎ ՄՈՊՐԻ ՈՐԸ

Մարտի 18-ը հանդիսանում է Պարիզի Կոմունայի, պատմության մեջ առաջին բանվորական կառավարության հիշատակի ուր:

Պարիզի Կոմունան իր գոյությունը պահպանեց բնդամենը 72 ուր: Սակայն, չնայած իր կարճ ժամանակյա գոյությանը, «Կոմունան» ամենազգաբարին պաշտաններում իրագործեց խոշոր պատմական նշանակութուն ունեցող մի շարք հեղափոխական ինդիքներ...

Պարիզի Կոմունայի գոյությունը կարճ լեղավ այն պատճառով, վոր նա գործեց մի շարք աշդիսի սխալներ, վորոնցից ոգտը վեցին նրա անհամեմատ ուժեղ և կատաղի լիշամիները՝ հանձինս Ֆրանսիական բուրժուազիայի ստոր պարագլուխների, Տիերի և Գալիֆեյի:

Պարիզի Կոմունան ավելորդ մեղմութուն և փափկանկատութուն ցույց տվեց բուրժուազիայի հանդեպ. նա չոգտագործեց Ֆրանսիական բանկերի զրամական միջոցները, չնայած իր ունեցած մեծ կարիքին: Մյուս կողմից, բանվոր դասակարգն իր դասակարգային կազմակերպությամբ և զիտակցությամբ դեռ շատ թույլ էր, և չստանալով ժամանակին ողնություն դափառից՝ տառալից:

Սակայն Պարիզի Կոմունայի դրոշը չնկավ, այլ միայն ժամանակավորապես թեքվեց, վորպեսզի ապագայում բարձրանանոր ուժով և հաստատվի վերջնականապես լեքկրադնդի մեկ վեցերորդ մասի վրա, մեր մեծ Խորհրդային Միության մեջ:

Այդպիսով, Պարիզի Կոմունան մեր հաղթական Հոկտեմբերի նախատիպն է: Պարիզի Կոմունան կատարեց իր մեծ պատմական ծառայությունը, քանի վոր ԽՍՀՄ պրոլետարիատը՝ լենինյան կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, զգուշանալով նրա կատարած սխալներից՝ հասավ հաղթական Հոկտեմբերին:

Այժմ Խորհրդային Միության պրոլետարիատը և աշխատավոր գյուղացիությունը հիմք են դնում ապագա սոցիալիստական — կոմունիստական հասարակարգին: Խորհրդային Միության մեջ ծավալվում է մարդկության պատմության մեջ գեռ չտեսնված մի շինարարութուն: Այդ շինարարության հաջողությունները բնականա-



բար առաջ են բերում համաշխարհային բուրժուազիայի կատաղի տառելութունը դեպի բոլոր աշխատավորների հայրենիքը:

Որեցոր ուժեղանում է հակախորհրդային կամպանիան բուրժուական լերկներում, հնարվում են նորանոր բամբասանքներ և կեղծիքներ: Միաժամանակ կապիտալը հարձակման է գիծում բանվոր զստակարգի դեմ:

Ամբողջ աշխարհի աշխատավորական մասսաների հեղափոխական շարժումները, քաղաքական և տնտեսական գործադուլների ալիքն սպառնում են կապիտալիստական աշխարհի գոյութունը: Անխուսափելի համաշխարհային հաղթական պրոլետարական հեղափոխութունը կանխելու համար՝ կապիտալի բոլոր լերկներում կատաղել են ժամանակակից տիեզերքը և գալիֆները, վորոնք պատաստվում են իՍՋՄ գահիճները դառնալով:

Մակայն Պարիզի թնգանոթների վորոտը զարթեցրել է ամբողջ աշխարհի պրոլետարիատին և գյուղացիութուն: Ահա թե ինչու «կոմունայի» գործը չի մեռել, նա դեռ կենդանի յե միլիոնների սրտում: Պարիզի կոմունարների գրոշակը գտնվում է ամուր ձեռքերում, և աշխարհում վոչ մի ուժ չի կարող խել ախ պրոլետարիատի և նրա մեծ շտաբ՝ կոմիստերների ձեռքից:

Հավերժացնելով Պարիզի ընկած կոմունարների հիշատակը, հավերժացնելով ալսուր և՛ ախ հեղափոխականներին, վորոնք հեծում են կապիտալի բանտերում, ամբողջ աշխարհի պրոլետարները և բոլոր ազնիվ աշխատավորները, համակրելով նրանց մեծ գործին, մանում են սպիտակ տերրորի դեմ համաշխարհային կազմակերպութուն՝ ՄՈՊՐ-ի շարքերը:

Բոլորդ դեպի ՄՈՊՐ-ի շարքերը:

Կեցցե՛ք բոլոր աշխատավորների և բոլոր ճնշվածների միջազգային համերաշխութունը:

Ի՞նչ կազմակերպութուն է ՄՈՊՐ-ը և ի՞նչ նպատակներ է հետապնդում:

Ի՞նչու ՄՈՊՐ-ի որը կապված է Պարիզի կոմունայի որվա տոնակատարութուն հետ:

ԻՍՋՄ-ի՝ պրոլետարիատը և աշխատավոր գյուղացիութունը ի՞նչպես են պայքարում ա՛յժմ կոմունայի ավանդները և ոգնում հեղափոխականներին:

Ձեզ մոտ կա՞ ՄՈՊՐ-ի բջիջ: Ի՞նչ է անում նա կապիտալի լծի տակ տառապող մարտիկներին ոգնելու գործում:

ԱՌԱՋԱՆԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրի՛ր մի հոգված ձեզ մոտ չեղած ՄՈՊՐ-ի բջիջի աշխատանքների մասին և հանձնի՛ր այդ ձեռ պատի թերթին:

Ճրանսիական մեծ հեղափոխության 100-ամյակի հիշատակին, 1889 թվականին, 2-րդ Ինտերնացիոնալի անդրանիկ համագումարում սահմանվեց մայիսի 1-ի տոներ: Դա բանվոր զստակարգի համերաշխության միջազգային տոնն է, դա նրա ուժերի հաշվառման ու նրա նվաճումների գումարի հարգարեցման օրն է: Միջազգային պրոլետարիատն այդ օրն առաջադրում է 8-ժամյա աշխատանքի օր և մշտական գորարանականների վերացում: Միայն Խորհրդային Ռուսաստանում մայիսի 1-ը դարձավ գուտ պրոլետարական նշանակությամբ տոն: Այդ օրը Խորհրդային Միության բոլոր պրոլետարները ցուցադրում են լրենց համերաշխությունն ամբողջ աշխարհի բանվորության և բոլոր ճնշված ժողովուրդների հետ: Այդ օրը համարվում է աշխատանքի ազատագրման տոն, յերբ բանվորները և գյուղացի աշխատավորութունն իրենց կամքն են վճռականորեն հայտարարում՝ կավելու կապիտալիստական հասարակարգի և իմպերիալիստական քաղաքականության դեմ և ցուցադրում են միասնական կոլեկտիվ կամք՝ դեպի կոմունիզմ՝ տանող նպատակների իրականացման համար:

Վճրտեղ և ի՞նչ պայմաններում է ծագել մայիսի 1-ի տոնը:

Ի՞նչ լողունդների տակ է տոնվում և ի՞նչ նպատակներ է հետապնդում մայիսիկյան տոնը մեզ մոտ և կապիտալիստական լերկներում:

78. ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐԸ—ՄԱՐՏԻ 8-Ը

Կանանց միջազգային օրը սահմանվել է կին սոցիալիստների միջազգային 2-րդ կոնֆերենցիայում, Կոպենհագենում, 1910 թվին: Աշխատավոր կանանց շրջանում մեր աշխատանքների խնդիրները Վ. Ի. Լենինը հետևյալ ձևով է պատկերում. «Մասսաներին չի կարելի քաղաքականության մեջ քաշել առանց կանանց ևս ադ քաղաքականության մեջ առնելու, բանի վոր մարդկային ցեղի կեպ՝ կին հատվածը կապիտալիզմի շրջանում կեղեքված է կրկնակի:

Բանվորուհին և գեղջկուհին շահագործված են կապիտալիզմից և բացի դրանից, նրանք՝ ու յնիսկ ամենադեմոկրատական բուրժուական հանրապետություններում անգամ մեռում են ամենից առաջ անիրավահավասար, վորովհետև օրենքը նրանց չի տալիս տղամարդկանց հախափար իրավունք, յերկրորդ—վոր պիտավորն է նրանք

մում են «ընտանեկան ստրկութեան մեջ», տարիներ շարունակ կապված լինելով ամենամանր, ամենասե, ամենածանր, մարդուն ամենից շատ բթացնող խոհանոցային աշխատանքով և ընդհանրապես առանձին տնային տնտեսությունում: Մարտի ութը պիտի ոգնի «կնոջ քաշել քաղաքականության մեջ», չեզոքացնելով խեթ հալացքը հանգեպ կինը: Մեր կուսակցությունն այդ տեսակետից խոչըր կուլտուր-քաղաքական աշխատանք է կատարում: Մարտի 8-ն այդ աշխատանքի ստուգատեսի որն է:

Վերոհիշյալը վորոշում է նաև մարտի 8-ի գործնական խնդիրները՝ 1) կին բանվորուհիներին և գեղջկուհիներին բացատրել կուսակցության առաջադրած խնդիրները և համախմբել նրանց այդ հարցերի շուրջը, 2) տեղական կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունների աշխատանքների ստուգումն կանանց կուսակցության, հասարակական աշխատանքների մեջ քաշելու, նրանց առաջ քաշելու խորհրդային կուսակցական և կոոպերատիվ աշխատանքների ասպարեզը, նրանց դեկավար աշխատանքների գիւրքերը հանձնելը, 3) սովորաբար այդ օրվանն են զուգակցվում կուլտուրական հիմնարկների կազմակերպումները, վոր գործնականում նրպասում են կնոջ ազատագրվելու «ընտանեկան ստրկությունից», բաց են անում սեզանտաներ, լվացքատներ, մանկական մսուրներ, հրապարակներ և այլն: Միաժամանակ պիտի ստուգվեն այն ձեռնարկումների պաշտպանությունը, վոր հետապնդում են բանվորուհու աշխատանքի լավացումը, նրանց վորակավորման բարձրացումը և նշում են այդ ուղղությամբ նորանոր նվաճումներ: Վերջապես պայքար հանուն ամբողջ աշխարհի կանանց ազատագրման, մի պայքար, վոր տարվում է կոմիտեերնի դրոշակի տակ:

79. ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ ՈՐԸ

Միջազգային պատանեկության որն ամեն տարի տոնելու վորոշումն ընդունվել է Բեռնի (Շվեյցարիայի) լերիտասարդական միջազգային սոցիալիստական համագումարում 1905 թ.: Իսկ 1919 թ. Բեռլինում կայացած լերիտասարդության համագումարում՝ 3-րդ համունիստական Ինտերնացիոնալին միանալու վորոշման հետ միասին սահմանվեց՝ միջազգային պատանեկության որ համարել սեպտեմբերի առաջին կիրակին: Առաջին միջազգային օրը կազմակերպվեց իմպերիալիստական կռվի տաք ժամանակը և չնայած անբարենաջող պայմաններին, նա անսկասկած չանցավ: Յուլյեթ

կազմակերպվեցին Շվեյցարիայում, Գանիայում, Նորվեգիայում, Հոլանդիայում, Գերմանիայում, Ռումինիայում, Պորտուգալիայում և Ամերիկայում: Այնուհետև 1916, 1917 թ.թ. պատանեկական օրերն անցան պատերազմի դեմ պայքար մղելու դրոշակի տակ: Ռուսաստանում պատանեկական օրը՝ 1917 թ. անցավ «Իշխանությունը խորհուրդներին» նշանաբանով: Հետագայում այդ օրն անցնում է «Աջակցություն խորհուրդներին և բանվոր լերիտասարդության միջազգային համերաշխությունը կապիտալի դեմ կռվելու մեջ» լոգունգով:

- Յերբ սահմանվեց միջազգային լերիտասարդության տոնը:
- Խնչպես և ինչ լողունգներով և տոնվում այդ տոնը ԽՍՀՄ-ում և ինչ լողունգներով կապիտալիստական լերիտներում:
- Խնչպես անցկացրելք այս տոնն այս տարի ձեր շրջանում:

80. ԿԱՐԼ ԼԵԲԿՆԵԻՏ

Կարլ Լեբկնեխտը հռչակավոր Վլիհելմ Լեբկնեխտի վորդին է: Նրա հայրը՝ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության, հիմնադիրն ու դերմանական պրոլետարիատի առաջնորդն էր:

Դեռ մանուկ հասակից Կարլը սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից վերցնում է այն բոլորը ինչ առողջ էր: Կարլը մեկն էր այն քչերից, վորոնք հատուկ ուշադրություն դարձրին լերիտասարդության շարժման վրա և վորոնք իմպերիալիստական պատերազմի վտանգները պարզ տեսնում էին:

Նա ստեղծեց լերիտ-բանվորների կազմակերպությունը, վորի նպատակն էր սոցիալիզմի վոգով դաստիարակել լերիտասարդությունը և սոցիալիզմի համար Վոլդներին նոր կադրեր տալ: Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն արգելեց՝ լերիտասարդության մեջ հակաիմպերիալիստական ագիտացիա մղել, իբր թե իշխանության հետ բաղխում ունենալուց խուսափելու համար: Սակայն Լեբկնեխտը զիտակցում էր այս «սկզբունքային առարկության» ամբողջ կեղծիքը: Նա տեսնում էր, վոր միայն դաստիարակության բան չի դուրս գա, վոր պրոլետ-լերիտասարդությունը միլիտարիզմի դեմ առանձնապես պիտի հեղափոխականացվի: Նա գիտեր, վոր միլիտարիզմը կապիտալիզմի հետ միասին միայն պրոլետարական հեղափոխության միջոցով պիտի խորտակել, վոր մեղիտարիզմից ազատագրվելը պրոլետարական ազատամարտի մի մասն է:

Սոցիալ-դեմոկրատ առաջնորդները նրան չհասկացան: Սակայն կայսերական կառավարութիւնը նրան լավ հասկացավ, դրա համար ել նրան բանտ նետեց: Բանտից նա ազատվեց, յերբ ռախստագի պատգամավոր ընտրվեց:

Լիբէրալները միշտ յերիտշարժման հնոցում է մնում: «Յերիտ-ինտերնացիոնալ» թերթին միշտ հոգւածներ է նույնիսկ 16 թվին յերիտասարդութեան ցույցի գլուխն է անցնում: Նա շուտով նորից է ձերբակալուում և մնում է բանտում մինչև գերմանական հեղա-փոխութեան բռնկումը՝ 18 թվին:

18 թվի հեղափոխութեանը կայսրին գահընկեց է անում: Սա-կայն կայսերական կառավարութեանը փոխարինում են սոցիալ-դե-մոկրատները, կապիտալի այդ լակեյները:

Բանվորները ազատում են Լիբէրալներին բանտից, նա ձեռք է զարկում Սպարտակային Միութեան կազմակերպմանը՝ գերմանական կոմկուսի մեջ և թափով մասնակցում է գերմանական պրոլետարա-կան հեղափոխութեան նախապատրաստման:

19 թվին ամբողջ Գերմանիայում բռնկվում են բանվորական ապստամբութեաններ: Հունվարի 15-ին Լիբէրալները հաղթող բուր-ժուազիայի ձեռքով գաղանաբար սպանվում է: Ինչ վոր չարեց կայսերական կառավարութեանը, արին սոցիալ-դեմոկրատները:

Ո՞վ է յերիտշարժման հիմնադիրը (պատմիք նրա կենսագրութեանը):
Ինչո՞ւ ձնշվեց գերմանական հեղափոխութեանը.

Ի՞նչ գեր ունի կոմյերիտմիութեանը համաշխարհային պրոլետարա-կան հեղափոխութեան մեջ:

հոյակապոր մեծ անուն ունեցող, հայտնի	ազատամարտ — կռիվ ազատութեան համար.
կադր—հիմնական կազմ:	ռախստագ—գերմանական պարլա- մենտ.
խուռափել—փախչել, մի կողմ քաշ- վել.	ձերբակալել—բռնել.
առարկութուն—հակառակ խոսել.	բռնկվել—հանկարծ վառվել.
	գահնկեց անել—թախտից դցել.

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱՒՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դ Բ Ծ (—)

1. Կենսագրութեան մեջ գիծն ինքնուրույն գիր չունի. այն փոխարի-նում կամ ուղեկցում է վորեւէ այլ նշանի:

2. Փակագծի համար բերած առաջին որինակը կարելի չի գրել և այս-

պես. «այսորքն այն հիշում եմ, թե ինչպես նրա տղաները—հարեան Պեա-րոսն ունեւ չորս տղա—հեծնում ելին ամեն մեկը մի ձի ու քշում գեպի դաշտերը: Այս դեպքում, ուրեմն դիժը փակագծի դերն է կատարում:

3. Միջանկյալ ասութեանի ստորակետին վերաբերող մի որինակը կա-րելի չի գրել և այսպես. «վողորմած հոգի հայրս,—ասումած նրա հոգին լու-սավորի,—վոչ-վոքի թույլ չեւ տալիս ամուսնանալ»: Այստեղ գիծն ուղե-կցում է ստորակետին:

4. Կրճատ բառերի կամ ասութեանի բուժին վերաբերող որինակը կա-րելի չի գրել և այսպես: «Կաղակները թնդանութային կրակ բաց արին, իսկ թիչ հետո—պուլիմյոտի կրակ» —Այստեղ գիծը հանդես է գալիս բուժի փո-խարեն:

5. Ինքզ կազմիւր մի բանի նման խոսքեր:

81. ԴՈՒՔ ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ՈՒՆԵՔ ԱՄԲՈՂՁ ԱՇԽԱՐՀՈՒՍ

(Կալիֆորնիայի մի լվացարարուհու նամակն րնկ. Ստալինին)

ԽՍՀՄ, Մոսկվա, Կրեմլ, Ի. Ստալինին. 27 հունվարի 1930 թ.
Լուս-Անջելոս, Կալիֆորնիա:

Թանգագին ընկեր, ուղարկում եմ ձեզ 100 դոլար ձեր հայե-ցողութեամբ ծախսելու խորհուրդների կարիքների վրա: Բանվոր-ների լեռիկին աշխարհի ապագան կառուցելով՝ դրամի կարիք է զգում: Այս իմ ոգնութեանն է ուժերիս ներածին չափ: Յես որա-վարձով լվացարար բանվորուհի յեմ, զրկել եմ ինձ ամեն ինչից, ապրել եմ և ապրում եմ աղքատ, հնամաշ շորեր եմ հագնում, աշ-խատում եմ որական 12-16 ժամ, տոն ու արձակուրդ չգիտեմ, մի խոսքով անցել եմ «անընդհատ աշխատանքի» և անհ հաջողվեց մի բան հավաքել նաև հարազատ բանվորական ԽՍՀՄ համար: Ձեր թշնամիները դեռ ևս վտանգութեաններ են անում և աշխատում են բոլոր ուժերով վարկաբեկել ձեզ: Այս նամակը ցույց տվեք նրանց և ասացեք, վոր աշխարհում կան միլիոնավոր մարդիկ, վորոնք հա-վատում են ձեզ, ձեր յերկրին և կոմկուսակցութեանը և ուրախ են պաշտպանելու ձեզ մինչև իրենց վերջին ուժերը: Մենք ընտանի-քով յերեք հոգի ենք՝ ամուսինս վորդիս և յես: Մենք ԽՍՀՄ-ից ա-վելի լավ խոսակցութեան նյութ չունենք, դուք բանվոր դասակար-գի հենարանն եք, բոլոր այն լավերի հույսը, վոր ապրում ու շքն-չում են անիծյալ ստրկութեան ճիրաններում: Մենք ձեզ ուղարկում ենք մեր ամենաջերմ վողջուհիները:

Ամբողջ Խորհրդային Սոցիալիստական հանրապետութեանների Միութեանը նվիրված՝ ձեր, Վալենտինա Ալեքսանդրովնա Ուլյանա:

Ընկ. Ստալինը Ուլմարին պատասխանեց շնորհակալությամբ
Դրամը հանձնված և Մոսկվայի «Տրյոխգորնայա մանուֆակտուրա»
գործարանի բանվորուհիների մանկական մսուրին:

Ի՞նչ տրամադրություններ և զրկած և ի՞նչ զգացմունքներ և արտահայ-
տում լվացարարուհու նամակը հանդիպ խ. Միության, Ինչիցն և բղխում
կապիտալի լծի տակ տառապող աշխատավորության այդ զգացումը:
Նորհուրդների Միության կողմից դեպի նրանց ցույց տված ի՞նչ վերաբեր-
մունքից և ծագում այդ:

— Ի՞նչ նշանակություն ունի միջազգային պրոլետարիատի և աշխա-
տավորության համակրանքը հեղափոխության հաղթանակի և մեր չեղկում
կառուցվող սոցիալիզմի համար:

— Քարտեզի վրա ցույց տալ Կալիֆորնիան. մեծ տիրապետության
տակ և գտնվում և ինչ կարգեր են իշխում այնտեղ:

ԱՌԱՋԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համառոտագրիր տետրակումդ հետևյալ խնդիրները

1. Բանվոր դասակարգի պայքարը Արևմուտքում և նրա նպատակը:
2. Գաղութային և կիսագաղութային ժողովուրդների պայքարը արտա-
քին և ներքին թշնամիների դեմ և այդ պայքարի վերջնական նպատակը:
3. Պայքարող այս յերկու ուժերի փոխհարաբերությունը և պայքարի
ուղիները:
4. Կոմինտերնի և խ. Միության դերն ու նշանակությունն այդ պայ-
քարի համար:

82 ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Յեղիբ, ում կյանքը անիծել է,
ով ճորտ և, մերկ է և ստրուկ
Արդեն վառվում են մեր սրտերը,
արդեն կովի ենք ձենք ձգտում:
Այս հին աշխարհը կփորենք մենք
մինչ հի քերը և հետո
մեր նոր աշխարհը կշինենք մենք,
ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:

Սա չե վերջին կոիվը
և պայքարը մեր մեծ.
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկե:

Վոչվոր չի տա մեր փրկությունը,—
վոչ խենթ հերոսը, վոչ արքան,
մենք պետք է մեր ազատությունը
կռենք ձեռքով մեր սեփական:
Վորպեսզի շուտ փշրենք մեր լուծը
և յետ խլենք վոզ ճողերը մեր, —
խփենք մուրճերը, տաք մեր ուժը,
բռնի լերկավը տաք է գեռ:

Սա չե վերջին կոիվը
և պայքարը մեր մեծ.
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկե:

ԳՐՈՇՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ Ա Ս Ե

Հասցեն գրում են այսպես.

Ծրարի վրա, վերևը դժի մեջտեղում, գրվում է այն քաղաքի, գյուղի կամ կայարանի անունը, վերտեղ ապրում է նամակն ստացողը:

Տակը գրվում է գավառի կամ շրջանի անունը: Մեծ քաղաքների նկատմամբ շրջանն ու գավառը կարելի է չկա հիշել:

Այնուհետև գրվում է փողոցը և տան համարը կամ հիմնարկը: Փոքր գյուղերի նկատմամբ կարելի է չկա այդ անելու:

Տակը գրվում է ստացողի անուն—ազգանունը:

Պատվիրած նամակի դեպքում այս բոլորին ավելանում է հետևյալը՝ վերը, ծրարի անկյունում գրվում է «պատվիրված»: Ծրարի ցածումը, նամակ ստացողի անուն—ազգանունի տակ գրվում է նամակ ուղարկողի հասցեն (անուն, ազգանունը, գյուղ կամ քաղաքը, փողոցը և տան համարը):

Փակիկ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԳԱՎԱՌ

«Կարմիր Մայիս» կոլեկտիվ

Վարդան Շիրակյանին

ՄԱՐԿԱ

Թիֆլիս ՄԱՐԿԱ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱԼԱՏ

Խորաուծառի միության բարտուղար,

Վարդգես Միքայելյանին

Պատվիրված

Լենինական

ՄԱՐԿԱ

ՓՈՂՈՑ 27. ՏՈՒՆ 39

Արգար Հովհաննիսյանին

Թորգոմ Վարդանյանից,

Յերևան, Ամիրջան, 58

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Լիազորագրի մեջ ցույց է տրվում՝

1. Այն անձի անունը և ազգանունը, վերին լիազորում են:
2. Ի՞նչ է լիազորվում:
3. Ո՞վ է լիազորում և նրա ստորագրությունը, ժամանակն ու տեղը սովորական կարգով:
4. Վերջում ավելացնում է, թե ով է ստորագրությունը վավերացրել: Ծանոթ. — Ստորագրությունը կտրոզ է վավերացնել հիմնարկի վարիչը կամ քարտուղարը, գյուղ-խորհուրդի նախագահը կամ քարտուղարը կնիքի դրոշմամբ:

Լիազորագիր

Լիազորում եմ կոլեկտիվի անդամ ընկ. Բարկեն Մինասյանին՝ գյուղ-աբխուց ստանալ 250 կիլո սերմացու վիկը «Կարմիր Հովիտ» կոլեկտիվի կարիքներին համար:

ԿՆԻՔ

«Կարմիր Հովիտ» կոլեկտիվի
նախագահ՝ ՍՈՒՐԵՆ ԹԱՌԻՆՅԱՆ

1930 թ. 15 ապրիլի

Ստացական

Երազեկից ինչպիսիք ստացա 115 որինակ
«Մաճկալ» թերթի Թալինի շրջապատում
կոմի նախագահ ընկ. Ասլան Գևորգյանին
հանձնելու համար:

Մասնատարի խնդիրով

ԳՈՒՐԳԵՆ ԶՈՓԻԿՅԱՆ

30 սեպտեմբեր 1930 թ.

ԴԻՄՈՒՄ

Դիմում գրում են այսպես.

1. Նախ վերևում. ձախ կողմը մեծատառով գրվում է այն հիմնարկի
կամ անձի անունը, վերին տրվում է դիմումը:
2. Նրա տակը՝ աջ կողմում ցույց է տրվում, թե ով և տալիս գիտումը:
3. Դրանից հետո տողի տակ՝ աջ կողմում գրվում են՝ դիմում:
4. Ապա կարմիր տողից (խորքից) համառոտ պարզ գրվում է՝ ինչ-որ
պահանջվում է (խնդիր, բողոք և այլն):
5. Դիմումի վերջում աջ կողմը՝ գրվում է՝ դիմում ավարտողի ստորագրու-
թյունը, իսկ ձախ կողմը՝ նախ քանիս, թիվը և տարեթիվը և ապա սրտ
տակն այն տեղի (քաղաքի կամ գյուղի) անունը, վերանի գրվել է դիմումը:

Դիմումի մի ձև արհմիության շարքերն անցնելու համար:

ԳՅՈՒՂԱՆՏԱՌ ՄԻՈՒԹՅԱՆ

ԱԶՏԱՐԱԿԻ ԶՐՋՐԱՏՐԱԿԿՈՄԻՆ

ԲԱՏՐԱԿ ՍՄԲԱՏ ԳԱԼՍՏՅԱՆԻՑ

Դիմում

Սրան կից ներկայացնելով լրացրած ցուցակա-
գրություն քարտը՝ խնդրում եմ ընդունել ինձ Գյուղ-
անտառ միության շարքերը:

Միության կանոնադրությունն ինձ հայտնի է:

Ղևոնդ Ղուկասյան

29 նոյեմբերի 1930 թ.

Յեղվարդ գյուղ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԲԱՆՖԱԿԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ԶԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՑ

Դիմում

Ներկայացնելով պահանջվող փաստաթղթերս՝

- 1) ուսման № 85, 2) արհմիության № 1056, 3) սոց-դրու-
թյան № 219 և բժշկական № 290. խնդրում եմ ընդունել
ինձ բանֆակի առաջին կուրսը:

Զարիկ Պետրոսյան

10 սեպտեմբեր, 1930 թ.

Հասցե՝

Կոտայքի շրջան. Յեղվարդ գյուղ

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ

Ազգանուն Զանիկյան
Անուն, հայրանուն Վահրամ Սարգսի
Տարիք 25
Կուսակցություն Կուսակցական (№ 364)
Արհմիություն Կառուցողների (№ 589)
Աշխ. ստատ 4 տարի
Հասցե Նալբադյան (№ 112)
Ամսաթիվ 12 մայիսի 1930 թ.
Ստորագրություն Վահան.

Թիվ	Ա.Ռ.Ա.Բ.Ա.	ԿՇԻՌ	ՀԱՏ	ԱՐԺԵՓ	Ռ.	Կ.
1930 թ.						
հունիս						
5	բիաղ		8 մետր	80 Կ	6	40
»	գուլպա		3 Կ.	1—20	3	60
12	յուղ	2 կիլո		5—50	11	—
հուլիս						
15	պանիր	7 կիլո	—	1—60	11	20
20	շաքար	3 կիլո	—	75	2	25
»	ձու	—	25	6	1	50
Ընդհ. անուր գույ մար					35	95

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Վերևում գրվում է «Արձանագրություն №—»
- Անմիջապես տակը գրվում է ժողովի նիստի ժամանակը:
- Այնուհետև գրվում է նիստին մասնակցողների ընդհանուր թիվը կամ անուն—ազգանունները: Դրանից հետո գրվում է որակարգը, զեկուցող—ներով:
- Որակարգից հետո գրվում է նախագահի, քարտուղարի անուն—ազգանունները:
- Այնուհետև որակարգի համապատասխան համարների տակ գրվում է վորդումները:

Արձանագրություն №— 19

Քանաքեռի խճիթ-ընթերցարանի խորհուրդի արտակարգ նիստի 1930 թ. նոյեմբերի 4:

Ներկա չեն խորհրդի բոլոր անդամները, Կոտայքի շրջկոմի նախագահ ընկ. Գեղամ Ղաբիրյան և զլխ. քաղուստի տեսուչ ընկ. Մովսես Պետրոսյանը:

Որակարգ.— 1. Քանաքեռի խ. ընթերցարանի աշխատանքների հետազոտության արդյունքները, (զեկուցող՝ ընկ. Մովսես Պետրոսյան):

2. Ընթացիկ խնդիրներ:

Վորդումներ.— 1. Աշխատանքները համարել անբավարար:

Հետագա աշխատանքների համար ընդունել հետևյալ կետերը.

ա) Փոխադրել խճիթ-ընթ. դպրոցի կից շենքի 2 սենյակները:

բ) Շրջկոմի կողմից անմիջապես ստանալ գործառնական ծախսերի մնացորդ գումարը՝ 450 ոսկրի և կահավորել խ. ընթերցարանը:

գ) Ամառային աշխատանքներն փոխադրել շենքի առաջ ընկած պարտեզը:

դ) Այսօրվանից նախապատրաստական աշխատանքներ տանել՝ նոր խ. ընթերցարանի բացումը հոկտեմբերյան հեղափոխության 13-րդ տարեդարձին կատարելու համար:

ե) Խնդրել Յերգավթաղլուսավարին՝ Քանաքեռ գործուղվել II⁰-ի կուս-դպրոցի ավարտած մի ուսանողի իրրե խճիթվար:

զ) Առաջարկել շրջկոմի կողմից և խորհրդի նախագահ ընկ. Կոտայքի Առաքելյանին մինչև ամսի 10-ը կազմել չեռամսյա աշխատանքների պլանը և դնել խորհրդի հաջորդ նիստին ի հաստատություն:

2. Լսելով խ. ընթ. խորհուրդի նախագահ ընկ. Կոտայքի ինֆորմացիան խճիթվար Վարդան Խաչատրյանի մասին՝ անհրաժեշտ համարել փոխադրել նրա հարցը կոմիտեի նիստը քննության տանելու իրրե գրասենյակի և զեպի հաճախորդները կոպիտ ու անվայել վերաբերմունք ունեցողի:

Նախագահ՝ Կ. Առաքելյան Քարտուղար՝ Թերզյան:

Բ ո ղ ո ք

Հ. Ս. Խ. Հ.

ԲԱՆԳՈՐԴՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հ. ՅԵՐԵՅՅԱՆԻՑ

Բ Ո Ղ Ո Ք

Յոթ հոգուց (չեռ, կին և 5 մանրիկ զավակներ) ապրում ենք մի նեղ մութ ու խոնավ սենյակում՝ ամառ-ձմեռ անասելի տանջանքի մեջ: Իսկ մեր կողքի ընդարձակ սենյակը գրավել է վոմն Արամ Փինաչյան, վոր գլուցում կուլակային տնտեսություն ունի և քաղաքում ապրում է լոկ վայելքի համար, իմ բազմաթիվ գանգատները համապատասխան հիմնարկներին՝ թողնվել են անհետևանք: ԲԳՏ-ի կողմից ուղարկված վերջին հանձնաժողովը ևլ դարձյալ նրանց կողմն է անցել: Բողոքելով այս քաղաքակ առարկաբանության դեմ խնդրում եմ անաչառ քննություն և արդար վորոշում, վորպեսզի աղապիմ սոսկալի վիճակից:

Հ. ՅԵՐԵՅՅԱՆ

13/V 30 թ. Յերեան:

ԼՐԱՏՈՒՄԿԱՆ ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Յերբ դպրոցի, գործարանի, գյուղի կամ հիմնարկի կյանքում տեղի չեն ունենում վորեւե աչքի ընկնող դեպք, այդ մասին հարկավոր է լուսնունեթ գիտազոթյուններ անել պատի կամ տեղական լրագրի մեջ:

Այդպիսի գիտազոթյուն կոչվում է լրատուական: Լրատուական գիտազոթյունը պետք է լինի հակիրճ ու ավյալ լուրի կամ դեպքի հիմնական հանգամանքներն ընդգրկող: Նմուշի համար գետեղվում է հետևյալ լրատուական գիտազոթյունը:

ԺԱՂՏՆՏԽՈՐՀԻ ՄՐՅՈՒԹՅՈՒՆԸ.— Ադրբեյջանի ժողանխորհի և Կոլխոզ-ցենարի կոլեկտիվները սոցիալիստական մրցության են հրավիրել Հայաստանի ժողտնախորհի և Կոլխոզ-ցենարի կոլեկտիվներին:

Մրցահրավերն ընդունված է: Մոտ որերս Բազմից կստացվի պաշմանագրի նախադիծը:

«Խ. ՀԱՅԱՍՏԱՆ» № 134, 1930 թ.

Ա կ տ

Ա կ Տ Ը.— Վորեւ հետազոտման կամ վերաքննության արձանագրություն է: Ակտի սկզբում նշվում է հետազոտող կազմակերպության կամ հանձնաժողովի անունը, ապա մի առ մի հիշատակվում հետազոտման հետևանքները՝ վերջում, հարկ չեղած դեպքում արվում է և դիտողություն:

Համաձայն կոլխոզ կենտրոնի հունիսի 16-ի 1930 թ. № 672 հրամանի, հանձնաժողովն՝ նախագահությամբ ընկ. Դարչինյանի, անդամակցությամբ ընկ. ընկ. Հ. Մնացականյանի և Հ. Զուհանյանի, հունիսի 20-ին ընդունեց կենտ. պահեստից 2 շաքրացան, մի կախող մեքենա, 40 գերանդի և հնձող մեքենա: Հնձող մեքենայի առամներից 4-ն անդործածելի չե, իսկ մեկը կոտրած:

Այդ պակասությունների պատճառով հանձնաժողովը հնձող մեքենան համարեց բրակ, և թողեց պահեստում:

Հանձնաժողովի նախագահ, Դարչինյան
Անդամներ 1. Հ. ՄՆԱՅԱՆԱՆՅԱՆ 2. ԶՈՒՀԱՆՅԱՆ

Սույն ակտից մի որինակ թողնվեց պահեստայտի մոտ:

ԹՂԹԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Գործարանի, գյուղի, կոլեկտիվի կամ հիմնարկի կյանքում կարող են լինել դրական կամ բացասական փաստեր ու հանդամանքներ, վորոնց նկատմամբ հարկավոր է տեղակի դարձնել հասարակությանը, գրավել նրա ուշադրությունը:

Այդ նպատակին է ծառայում բղրակցությունը: Թղթակցության հիմքը պետք է կազմի վորևի իրավական չեղելություն, ստուգված փաստ և վոչ թե բամբասանք կամ լուր:

Թղթակցությունը վոչ միայն պիտի արձանագրի փաստը, այլև գնահատի այն և հաճախ անի գործնական առաջարկներ: Դրանցով և գլխավոր բապես թղթակցությունը տարբերվում է լրատուական գիտությունից, վորբայի դեմքից՝ գործ ունի դեպքերի և վոչ թե տեական փաստերի հետ ունականաբար միշտ ավելի կարճ և, քան թղթակցությունը:

Թղթակցության լեզուն պիտի լինի պարզ, խոսքերը՝ կարուկ, մեծությունը՝ լրագրական 25—30 տողից վոչ ավելի:

Նմուշի համար ներքևում բերվում է թղթակցությունը:

ԳՅՈՒԼԻՈՐՆՈՒԴԸ ՔՆԱԾ Ե

Յեղվարդի գյուղխորհուրդը մինչև հիմա շատ քիչ է զբաղվել ինքնաբնակատվությամբ:

Դյուղի կոլեկտիվը բաժանված է թափանքների, չի աշխատում, մինչդեռ գյուղխորհուրդի անդամները, վորոնք կոլեկտիվի վարչության մեջ են աշխատում, ձեռք ձեռքի չեն խփում:

Դյուղ-խորհուրդի նախագահը խուսափում է հասարակական ժողով հրավիրելուց: Վախենալով, վոր իրեն կբնակառեն, իսկ ընթերցարանի և գրքոցի շենքերը կխառնեն անացել, գյուղացիությունը պահանջում է այս տարի վերջացնել, իսկ գյուղ-խորհուրդը ականջի լեռվի և գյուղում: Նվ չենք խոսում խորհրդի անկցիաների մասին, վորոնք միայն թղթի վրա գոյություն ունեն:

Շրջագործկոմի և համապատասխան մյուս մարմինների ուշադրությունն ենք հրավիրում:

Դյուղի հասարակությունը պահանջում է ցրել խորհուրդը և նշանակել նոր ընտրություններ:

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Յերբ և վորտեղ ես ծնվել՝
 2. Ծնողներից սոցիալական դրությունը՝
 3. Վորտեղ ես անցկացրել մանկությունը՝
 4. Մանկության օրից ինչն է առանձնապես տպավորվել հիշողությունդ մեջ:
 5. Վորտեղ և վորքան ես սովորել:
 6. Սովորելիս ինչով ես առանձնապես հետաքրքրվել:
 7. Սեփականություն ունեմ:
 8. Վոր տարեկանից ես սկսել աշխատել:
 9. Վորտեղ ես այժմ աշխատում ինչ է քո աշխատանքը:
 10. Ինչ քաղաքական կազմակերպություն մեջ ես յեղել:
 11. Այժմ վորևի կազմակերպություն կամ կուսակցության անդամ եմ:
 12. Ինչ հասարակական օրգաններ ես տանում:
 13. Ինչով ես առանձնապես հետաքրքրվում:
 14. Ինչպես ես ներկայումս քեզ քո հետագա գործունեությունը:
- Բացատրեմք. — Դործնական կյանքում հաճախ հարկավոր է լինում գրել իր կյանքի պատմություն, ինքնակենսագրություն:
- Կարգն վերևում գեղատեսիլ և պարզ պատասխանիկ նրանց տնային, վոր ստացվի կապակցված միտք:

ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

Առաջին հրատարակության առթիվ	3
Յերկրորդ	4

Ա.Ս.ԶԻՆ ԲԱԺԻՆ

ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Ա. Յեղվարդ — ՆՈՐ ԿՑԱՆՔ ԿԱՌՈՒՅՈՂՆԵՐ

1. Տեղի բաղնիկներ. — ըստ Հ. Մելիկյանի	7
Բ. Յեղվարդ — ՄԵՐ ԿՑԱՆՔԸ ՅԵՐԵԿ	
2. Դժար տարի. — Հովն. Թումանյան	9
3. Հայտատանը յերեկ — Հասված Ա. Խանջյանի հոգվածից	10
4. Վանքը՝ կալվածատեր	11
5. Որանջիկ (կրճատ). — Ակսել Բակունց	12
6. Իվանեն	15
7. Ռանչպար. — Սարիք	17
8. Առաջ ինչպես ելին ապրում Ռուսաստանում. — Ըստ Մ. Թ. ի	19
Գ. Յեղվարդ — ՄԵՐ ԿՑԱՆՔԻ ԱՅՈՐ	

9. Կոլխոզյին առավոտ. — Գ. Սարյան	21
10. Սոցիալիզմի սկսերով. — Հասված Ա. Խանջյանի հոգվածից	22
11. Յերեկ և այսօր (հատված). — Արմ. Թամազյան	24
12. Յեղում և, աճում	25
13. Վոստանը	28
14. Թումբը	31
15. Արարատյան դաշտում. — Ղևոնդ Կումուր	32
16. Վարը (հատված). — Հովնիկ Մելիկյան	33
17. Աղբրեջանի գյուղերում	34
18. Վրաստանի գյուղերում	38
19. Չալի դաշտերում (հատված)	39
20. Կոլխոզի դաշտերից. — Արաքս	41

Գ. Յեղվարդ — ԴԵՊԻ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԱՄՐԱՅՈՒՄԸ

21. Կոլխոզների գործնական խնդիրները	43
22. Սոց. մրցումը գյուղատնտեսության մեջ	45
23. Ինչպես կազմակերպել կենցաղը կոլխոզներում	46
24. «Դիզանո» կոլխոզը	47
25. «Նոր կյանք» կոլխոզի հայրական ընթացքը (կրճատ)	49
26. Թե ինչպես Դարբինենց Մերգոյի «Մարալ» կովը կոլխոզ մտավ	53
27. Աշխարհով մեկ (կրճատ). — Աղաթի Վարդանյան	57

ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԻՆԴՈՒՍՏՐԱՅՈՒՄ, ԳՅՈՒԼԻ ՅԵՎ ՔԱՂԱՔԻ ԴԱՇԵՆՔԸ

Ա. Յեղվարդ — ՀՆԴԱՄՅԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

28. Հնգամյակը չորս տարում. — Տ. Վ.	59
29. ԽՍՀՄ կլեկարոֆիկացիան	61
30. «Վոլխովստոյ»	62
31. Չազիկ (կրճատ). — Վ. Թարսկեց	62
32. Կառուցում ենք, կառուցում. — Թամուր	64
33. Բամբակի դաշտերում. — Աղավնի	66
34. Հաղթանակի յերգեր. — Զ. Դարյան	68

Բ. Յեղվարդ — ԲԱՅԼՇԵՎԻԿՑԱՆ ՏԵՄՊԵՐՈՎ

35. Սոց. մրցումը և հարվածայնությունը	69
36. Յերգ բերեղիլի (կրճատ). — Գեվորգ Դեիկ	70
37. Պղնձի աշխարհում	71
38. Չորրորդ հարվածը. — Տանաս Դադին	72
39. Յերգը. — Արմ. Թամազյան	74

ՅԵՐԲՈՐԴ ԲԱԺԻՆ

ԿՈՒՆՏՈՒՐԱ ՅԵՎ ԿԵՆՑԱՂ

40. Արմիտիսիոնները կոմունիզմի դպրոց են.— Գուսեվա	76
41. Կուլտուրական հեղափոխության ուղիներով.— Վ.	77
42. Նավթահանքում	79
43. Իմ բառերակ ընկերներին.— Թամուկի	80
44. Դալար Դրիքոր	82
45. Մոր կարտը.— Արաբես Ն.	83
46. Մարոն (կրճատ).— Արաբ	84
47. Դժբախտությունը Մեշադի Ղադրի տանը.— Սեյմուր	86
48. Հայրիկ, իբրք աստված կամ.— Փալանդուզ Մկր	89
49. Հնի մնացորդ	91
50. Կոլեոզնիկ ապիս	92
51. Պարերդ	92

ՅԵՐԲՈՐԴ ԲԱԺԻՆ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐԵՐ

Ա. Յենքամաս — ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՆՍՊԱՐՀԻՆ

52. Յերգ ժողովրդի մասին (հատված). — Չաբեց Յե.	94
53. Կարմիր բարբիկաղ.— Արազի	96
54. Արյունոտ կիրակի	97
54. Խրամատի սաբասփը (հատված). — Եր. Ռեմարկից	98
56. Փետրվարյան հեղափոխություն	100

Բ. Յենքամաս — ՀՈԿՏԵՄԲԵՐ

57. Հոկտեմբերի քսանհինգը	104
58. Վ. Ի. Լենին	107
59. Քսանվեցը (Բազմի կոմունան). — Վ.	110
60. Նոյեմբերի 29-ը (կրճատ). — Արս. Կարիյան	111
61. Ջան Նոյեմբեր.— Վ. Արամուկի	113
62. Հոկտեմբերն Անդրկովկասում	113

Գ. Յենքամաս — ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՍՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

63. ԽՍՀ Միությունը.— Բոս Գուսեվայի	115
64. ԽՍՀՄ կազմը	116

Դ. Յենքամաս — ԿՈՐՄԵՐ ԲԱՆԱԿԸ ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ԱՐԹՈՒՆ ՊԱՀԱԿՆ Ե

65. Կարմիր բանակը և Կլիմ Վորոշիլով	118
66. Չապահ (կրճատ). — Դ. Ֆուրմանով	119
67. Կարմիր բանակայինի նամակը	121

Ե. Յենքամաս — ԿԱՊԻՏԱԼԻ ԼՍԻ ՏԱԿ

68. Բանվորական բուռն ցույցեր Բեռլինում	122
69. Միայն պրոլետարիատի ղեկավարությամբ	124
70. Յեռում և Չինաստանը. — (Չին նամակների)	125
71. Մի նամակ (չինական քաղաքապետարկյալի նամակը)	128
72. Նորից կգա.— Բոս Ջեկ Լոնդոնի	129

Զ. Յենքամաս — ՀՆՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՏՈՆԵՐ

73. Կոմիտեներն.— Գուսեվա	130
74. Համկոմունիստական (բ) կուսակցությունը.— Վ.	132
75. Պրոֆինտերն	133
76. Մարտի 18-ը Պարիզի կոմունայի և Մոսկվայի օրը.— Մ. Յիսակյան	134
77. Մայիսի մեկը	137
78. Կանանց միջազգային օրը.— մարտի 8-ը	137
79. Միջազգային պատանեկության օրը	138
80. Կարլ Լիբկնեխտ	139
81. «Դուք միլիոնավոր բարեկամներ ունեք ամբողջ աշխարհում».— (նամակ Ստալինին)	141
82. Ինտերնացիոնալ	142

Գործնական գրություններ



386-1931p

ԳԻՆԸ 85 ԿՈՊ. (10 ռ.)

111

2452



КОЛЛЕКТИВНЫЙ ПУТЬ
Учебник для общеобр. сел. школ

Госиздат ССР Армении
Эривань—1931